ՈՐՏՍ ԱՐԱՐԱՏԻ



Թիվ 6, հոկտեմբեր - նոյեմբեր, 2005

Արա-Ալեքսանդր-Ենիգոմշուլյանի հետ հարցազրույցը կարդացեք էջ 3-5-ում



Մեզ համար ցեղասպանության ճանաչումը ոչ մի ժամանակ ինքնանպատակ չի եղել: Այո՛, հնարավոր է, որ կան մարդիկ (ես նրանց չեմ այսպանում) Սփյուռքում և Հայաստանում, որոնց համար Թուրքիայի կողմից ցեղասպանության ճանաչումը նպատակ է: Մեզ համար այդպես չի եղել, մենք պայքարել ենք հողի ազատության և ժողովրդի՝ այդ հողի վրա վերադառնալու իրավունքի համար: Եվ մեր մտքից այդ գաղափարը դուրս չի եկել: Նախ՝ դա հանգրվանային քայլ է և երկրորդ՝ ես կարծում և հավատում եմ, որ ցեղասպանության ճանաչումը Թուրքիայի կողմից Հայաստանի անվտանգության լավագույն երաշխիքներից մեկը կարող է լինել: Քանի դեռ Թուրքիան չի ընդունել անցյալում իր կատարածը, նշանակում է, որ ոչ մի երաշխիք չունենք, թե ապագայում վատ մտադրություն չի ունենա մեր նկատմամբ: Հետևաբար, եթե Թուրքիան ուզում է լավ հարաբերություն Հայաստանի հետ, և քանի որ արևմտյան երկրներն էլ մեզ ասում են մի սևեռվեք անցյալի վրա, մոռացեք, խնդրեմ, թո՛ղ Թուրքիան ճանաչի ցեղասպանությունը, դրանից հետո մենք կմտածենք: Թուրքիայի կողմից ցեղասպանության ճանաչումը ոչ միայն բարոյական խնդիր է մեր ազգի և ժողովրդի համար, այլև՝ Հայաստանի Հանրապետության և Արցախի անվտանգության երաշխիք:

Արա-Ալեքսանդր Ենիգոմշության

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ-ին ներկայիս առաջադրվող երեք հիմնախնդիրները	էջ 1	
«Վան» գործողության տարելիցը՝ Աբովյանում	էջ 2	
Ձինյալ պայքարը ինքնանպատակ չի կարող լինել	էջ 3-5	Ջեմմա Բաղդադյան
Արա-Ալեքսանտր Ենիգոմշուեանի խոսքը դատարանի դահլիճում	էջ 5	
Քաղաքական դաշտի վերջնական բյուրեղացում	էջ 6	Սուրեն Մանուկյան
Թուրքական շանտաժ և եվրոպական դիվանագիտություն	էջ 7	Արտակ Շաքարյան
Ես հավատացած չեմ, որ թուրքը կդառնա եվրոպացի	էջ 8	Ժիրայր Քոչարյան
Բունդեսթագի ընդունած Հայոց ցեղասպանությանը վերաբերող բանաձևը	էջ 9-10	Թարգմանությամբ՝ Աշոտ Հայրունու
Տարածքային կենտրոնացման գործընթացները	էջ 11	Թամարա Վարդանյան
Հավերժական խաղաղության գալուստը	էջ 12	
Ազգային ինքնությունը պահելու ցանկությունը անջատողականություն չէ	էջ 13	Լիլիթ Մանուկյան
Կարեն Բալայան. Մենք մեր երազանքի ճանապարհին ենք	էջ 14-15	Նանե Սևան
Աստված տվել է, և ես վերադարձնում եմ	էջ 15	Մարինե Մամյան
Ազգասիրությունը սկսվում է պետականության գաղափարից	էջ 16	Նարինե Ավագյան
Փափագս է՝ պանդուխտները վերադառնան...	էջ 17	Մկո Օտապաշեան
Կփորձեի աշխարհը դարձնել ավելի բարի	էջ 18	Արշակ Գաբրիելյան
Հարյուրամյա գարուն	էջ 19	Քեյթի Գունդակչյան
Մետաղի և հոգու մեղեդայնությունը	էջ 20	Հասմիկ Մելքոնյան
Գրիգոր Լուսավորիչ	էջ 21	Աշխեն Գրիգորյան
Գառնի ամրոցը	էջ 22	Սմբատ Հովհաննիսյան
Ասք դեղձենու մասին	էջ 23	Հայկ Խաչատրյան
Հայ ազգային պարը	էջ 24-25	Գագիկ Գինոսյան
Աղձնիքահայերի հարսանեկան սովորույթներն ու ծեսերը	էջ 26	Արտակ Գաբրիելյան
Ս ի պ ի լ	էջ 27	Փ. Հովհաննիսյան
Հին Թիֆլիսը և Գաբրիել Սունդուկյանի ստեղծագործությունը (1825-1919)	էջ 28-29	Արամ Ալեքսանյան
Թեոդիկի եղեռնապատումը	էջ 30-31	Արթուր Անդրանիկյան
Հաճըն	էջ 32	Հակոբ Մանջյան
Հայոց կապիտալի պատկերասրահ. Մկրտիչ Սանասարյան (1818-1890)	էջ 33-35	Խաչատուր Դադայան
Ուխտագնացություն	էջ 35-36	Հովիկ Մկրտչյան

Հրատարակիչ՝
«Ուխտ Արարատի»
ՍՊԸ

Տպաքանակը՝ 1000
Ծավալը՝ 4.5 տպ. մամուլ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Համարի թողարկման
պատասխանատու՝
Տիգրան Փաշաբեզյան

Տպագրված է «ՍԱՄԱՐԿ»
տպարանում
Ստորագրվել է
տպագրության՝
07.10. 2005

Խմբագրության հասցեն՝
375023, Երևան,
Մաշտոցի 8
Հեռ. 56-71-50

Official periodical of
“Oukht Ararati”
LTD

EDITORIAL BOARD
Responsible of the issue:
Tigran Pashabezyan

Address: 375023,
Yerevan, Mashtots 8
Tel. 56-71-50
E-mail:
oukhtararadi@yahoo.com

Գինը՝ 300 դրամ

«Ուխտ Արարատի» ամսագրից նյութեր արտատպելիս՝ խնդրում ենք հղում կատարել:

Հարգելով հեղինակային իրավունքը՝ ստացված հոդվածները չենք խմբագրում:

ՀՀ-ԻՆ ՆԵՐԿԱՅԻՍ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ԵՐԵՔ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությանը ներկայիս առաջադրվում է քաղաքական երեք հինախնդիր. Սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի, Արցախի բանակցությունների ակտիվացման, Ջավախքի խնդիրները:

Սահմանադրական փոփոխությունների ջատագովները Եվրոմիության կառույցներն են: Անկասկած, դրանք կրկնում են Եվրոպական Սահմանադրության հիմնադրույթները, որոնք մերժեցին ընդունել Ֆրանսիան և Հոլանդիան, հակառակ այն բանի, որ իրենց սպառնացող հնարավոր վտանգները, մերինի համեմատ, բավականին մեղմ կարող էին լինել: Ուստի, անհնար չէ ենթադրել, որ դրանք կարող են սպառնալ ՀՀ ազգային անվտանգությանը, ՀՀ անկախությանը, ինքնիշխանությանը, տարածքային ամբողջականությանը, մարդու իրավունքներին և ժողովրդավարությանը: Ճիշտ կլիներ, եթե մեր ժողովուրդն իսկապես ծանոթանար առաջարկված նախագծի ամբողջ փաթեթին: Սակայն հիմնականում խոսքը ՀՀ նախագահի իրավունքների, իշխանության թևերի տարանջատման, դատական համակարգի բարելավման խնդիրների շուրջ է: «Այո»-ի կողմնակիցները՝ ՀՀ իշխանությունները, իշխանամետ կուսակցությունները նաև եվրոբարձրաստիճան պաշտոնյաները, որպես հիմնական առավելություն, մատնանշում են, որ նախագիծը առաջընթաց քայլ է ժողովրդավարության և մարդու իրավունքների ասպարեզում:

Վենետիկի հանձնաժողովը շտապեցնում է հաստատել Սահմանադրական փոփոխությունների նոր նախագիծը: Քանզի այդ ծրագրով, ըստ իրենց պաշտոնյաների հայտարարությունների, մինչև 2007թ. Կովկասում հնարավոր կլինի ստեղծել Կովկասյան երկրների խորհրդարանական վեհաժողով և տեղական ինքնակառավարման կովկասյան համագործակցություն: Այն, ինչ 1998թ. Կովկասյան ընդհանուր պետության ստեղծման ծրագրի տեսքով Մինսկի խմբի կողմից ներկայացվեց, որպես Ղարաբաղյան հակամարտության կարգավորման նոր տարբերակ, և որը մերժվեց Ադրբեջանի կողմից:

Ադրբեջանի խորհրդարանական ընտրությունները նախորդում են ՀՀ Սահմանադրական փոփոխությունների հանրաքվեին: Ծրագրի իրագործմանն է ծառայում Ադրբեջանում գունավոր հեղափոխություն հրահրելու գործընթացը: Նույն գունավոր հեղափոխությունը «Ոչ»-ի կողմնակիցների գործունեությամբ թափ է հավաքում ՀՀ-ում ծավալվող քարոզարշավում՝ նարնջագույն դրոշներով:

Հետաքրքրական է Լենմարկերի վաշիգտոնյան հայտարարությունը, որ ԼՂՀ անկախությունը ճանաչելն իրենց կողմից բացառվում է, սակայն հնարավոր են համարում ԼՂՀ-ն ՀՀ-ին միանալու տարբերակը: Ադրբեջանում և ՀՀ-ում թափ առնող իրադարձությունները, և Ջավախքում, ազգամիջյան հրահրումների տանող ճնշումները հասկանալի են դարձնում Ղարաբաղյան խնդրի կարգավորման նոր մոտեցումը, այն է՝ Կովկասյան ընդհանուր պետությունում տարրալուծվելու են ոչ միայն ԼՂՀ-ն, Աբխազիան, Օսիան, այլև ՀՀ-ը, Ադրբեջանը, Վրաստանը: Ճիշտ է՝ վրաց-ադրբեջանական շահեկանության տարբերակով, քանզի ակնհայտ է, որ Կովկասյան ընդհանուր պետության իշխանական բուրգը ձևավորվելու է հիմնականում վրաց-ադրբեջանական բաժնեմասով:

27-ը հուլիսի 2005թ. ԱՄՆ-ում մամլո ասուլիսով Լառուշը նախազգուշացրեց, որ ԱՄՆ փոխնախագահ Դիկ Չեյնին ակտիվ քարոզչություն ու գործունեություն է ծավալելու առաջիկայում Իրանին փոքր հզորության ատոմային ռմբահարման ենթարկելու հարցում: Ի պատասխան հնչեց Իրանի նորընտիր նախագահի հայտարարությունը Իսրայելը ոչնչացնելու մասին: Դա նշանակում է, որ տարածաշրջանային ռազմա-քաղաքական զարգացումները կարող են ավելի բարդ ընթացք ունենալ:

Արցախյան ազատամարտում տարած հաղթանակից հետո սպասելի էր, որ ակտիվանային ջավախքյան իրադարձությունները: Այդպես էլ եղավ, բայց ինչ տարօրինակ է, վրացական նոր իշխանությունների ջանքերով, որոնք թվում է՝ պետք է ամեն ինչ անեին Վրաստանում նոր դիմակայության օջախ չառաջացնելու համար:

Հայությանը պարտադրվում է մի նոր՝ երկրորդ ճակատ: Ուզենք, թե՝ չուզենք: Հարկավոր է պատրաստվել դիմակայության, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ջավախքի խնդիրը մի փոքր տարբեր է Արցախի խնդրից: Հարկավոր է առաջին հերթին դիմակայել լրատվության, քարոզչության ասպարեզում: Չէ՞ որ Ջավախքի վերաբերյալ տեղեկատվությունը քիչ է և՛ սփյուռքի, և՛ օտար շրջանակներում: Այնպես չլինի հանկարծ, որ վրացական իշխանությունները հասցնեն հրահրել Ջավախքում ազգամիջյան բախումներ, իսկ միջազգային հանրությունը, բոլորովին անտեղյակ հարցից, մեղադրի ՀՀ-ին այս անգամ էլ Վրաստանի նկատմամբ ագրեսիա իրականացնելու մեջ: Մենք հասկանում ենք, որ հենց դրա վրա է կառուցված վրացական իշխանությունների հաշվարկը, որոնք մի կողմից խոսում են ժողովրդավարության և մարդու իրավունքների մասին, մյուս կողմից հենց իրենք են ոտնահարում Վրաստանում և Ջավախքում բնակվող հայության իրավունքները:

«Ուխտ Արարատի» ԱՍԱԼԱ-ի նախկին քաղբանտարկյալների ու ազատամարտիկների միությունը կոչ է անում համայն հայությանը ու նրա հասարակական ու քաղաքական բոլոր կառույցներին՝ զգոն լինել և ավելի քան լուրջ ու պատասխանատու լինել ՀՀ արտաքին և ներքին քաղաքականության հարցերում:

«ՎԱՆ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԼԻՑԸ՝ ԱԲՈՎՅԱՆՈՒՄ

Աբովյանի քաղաքապետարանի և քաղաքապետ Կարո Իսրայելյանի աջակցությամբ, լուսանկարիչ-օպերատոր Հարություն Ստեփանյանի նախաձեռնությամբ Աբովյանի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնում տեղի ունեցավ միջոցառում՝ նվիրված **Հայոց ցեղասպանության 90-ամյա տարելիցին, ՀԱՀԳԲ-ի (ASALA) ստեղծման 30 և «Վան» գործողության 24-ամյակներին:**

Բացման խոսքում հաղորդավարուհի Կարինե Եսայանը հիշեցրեց Նժդեհի հայտնի միտքը. «Մեր երկրագնդի վրա երկու ուժեր չեն հոգնում. ժամանակն ու հայը, մեկը՝ կործանելով, մյուսը՝ վերաշինելով»:

Լուսաբաղձ ժողովուրդ, որն ապրել, պայքարել, շինարարել է գիրքը ձեռքին: Հավերժանալ՝ շինարարելով, ստեղծագործելով-ահա ՀԱՅԿԱԿԱՆԸ...

Ողջույնի խոսքով հանդես եկավ քաղաքապետ Կ. Իսրայելյանը. «Հարգելի մարտիկներ, մենք ուրախ ենք հյուրընկալել Ձեզ մեր քաղաքում: Դուք Հայկական հարցի համար արեցիք այն, ինչ երևի երազում էր ու կուզենար անել յուրաքանչյուր հայ: Ձեր պայքարի ակունքներից սկզբնավորվեց նաև մեր նոր պետականությունը, որն այսօր ստանձնել է հայության խնդիրների արծարծման ու հետապնդման հարցերը: Դուք այլևս կարող եք զբաղվել քաղաքական գործունեությամբ»:

Երեկոյի ընթացքում Կ. Եսայանը կարդում էր Հայ դատի ջատագովների և անձնուրաց պաշտպանների հայրենաշունչ ու ոգեշունչ խոսքերը, որոնք ընդմիջվում էին «Կարին» երգ ու պարի ազգագրական համույթի ելույթներով (ղեկավար՝ Գագիկ Գինոսյան) և «Էրզրում» երգի համույթի կատարումներով (ղեկավար՝ Գրիգոր Համբարյան):

Ի զեն... բազում հերոսներ այդ ռազմականչը շուրթերին անմահացան:

Ի զեն... երեք տասնամյակ առաջ այն կրկին հնչեց, այս անգամ **Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի (ASALA)** համար, հանուն Հայ դատի, հանուն հայի արյան վրեժի և հանուն հայի լինելիության: Ի զեն...

Հայոց վրեժխնդրության «Նեմեսիս» **Շահան Նաթալին** համոզված էր. «Թուրքեն զատ ու թուրքեն վեր թշնամի չունի հայը, եւ հայուն վրեժը աստվածային է»: Նա առաջինն էր, որ ծրագրեց և իրագործեց եղեռնը իրագործող պարագլուխների նկատմամբ վրեժը: Բայց դա հայոց վրեժի ծնունդն էր ընդամենը, որից տասնամյակներ անց հայ վրիժակների մի ամբողջ սերունդ պիտի ծնվեր:

Արազի ափին ծնած հայոց մարգարեն՝ **Գարեգին Նժդեհը** իրավացիորեն ասում էր. «Ներե՞լ էք ուզում - հաղթե՛ք նախ: Մենք մարդ, ավելի քան մարդ կլինենք թրքության հանդեպ, երբ մեր սուրը նրան ծունկի բերեց մեր առջև:

Ներե՞լ էք ուզում - արիացե՛ք, հզորացե՛ք, հաղթե՛ք նախ»:

Եղեռն վերապրած մեր նորօրյա վրեժխնդրության ռահվիրան՝ **Գուրգեն Յանիկյանը**, երեք տասնամյակ առաջ մաքրեց տասնամյակների մոռացության փոշին, և մեր դատը՝ Հայոց դատը, կրկին դրեց մարդկության առաջ: Քովքովի գալով, մի նպատակի ծառայելով՝ հայ անհատները միացան ու ավետեցին աշխարհին, որ ծնունդ է առել Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակը, և նա այն կենդանի բռունցքն է, որ պիտի ծունկի բերի մեր ոխերիմ թշնամի թուրքին և մարդկության առաջ մեր իրավացի պահանջները դնի:

25 տարի առաջ վրեժի մարտիկ **Ալեք Ենիգոմշույանը** կամբաստանվեր իբր տեռորիստ-ահաբեկիչ: Բայց նա դատարավարության իր վերջին խոսքում հայտարարեց, որ իրենք տեռորիստներ չեն, քանզի համոզված էր. «Տեռորիստը իր գործով նպատակ ունի վախեցնելու, իսկ իրենք նպատակ չունեն վախ ազդելու և իրենք ահաբեկիչներ չեն: Վրեժի մարտիկները կպայքարեն մեր դատի և մեր իրավունքների համար: Եվ նրանք գիտեն՝ ով է մեր թշնամին, և իրենց պայքարը ուղղված է այդ թշնամու դեմ: Մեր թշնամին թուրքն է»:

Հայկական հարցը գոյություն ունի և պետք է նրա լուծումը գտնել:

«Վան» գործողության մարտիկներին, **Վազգեն Սիսլյանի** գլխավորությամբ, ժողովուրդը (1984թ. հունվարի 31) դատարանից բանտ էր ճանապարհում «Զարթիր լաո» երգով:

Վազգեն Սիսլյանը միջոցառման ավարտին կարդաց Անդրանիկ Ծառուկյանի «Ուխտ Արարատին» բանաստեղծությունը՝ ասես փոխանցելով ներկաներին ԱՍԱԼԱ-ի անցած ուղու ոգեղեն շունչը և բացատրելով համանուն կազմակերպության ստեղծման նպատակն ու նշանակությունը...

Ճշմարտություններ կան, որոնցից մեկն ասում է՝ ուզո՞ւմ ես գուշակել, տեսնել մի ժողովրդի ապագան՝ նայիր նրա երիտասարդությանը:

Վաղը ազգովին պիտի հնձենք այն, ինչ որ սերմանում ենք այսօր - այսօր, երբ դու նվազ խոստումնալից ես, երբ քո մեջ, մեր օրերի նյութապաշտական ոգու և համատարած հուսալքության պատճառով, թուլացել է պաշտամունքը երկու աստվածությունների՝ հայրենի ժողովրդի և երկրի:

Պետք է երես դարձնել այն բոլոր վարդապետություններից, որոնք հաշտ չեն հայրենասիրության հետ:

Հայրենիքը՝ ընդհանուր աստվածություն, հայրենասիրությունը՝ կրոն:

Ով հայրենապաշտ և գաղափարապաշտ երիտասարդություն ունի, նա էլ ապագա ունի:

Վրեժի մարտիկները եկան ասելու. «Մենք պետք է կռվենք և ոչ թե լաց լինենք»:

ՉԻՆՅԱԼ ՊԱՅՔԱՐԸ ԻՆՔՆԱՆՊԱՏԱԿ ՉԻ՛ԿԱՐՈՂ ԼԻՆԵԼ

Արա-Ալեքսանդր Ենիգոմշույան

- Մինչ Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի շարքերը համալրելը՝ ինչո՞վ էիք զբաղված:

- Ծնվել եմ Լիբանանում՝ Բեյրութում: Այնտեղ է անցել պատանեկությունս: Եվ շատ հայ երիտասարդների նման կրթություն եմ ստացել հայկական վարժարանում, հետո ուսումս շարունակել եմ Բեյրութի Ամերիկյան համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետում: Ուսմանս զուգահեռ տնտեսագիտական որոշ աշխատանքներ էի անում և այդ ընթացքում նաև անդամակցում էի ԱՍԱԼԱ-ին:

Արդեն 1980-ին, ինչպես ԱՍԱԼԱ-ի բոլոր տղաները, այնպես էլ ես, մտովի նրա գաղափարներով էինք տարված: Միշտ ելքեր էինք փնտրում՝ հայրենասիրական մեր մտածումներն ու մեր պայքարի գաղափարը իրականացնելու համար:

- ԱՍԱԼԱ-ի բացահայտված առաջին ազատամարտիկը Դո՞ւք եղաք:

- Մինչ իմ գործողությունը, բացահայտված դեմքեր չեն եղել, որը նպաստել է մտածված քարոզչության գործընթացին: Ինձանով պատռվեց առաջին դիմակը, դուրս եկավ իրական դեմքը: Շատերի համար անակնկալ էր իմ մասնակցությունը, ցնցող՝ իմ հայտնությունը:

- 1980-ի հոկտեմբերի 3-ին Ձեր կողքին Սյուզի Մահսերեճյանն էր (ԱՍԱԼԱ-ի միակ բացահայտված կինը), արդյո՞ք դժվար չէր մահապարտ հայուհու հետ գնալ դեպի ժնևյան գործողությունը:

- Երբ ռումբը պայթեց, Սյուզին ոչ միայն բացահայտվեց, այլ վնասվեց և բանտարկության ենթարկվեց: Այնպես չէր, որ մահապարտության գնալու քայլ էր դա (իսկական առումով եմ դա ասում): Եթե ընդհանուր սկզբունքի մասին խոսենք, ես ընդունում եմ, որ կինը՝ հայ կինը, ունի իր հատուկ առաքելությունը՝ ընտանիք ունենալ, երեխաներ դաստիարակել ու խնամել: Չեմ ասում, որ տղամարդը չպետք է մասնակցի այդ բաներին, սակայն բնությունը այդ առաքելությունը տվել է կնոջը: Հավասարության գաղափարին համամիտ եմ, բայց յուրաքանչյուրն իր տեղն ունի, և նորից գալիս եմ այն մտքին, որ հայ կինը, հայ աղջիկը (լինի դա այն ժամանակ՝ մեր զինյալ պայքարում, թե այսօր) մեր հասարակական կյանքում, իր տեղն ու դիրքն ունի և պետք է ունենա: Հարգելով հայ կնոջը՝ նրան չպետք է զրկել մեր ազգային հարցերում մասնակցության հնարավորությունից:

Ժողովրդի հետ...

- Պատմեցեք վիրավորվելուց հետո և դատավարության ընթացքում տեղի ունեցած հիշարժան դեպքերի մասին:

- Հիվանդանոցում, որտեղ ինձ օգնություն ցույց տվեցին, իմ վիճակով դեպքը բացառիկ էր. ոստիկանները, ամբողջ օրը զինված, հսկում էին իմ սենյակը, անընդհատ քննիչներն էին գնում-գալիս: Նրանց ներկայությունը անհանգստացնում էր բժիշկներին: Այդ ժամանակ հարկաբաժնի պատասխանատուն ասել էր, որ ինքը դիմում կգրի, եթե ինձ այդտեղից չտանեն: Այդպես էլ արեցին:

Դատավարությունը շուտ նշանակվեց: Իմ և Սյուզիի դատավարությունը միևնույն նիստում պիտի կայանար, սակայն աչքս պիտի վիրահատեին, և դա զուգադիպեց դատավարության օրվա հետ: Իմը հետաձգվեց, Սյուզիինը կայացավ: Իմ դատավարությունը տևեց մեկ օր՝ առավոտից մինչ երեկո: Այդքան կարճ, որովհետև հետաքննությունն ավարտվել էր, եղել էին վկաների ցուցմունքներն ու դատապաշտպանի խոսքը: Դատախազի՝ մեղադրողի (որը Ժնևի կանտոնի (շրջանի) գլխավոր դատախազն էր) մեղադրական և իմ պաշտպանական խոսքը մեկ օր տևեց: Երեկոյան վճիռն արձակվեց: Դատավարությանը ներկա էին Ֆրանսիայից եկած մեր համակիրները, ովքեր ոգևորում էին իրենց ներկայությամբ, և ինչած որևէ դիպուկ խոսքին ծափերով էին արտահայտվում կամ «բրավո» կանչում: Դատավորը սպառնաց կրկնելու դեպքում նրանց դահլիճից դուրս հրավիրել:

- Ինչպե՞ս եկաք Հայաստան:

- Երբ ազատվեցի, Հայաստանը Խորհրդային Միության մասն էր կազմում և իմ մտքով չէր անցնում, որ այն այդքան շուտ կփլուզվեր և նրա մաս կազմող հանրապետությունները ձեռք կբերեին անկախություն: Որպես սփյուռքահայ՝ Արևմտահայաստանից սերած՝ մենք պայքարում էինք Արևմտյան Հայաստանի հողերի վերադարձի համար: Չնայած մեզ համար հայրենիքը, ազգը մեկ է, բայց զուտ քաղաքական պատմական իրականությունն այն էր, որ կար Խորհրդային Հայաստան և ցեղասպանության հետևանքով հայաթափ եղած պատմական բռնագրավված հողեր: Երբ Արցախյան շարժումը սկսվեց, բոլորի ուշադրությունը, բնականաբար, դարձավ Արևելյան Հայաստանի կողմը: Հայաստանը դարձավ անկախ հանրապետություն, ունեցանք ազատագրական պայքար՝ հաղթանակ: Բոլորի ուշադրությունն այստեղ էր, ցանկությունն էլ՝ Հայաստան գալ. ապրել և համեստ մասնակցություն բերել հայրենիքի զարգացմանը: Որոշ պատճառներով, անկախությունից անմիջապես հետո իմ գալն այստեղ հնարավոր չէր: Եվ երբ ստեղծվեց այդ հնարավորությունը, ես եկա: Արդեն տասը տարի է, ինչ Լիբանանից տեղափոխվել եմ Հայաստան:

- ԱՍԱԼԱ-ի 30-ամյա կարգախոսը՝ «Զինյալ պայքարը և քաղաքական ճիշտ գիծը ուղիղ են Հայաստանի», հնարավո՞ր է, այսօր որոշ փոփոխությունների ենթարկվի:

- Դա 25-30 տարվա կարգախոս է: Այն ժամանակվա համար դա ճիշտ էր: Այսօր ոչ թե սխալ կարգախոս է, այլ այստեղ երկու կետի վրա է շեշտ դրված. զինյալ պայքարն ինքնանպատակ լինել չի՛ կարող, այն նախ՝ նպատակի՝ գաղափարախոսության, ապա՝ քաղաքական ուղեգծի՝ ռազմավարության կցորդ է: Մեր նպատակները (ազգային իմաստով) նաև քաղաքական նպատակներ են: Քաղաքա-

կան գծի ճշտությունը անհրաժեշտություն է: Զինյալ պայքարը ժամանակի պահանջն էր և այն նոր ընթացք առավ Հայաստանի անկախացումով: Բնական է, որ նախկինը նույն ձևով չէր կարող շարունակվել, ես կարծում եմ՝ կարիք չկա պատճառներն ասելու: Պայքարի նախկին ձևն այսօր իմաստ չունի, բայց վաղը կրկին կարող է ունենալ: Ինչու չունի, որովհետև նախ՝ Հայոց հարցը այն ժամանակ բևեռացված էր Արևմտյան Հայաստանի համար մղվող պայքարի ուղղությամբ: Թուրքական պետության ներկայացուցիչների և նրա խորհրդանիշների դեմ էր մեր զինյալ պայքարը: Երկրորդ՝ մեր պայքարը միջազգային քաղաքական դրվածքի պատճառով չէր կարող վտանգ ներկայացնել այն փոքր հողակտորի համար, որը հանդիսանում էր Խորհրդային Հայաստանը, քանի որ ԽՍՀՄ-ի մասն էր կազմում: Այսինքն՝ ոչ ոք չէր կարող Հայաստանին սպառնալ:

Այսօր երկու հիմնական բան է փոխվել. Հայաստանի անկախացումով՝ նախ մեր ազգային իղձերի կենտրոնը տեղափոխվել է Հայաստանի Հանրապետություն, սակայն դա չի նշանակում, որ մենք մոռացել ենք Արևմտյան Հայաստանը: Մեր պայքարը այդ հողերի վերադարձի համար է: Այսօր մենք ունենք պետություն և պետք է այն ամրացնենք, հզորացնենք, սա ինքնին նպատակ է, սակայն նաև միջոց է՝ մեր վաղվա իղձերը իրականացնելու: Այսինքն՝ մենք վաղը կկարողանանք Արևմտյան Հայաստանի համար ավելի ստույգ քայլերի գնալ, եթե մեր այսօրվա Հայաստանը հզոր լինի: Այսօրվա Հայաստանի հզորացումը նաև մեր 30 տարի առաջ սկսած պայքարի հանգրվանն է, նաև՝ ձևը: Պայքարի բևեռը՝ կենտրոնը, մի քիչ տեղափոխվել է: Եթե Սփյուռքում զինյալ գործողություններ արվեն Թուրքիայի դեմ, դա նրա համար պատրվակ կլինի՝ Հայաստանի դեմ ճնշումներ գործադրելու: Յուրաքանչյուր խելամիտ և բանական հայ մարդ այդ քայլին չի դիմի, եթե վստահ չլինի, որ դա Հայաստանին վնաս չի պատճառի: Երրորդն էլ այն է, որ զինյալ պայքարը Թուրքիայի դեմ դադարեց, բայց մենք ունեցանք մեկ այլ զինյալ պայքար՝ Արցախյան ազատամարտ, որը հասավ լիակատար հաջողության: Եվ սա ցույց է տալիս, որ ամեն պայքար ունի իր պահանջները և այդպես էլ կշարունակվի ապագայում:

Արա-Ալեքսանդր Ենիգոմշու�ը օտարալեզու մամուլի համար հարցազրույց է վերցնում հայ հողագործից:

- Ցեղասպանության մերօրյա միջազգային արձագանքներից ելնելով՝ ի՞նչ եք կարծում, Թուրքիան կընդունի՞ պատմական ճշմարտությունը:

- Մեզ համար ցեղասպանության ճանաչումը ոչ մի ժամանակ ինքնանպատակ չի եղել: Այո՛, հնարավոր է, որ կան մարդիկ (ես նրանց չեմ այպանում) Սփյուռքում և Հայաստանում, որոնց համար Թուրքիայի կողմից ցեղասպանության ճանաչումը նպատակ է: Մեզ համար այդպես չի եղել, մենք պայքարել ենք հողի ազատության և ժողովրդի՝ այդ հողի վրա վերադառնալու իրավունքի համար: Եվ մեր մտքից այդ գաղափարը դուրս չի եկել: Նախ՝ դա հանգրվանային քայլ է և երկրորդ՝ ես կարծում և հավատում եմ, որ ցեղասպանության ճանաչումը Թուրքիայի կողմից Հայաստանի անվտանգության լավագույն երաշխիքներից մեկը կարող է լինել: Քանի դեռ Թուրքիան չի ընդունել անցյալում իր կատարածը, նշանակում է, որ ոչ մի երաշխիք չունենք, թե ապագայում վատ մտադրություն չի ունենա մեր նկատմամբ: Հետևաբար, եթե Թուրքիան ուզում է լավ հարաբերություն Հայաստանի հետ, և քանի որ արևմտյան երկրներն էլ մեզ ասում են մի սևեռվեք անցյալի վրա, մոռացեք, խնդրեմ, թո՛ղ Թուրքիան ճանաչի ցեղասպանությունը, դրանից հետո մենք կմտածենք: Թուրքիայի կողմից ցեղասպանության ճանաչումը ոչ միայն բարոյական խնդիր է մեր ազգի և ժողովրդի համար, այլև՝ Հայաստանի Հանրապետության և Արցախի անվտանգության երաշխիք:

- Դուք հայրենիքին տվել եք մարդու համար ամենաթանկը՝ աչքի լույսը, սակայն Ձեր հոգու լույսը ճառագում է դեպի Արարատը:

- Չէի ասի, որ տվել եմ ամենաթանկը: Ամենաթանկը մարդու կյանքն է: Եվ այնքան մեծ թվով մարդիկ, տղաներ (մեր ժամանակ և հատկապես Արցախյան ազատամարտում) իրենց կյանքը տվեցին: Աչքի լույսն էլ քիչ չէ, բայց ես ինչպես իմ դատավարության ժամանակ եմ ասել, և դա լոկ խոսք չի եղել, **ես չեմ զղջացել իմ արածի համար, և հիմա էլ չեմ զղջում:** Չգիտակցելու պարագայում կարող ես զղջալ, ափսոսալ: Զղջա՞լ. մտքովս էլ չի անցում: Եթե քո մեջ կա Արարատի հավատը, մեր հայրենիքի ու ազգի շարունակական լինելիության հանդեպ ունեցած հավատը, և այդ լինելիության պայքարում մեր աշխատանքի լուման բերելը, դա արդեն քո կորցրածը ավելիով լրացնում է: Եթե մարդն իր մեջ հոգևոր արժեքներ ունի, դա լույս է: Եվ մեզ համար հոգևոր արժեքներից ամենաբարձր տեղում կամ գոնե տեղերից մեկում մեր հայրենիքն է, ազգի նկատմամբ ունեցած հավատը, սերն ու հավատարմությունը:

- Ի՞նչ է գրիչը Ձեզ համար:

- Ինձ համար գրիչը զենք է: Գլխավոր, ամենակարևոր գործիքն է և ուզում եմ նորից շեշտել, որ զենքն ինքնանպատակ չէ, այն ինչ-որ հատուկ նպատակի է ծառայում, երբ խոսքը ազատամարտի մասին է: Գրիչն էլ այդ գործիքներից մեկն է, մտավոր զենք է՝ մարդկանց գիտակցության, խոստումների, քարոզչության, համոզելու, տեսակետ հայտնելու միջոց:

- Հայոց բանակը համալրող երիտասարդին է՛լ ավելի հայրենասեր դարձնելու համար ի՞նչ է հարկավոր:

- Նախ՝ դաստիարակություն է հարկավոր (լայն իմաստով), առաջին հերթին՝ հայրենասիրական, բայց հայրենասիրականը միայն գաղափար չպիտի լինի: Հայրենիքը նաև նյութ է, երբեք՝ մի անկյուն: Այսօր հայրենասիրությունը ամեն մարդ՝ առաջին հերթին պատանին, երիտասարդը, պիտի շոշափի: Հայրենասիրությունը վեհ գաղափար է: Հայ երիտասարդը, պատանին պետք է զգա, որ դա իսկապես արժեք է: Երկիրը ղեկավարելու, նրա խնդիրները լուծելու գործընթացում պետք է երևա այդ ամենը՝ մաքուրը, բարոյականը: Միաժամանակ պետք է լինի հոգևոր դաստիարակություն, առաջին հերթին՝ հայրենասիրական, երկրորդ հերթին՝ մարդկային՝ բարոյական արժեքներ, որոնք չենք կարող անջատել հայրենասիրությունից: Հայրենասիրությունն առանց դրանց չի լինի: Նա մի կողմից՝ դաստիարակություն, մյուս կողմից՝ իրական կյանքում, այնպիսի օրինակներ պիտի տեսնի, որ ասի՝ ա՛յ, սա այն է, ինչ-որ ինձ ասվում է, իրականությունից կտրված չէ:

- Ինչո՞ւ կազմակերպությունը կոչվեց «Ուխտ Արարատի»:

- Արարատը առանց «արևմտա» և «արևելա» բաժանումների, ամբողջ հայության խորհրդանիշն է եղել և է: Այսօր գերեվարված է և մենք, Արարատին ուխտ անելով և, ընդհանրապես, մեր ազգին, հայրենիքին ուխտ ենք արել, որ մեր բռնագրավված հողերը չենք մոռանա: Եվ նրա՝ Արարատի հանդեպ խոստում՝ ուխտ ենք արել:

- Ի՞նչ կպատմի Արա-Ալեքսանդր Ենիգոմշուլանը «Ուխտ Արարատի»-ի այսօրվա և հետագա ծրագրերի մասին:

- «Ուխտ Արարատի»-ն հասարակական կազմակերպություն է և ոչ՝ քաղաքական, որտեղ հավաքված են ԱՍԱԼԱ-ի նախկին քաղբանտարկյալներն ու ազատամարտիկները: Կազմակերպության գաղափարները մեզ տոգորել են դեռևս 20-30 տարի առաջ: Ամուր պահելով՝ շարունակում ենք ապրել դրանցով: Հստակ ասենք, որ փոխվել են պայմանները և ոչ թե գաղափարներն ու նպատակները: Փոխվել է միայն գործելաձևը:

Ընդհանուր գաղափարը՝ մղիչ ուժը, մնում է նույնը, պետք է դա շարունակել, փոխանցել նոր սերնդին և անմար պահել: Սա է «Ուխտ Արարատի»-ի հիմնական առաջադրանքը:

ԱՐԱ-ԱԼԵՔՍԱՆՏՐ ԵՆԻԳՈՄՇՈՒԵԱՆԻ ԽՕՍՔԸ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ (Յունուար,1981թ.)



Երբ Հայկական հարց կ'ըսուի, երբեմն կը յիշուին 19-րդ դարու վերջերը եւ մանաւանդ 20-րդ դարու սկիզբը գործադրուած ջարդերը, որոնց զոհը եղան հայերը:

1975թ., 60-րդ տարին Հայկական ցեղասպանութեան: Նոր հաշուեյարդարի տարի մը: Արդիւնքը... միշտ ոչինչ: Զերօ: Դէպի ետեւ:

Թուրքիան կ'ուրանար միշտ Հայկական հարցին գոյութիւնը: Իսկ աշխարհը չէր ուզեր լսել ո՛չ հայերուն, ո՛չ ալ Հայաստանի մասին:

Տնտեսական եւ ռազմագիտական շահերը նախընտրուեցան ժողովուրդի մը արդար իրաւունքներէն: Վաթսուն տարի սպասելէ ետք, վաթսուն տարի ջանքեր թափելէ ետք եւ խաղաղօրէն պայքարելէ ետք, այսքան տարիներ խոնարհեցումէ ետք, հայ ժողովուրդը վերջապէս հասկցաւ, որ ոչինչ իրեն կը տրուի ձրիաբար, ան հասկցաւ, որ եթէ կ'ուզէր վերադարձնել իր արդար իրաւունքները, ան պէտք էր վճարեր իր արիւնով: Եւ հայկական պայքարող կազմակերպութիւնները ստեղծուեցան (նկատի ունի Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակ և Հայկական ցեղասպանության արդարության մարտիկներ կազմակերպությունները - խմբ.):

Մեր ժողովուրդին պատմութիւնը, յատկապէս այս վերջին վաթսուն տարիներու պատմութիւնը, ինչպէս նաեւ փորձառութիւնը միւս ընկճուած ժողովուրդներուն, աշխարհի բոլոր կողմերը փաստեցին, որ զինեալ պայքարը կը մնայ կարեւորագոյն միջոցը վերադարձնելու համար մեր արդար իրաւունքները: Եւ մենք դիմեցինք զինեալ պայքարին:

Այսօր մեզ կ'ամբաստանեն իբր տեռորիստ-ահաբեկիչներ, բայց տեռորիստ բառը ի՞նչ նշանակութիւն ունի: Ինծի համար տեռորիստը այն անձն է, որ իր գործով նպատակ ունի վախեցնելու: Մենք նպատակ չունինք վախ ազդելու: Մենք ահաբեկիչներ չենք: Մենք ֆաշիստներ չենք: Մենք կը պայքարինք մեր դատին համար եւ մեր իրաւունքներուն համար:

Կ'ընդունիմ այս դատապարտութիւնը հպարտութեամբ եւ իսկոյն կ'աւելցնեմ, որ կայ երկու ձեւի բռնութիւն: Կայ բռնութիւն ճնշողին կողմէ եւ կայ բռնութիւն ճնշուողին կողմէ: Այդ բռնութիւնը, որ մենք կը գործածենք ճնշուողինն է: Եթէ շարունակենք ծռել մեր գլուխները ճնշումներու առջեւ ու նուաստանանք, այն ատեն՝ իբր ժողովուրդ, իրաւունք չունինք ապրելու: Սակայն մենք ժողովուրդ մըն ենք, որ կ'ուզէ ապրիլ, եւ ոչ ոք կրնայ մեզ արգիլել, մեր իրաւունքն է բիրտ ուժին դիմելը, այն ժամանակէն ի վեր, երբ հարցին լուծում մը գտնելու բոլոր խաղաղ միջոցները գոցուեցան:

Դատապաշտպանը շնորհավորում է Արա-Ալեքսանդր Ենիգոմշուլանին:

Աւելին կրնամ ըսել: Եթէ երբեք բիրտ ուժի դիմելը ընդհանրապէս նկատուած է իբր յանցանք կարգ մը երկիրներու օրէնքներուն կողմէ, նոյնն է պարագան, երբ բիրտ ուժի կը դիմուի՝ մեզ արգիլելով մեր հարցը լուծելու: Մեզ մղեցին գործածելու համար մեր ուժը: Եթէ մեզ կ'ուզեն դատապարտել, քանի որ մենք ուժ գործածեցինք, ուրեմն պէտք է նաեւ դատապարտել անոնց, որոնք մեզ մղեցին գործածելու այս բիրտ ուժը, Թուրքիան եւ միւսները:

Հայկական հարցը գոյութիւն ունի եւ պէտք է անոր լուծում մը գտնել:

Բոլոր կարելի միջոցները, որոնք այս հարցը լուծումի մը կրնային հասցնել, գիծ քաշուեցաւ: Միայն մնաց զինեալ պայքարի ուղին: Եթէ կ'ուզեն նոյնպէս արգիլել այս միջոցը, այն ժամանակ թող հայ ժողովուրդը քարտէսին վրայէն աւրեն:

Ահա թէ ինչու հայ ժողովուրդը զինեալ պայքարը ընտրեց:

Ահա թէ ինչու մարտնչող կազմակերպութիւնները ստեղծուեցան:

Ահա թէ ինչու ընդունեցի առաքելութիւնս գործադրել:

Ահա թէ ինչու ես՝ Արա-Ալեքսանտր Ենիգոմշուեանս, կը պատրաստէի երեք պայթուցիկ ռումբեր 1980-ի հոկտեմբերի 3-ի գիշերը:

Բախտը, աւելի ճիշդը իմ սխալս ուզեց, որ ես չյաջողիմ առաքելութիւնս գործադրել:

Բարոյականս բարձր է: Ես չեմ զղջացած այս ճամբան զատած ըլլալուս համար, քանի որ գիտեմ ինչու համար կը պայքարիմ: Մեծ համոզում ունիմ իմ դատիս հանդէպ: Միշտ ալ համոզուած եմ, որ զինեալ պայքարը կը մնայ կարեւորագոյն միջոցը վերատիրանալու համար մեր իրաւունքներուն:

Ես գիտեմ՝ ով է թշնամիս: Ես կ'ուղղեմ զէնքս միայն այս թշնամիին դէմ: Գիտեմ՝ ինչու ես այնքան բաներ զոհեցի: Ես իմ պարտականութիւնս միայն ըրի: Հայ ժողովուրդը տուած է միլիոններով նահատակներ իր պատմութեան ընթացքին, ես առաջինը չեմ եւ վերջինն ալ պիտի չըլլամ:

Մեր պայքարը տակաւին երկար պիտի շարունակուի:

ՀԱՀԳԲ-ի «Հայաստան» պաշտօնաթերթ,
Բացառիկ, թիւ 6, ապրիլ, 1981թ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՇՏԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԲՅՈՒՐԵՂԱՑՈՒՄ

Աշնան սկիզբը հայաստանյան քաղաքական դաշտին որոշակի աշխուժացում բերեց: Տեղի ունեցան սահմանադրական բարեփոխումների խորհրդարանական քննարկումները: Պառակտվեց «Հանրապետություն» կուսակցությունը, ինչն ավելի հստակեցրեց ընդդիմության տարբեր հատվածների գործելակերպի հարցը: Սկսվեց տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) ընտրությունների գործընթացը, որին նորից չմասնակցեց ընդդիմությունը, իսկ կոալիցիոն կուսակցությունները փորձեցին հնարավորինս շատ տեղական ղեկավարների պաշտոններ ապահովել՝ երկու տարուց էլ պակաս մնացած խորհրդարանական ընտրություններին վարչական ռեսուրսը կիրառելու հնարավորություն ունենալու համար:

Գործընթացների այս ամբողջությունը կարելի է որակել «վերջնական հստակեցում» արտահայտությունով: Ամեն ինչ այնքան հստակ է և պարզ, որ կարելի է խոսել համարյա դասագրքային դարձած ճշմարտությունների և սահմանումների մասին:

Պարզ է դառնում, որ հայաստանյան քաղաքականությունը զարգացման տեսակետից ոչ մի որակական փոփոխություն չի կրում: Հնարքներն ու միտումները մնում են նույնը, նրանց հետևանքները՝ նույնպես: Խոսք կարող է լինել նույնիսկ յուրատեսակ ավանդույթների ձևավորման մասին:

Սահմանադրության վերաբերյալ «քննարկումները» միայն ավելի հստակ կանխորոշեցին մի քանի հետևություն: Նախ՝ նորից հաստատվեց այն, որ նոր Սահմանադրությունը լինելու է նախորդի նման ոչ թե իրավական, այլ քաղաքական փաստաթուղթ: Այն դիտարկվելու է նրա հեղինակների և առաջադրողների նկատմամբ վերաբերմունքի և քաղաքական նպատակահարմարության տեսանկյունից: Իշխանական բուրգը և նրան մոտ կանգնած կուսակցությունները (ՀՀԿ, ՕԵԿ, ՀՅԴ և ՄԱԿ) միանշանակորեն «այո» են ասելու Սահմանադրությանը, ինչպես կվարվեին իշխանությունների յուրաքանչյուր այլ նախաձեռնության հետ: Ընդդիմադիրները, ասելով «ոչ», հետևում են նույն տրամաբանությանը: Ասվածի ապացույցն էլ սեպտեմբերի վերջին ընդդիմադիր կուսակցությունների հայտարարությունն է. «Մենք միանշանակ մերժում ենք սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի այս գործընթացը և դրանով իսկ «ոչ» ենք ասում ռեժիմին: Ստեղծված իրավիճակում օր առաջ իշխանափոխությունն անհրաժեշտություն է»:

Տասը տարի առաջ, նույնպես իշխանությունները և ընդդիմությունը չկարողացան մշակել փոխզիջումային գործունեության հայեցակարգ և հանուն Սահմանադրության՝ վեր կանգնել անձնական, կուսակցական և այլ շահերից: Արդյունքում, մենք ստացանք թերի հիմնական օրենք: Ամեն ինչ կրկնվում է նաև այսօր, և այս պարագայում անհասկանալի է մնում միայն մեկ բան, արդյո՞ք այս Սահմանադրությունը որոշակի առաջընթաց է նախորդի համեմատությամբ, թե՝ ոչ:

Սահմանադրական բարեփոխումների քննարկումները ևս մեկ կարևոր հետևանք ունեցան. նրանք վերջնականապես բյուրեղացրեցին քաղաքական դաշտը: Հիմա արդեն հստակ հայտարարված է, թե ով ինչ արժեքներ է դավանում, ինչ վերաբերմունք ունի երկրի ներկա իշխանությունների նկատմամբ և ինչ քայլեր է պատրաստվում կատարել ապագայում: Հստակ ընդգծվեց ուժերի դասավորվածությունը և պարզ դարձան նաև գործելակերպի տարբերությունները:

Ընդդիմությունը նորից գնում է քաղաքական պայքարի առճակատման, ինչը նրա համար այսօր միակ ելքն է, թերևս: Գործողությունների արմատականացումը թույլ է տալիս նրան գտնվել պայքարի բովում և խուսափել ժողովրդի վերջնական հիասթափությունից: Ընդդիմադիր դաշտում սկսում են նաև հասկանալ, որ «պետք չէ ձեռք տալ իշխանություններին, և նրանք իրենք կկործանեն միմյանց» մարտավարությունը չի աշխատում:

«Ազգային միաբանություն»-ն ու «Արդարություն» դաշինքն ընտրել են ԱԺ վերադառնալու և սահմանադրական բարեփոխումների հանրաքվեն իշխանությունների վստահության յուրատեսակ հանրաքվեի վերածելու ձևը: Նրանք նախատեսում են հանդիպումներ կազմակերպել ամբողջ ՀՀ-ով մեկ՝ մարզերում և միասնական եզրափակիչ հանրահավաք հրավիրել Երևանում՝ ընդդեմ Սահմանադրության այս նախագծի: Սրանով փորձ կկատարվի սրել քաղաքական պայքարը և հասնել Սահմանադրության այս տարբերակի տապալմանը: Առավել ևս, որ ՀՀ-ում ԱՄՆ դեսպան Ջոն Էվանսը ակնարկել է, որ հանրաքվեի կեղծման փորձերը կարող են ժողովրդին փողոց դուրս բերել:

Այս տեսակետից շատ հետաքրքիր են «Հանրապետություն» կուսակցության ներսում տեղի ունեցած իրադարձությունները: Դեռևս օգոստոսի 30-ին կուսակցության քաղխորհուրդի 15 անդամներից 7-ը հայտարարեցին «Հանրապետություն»-ից դուրս գալու մասին: Եվ եթե նրանց կողմից ձևավորվող նոր «Ազգային վերածննդի» կուսակցությունը դժվար թե տարբերվի մյուս մեծաքանակ չափավոր և ռուսամետ ընդդիմադիր կուսակցություններից, ապա «Հանրապետություն»-ն այսօր հստակ և միանշանակ գրավեց հայաստանյան քաղաքական ներկապնակի ծայրահեղ արմատական, արևմտամետ, հեղափոխական հատվածը: Իսկ այստեղից կա միայն երկու ճանապարհ՝ կամ հեղափոխական բարիկադներով դեպի իշխանություն կամ քաղաքական վերջնական լուսանցքայնացում: Կուսակցության առաջնորդ Արամ Սարգսյանը դրա մասին ոչ մեկ անգամ է հայտարարել. «Ես դեմոկրատական, թավշյա հեղափոխության կողմնակից եմ և գտնում եմ, որ երկրի միակ փրկությունը ժողովրդի փողոց դուրս գալն է»:

Իշխանական կուսակցությունները զբաղված են այլ խնդիրներով: Սեպտեմբերի 18-ից սկսված ՏԻՄ-ի ընտրություններն ի տարբերություն 2002թ., ընթացել են առանց լուրջ բախումների: Պայմանավորվածություններն այս անգամ ավելի հստակ են և ամուր: Այստեղ նույնպես ամեն ինչ շատ կանխատեսելի է և պարզ: Այնքան պարզ են, որ շատ համայնքներում մեկից ավելի թեկնածու չի էլ առաջադրվում: Գործող ՏԻՄ-ի ղեկավարները մեծամասամբ ընդդիմության չմասնակցելու պայմաններում՝ հաղթում են առանց մեծ դժվարության: Սա նույնպես մարտավարական խնդիր է, համայնքների դաշտն ընդդիմությունը զիջեց առանց մարտի, ինչը կարող է վկայել կամ կադրային պակասի մասին, երբ ուղղակի չեն գտնվում հարմար թեկնածուներ, որոնք հնարավորություն կունենան գոնե պայքարի մեջ մտնել, կամ էլ ցանկության բացակայության մասին է, որը չի բացատրվում այլևս ոչ մի բանով:

Այս հստակ և միանշանակ քաղաքականությունը հոգնեցուցիչ է դառնում, եթե չլինի ինչ-որ բեկման սպասում: Իսկ այն միշտ կա, և կա կանխազգացում. միգուցե սա ուղղակի դադա՞ր է փոթորկից առաջ:

ՍՈՒՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՇԱՆՏԱԺ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

«Թուրքիան համաձայն չէ մնալ լավ ընկեր Եվրոմիության հետ, Անկարան ցանկանում է միմիայն ամուսնություն»,- հայտարարել է Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը վերջերս Միլանում տեղի ունեցած մի ֆորումի ժամանակ:

Եվրոպան ուշիուշով հետևում է, թե ինչպես է Թուրքիան անհամբեր բախում իր դուռն ու թափահարում կոպենհագենյան չափանիշերի բավարարմանն ուղղված հերթական օրենսդրական ակտերի կապոցը: Թուրքիայի «Արդարություն ու զարգացում» կուսակցության ճնշող մեծամասնությունը խորհրդարանում թույլ է տալիս Անկարային, առանց լուրջ խոչընդոտների, հասնել պահանջված փոփոխությունների, սակայն Բրյուսելը լուրջ կասկածներ է հայտնում հապճեպ կատարված բարեփոխումների կապակցությամբ: Ամենայն հավանականությամբ, դրանք կրելու են ձևական բնույթ, և դե-ֆակտո իրադրությունը երկրում շատ քիչ է փոփոխվելու:

Նման իրավիճակ էր նաև XIX դարի կեսերին, երբ եվրոպական տերությունների ճնշումների ներքո Օսմանյան կայսրությունը ձևականորեն հայտարարում էր բարեփոխումների մասին, բայց ամեն ինչ մնում էր թղթի վրա: Այս անգամ, սակայն, խաղադրույքի է դրված ոչ թե Օսմանյան կայսրության քրիստոնյա հպատակների ճակատագիրը, այլ՝ Եվրոպայի ապագան, և սա արդեն չի կարող անտեսվել վերջինիս կողմից:

Եվրոպացիները հույժ անհանգստացած են թուրքերի անսպասելի առաջխաղացմամբ և ցանկանում են խոչընդոտել Անկարային բոլոր հնարավոր միջոցներով: Թուրքիայի անսպառ և էժան աշխատուժի անարգել հոսքը Եվրոպա, անկայուն ու խիստ թույլ տնտեսությունը, թերզարգացած տարածքներն ու իսլամիստական ծայրահեղական կազմակերպությունները լոկ մի քանիսն են այն բազում պատճառներից, որոնք Անկարային անցանկալի հյուր են դարձնում եվրոպական ընտանիքում: Դրա հետևանքով Թուրքիայի առջև դրվելիք պայմանների շարանը օրեցօր երկարում է ու բարդանում՝ Հայոց ցեղասպանության ճանաչում, քրդական խնդրի լուծում, Կիպրոսի Հանրապետության հետ պաշտոնական հարաբերությունների հաստատում և այլն:

Անկարան իր հերթին մի կողմից աշխատում է առերես բավարարել Բրյուսելի բոլոր հնարավոր պահանջները՝ գոնե ցույց տալով, որ ինչ-որ բան արվում է պահանջվածին հասնելու համար, մյուս կողմից՝ բողոքում խաղի կեսին կանոնները փոխելու մարտավարությունից ու սպառնում հրաժարվել եվրոպականացման ուղուց:

Դեռևս սեպտեմբերին, Թուրքիայի արտաքին գործերի նախարար Աբդուլլահ Գյուլը հայտարարեց, թե Անկարան կարող է հրաժարվել 40 տարվա իր երազանքից, եթե լիիրավ անդամակցությունից պակաս բան առաջարկվի առաջիկա բանակցությունների ընթացքում: Հիշեցնենք, որ Գերմանիայի քրիստոնյա-դեմոկրատների առաջնորդ Անգելա Մերկելն առաջարկում է Թուրքիային «արտոնյալ գործընկերոջ» կարգավիճակ, ինչը թույլ կտա ավելի սերտացնել ԵՄ - Թուրքիա հարաբերությունները, սակայն հեռու կպահի Անկարային եվրոպական «տորթից»:

Անկարան վախենում է, որ Ա. Մերկելի հաղթանակն ընտրություններում, ինչպես նաև ԵՄ Սահմանադրության մերժումը ֆրանսիացիների ու հոլանդացիների կողմից, որոնց հիմնական մասը խիստ դեմ է Թուրքիայի անդամակցությանը, կուժեղացնեն Եվրոմիության ընդլայնմանը դեմ արտահայտվողների դիրքերը:

Թուրքիան սպառնում է Եվրոմիությանը, որ իր հիասթափության դեպքում ազգաբնակչությունը երես կթեքի եվրոպական արժեքներից, երկրում կրկին կարմատավորվեն ծայրահեղ մահմեդական կազմակերպությունները, իսկ այդօրինակ հարևանի առկայությունն այդքան էլ անվտանգ չի լինի Եվրոպայի համար: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ Եվրոպան տեղի չի տա և կշարունակի ձգձգել Անկարայի լիիրավ անդամակցությունը, առավել ևս, որ բանակցություններն անժամկետ են, այսինքն՝ տեսականորեն չունեն վերջնաժամկետ և կարող են տևել տասնյակ տարիներ, որոնց ընթացքում տեղի ունեցած զարգացումները և աշխարհաքաղաքական նոր իրավիճակն արդեն կհուշեն Բրյուսելին հետագա քայլերի խելամտությունը:

ԱՐՏԱԿ ՇԱՔԱՐՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

ԹՈՒՐՔ ԳՐՈՂԸ ԿԿԱՆԳՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՌՋԵՎ

- Եթե Թուրքիայի իշխանությունները շարունակեն իրենց հարձակումները եվրոպացի գրող Օրհան Փամուքի վրա Հայոց ցեղասպանությունը ճանաչելու պատճառով, մեզանից շատերը, որ Թուրքիայի ջերմ աջակիցներն են, ստիպված կլինեն փոխել իրենց վերաբերմունքը նրա նկատմամբ,- Եվրոխորհրդարանի անդամ Դենիս Մքշեյնի այս հայտարարությունն է մեջ բերել բրիտանական «Ինդիփենդենտ» հեղինակավոր օրաթերթը:

Թուրքիայի դատախազներից մեկը մեղադրանք է ներկայացրել թուրք հայտնի գրող Օ. Փամուքին, որը մի քանի ամիս առաջ ասել էր, թե ժամանակին թուրքերը մոտ մեկ միլիոն հայ են կոտորել: Նա դեկտեմբերի 16-ին կկանգնի Ստամբուլի դատարանի առաջ և կարող է դատապարտվել 6 ամսից մինչև 3 տարվա ազատազրկման:

Մեծ Բրիտանիայի Աշխատավորական կուսակցությունը ներկայացնող Մքշեյնը նաև փաստել է. «Սա ցավագին հարված է Բրիտանիայի և ընդհանրապես Եվրոպայի բոլոր թուրքամետ գործիչների համար»:

ԵՍ ՀԱՎԱՏԱՑԱԾ ՉԵՄ, ՈՐ ԹՈՒՐՔԸ ԿԴԱՌՆԱ ԵՎՐՈՊԱՑԻ

Ժիրայր Քոչարյան

Թե որքանով ազդեց Գերմանիայի Բունդեսթագի կողմից ընդունված բանաձևը Հայոց ցեղասպանության հարցի շուրջ վերջին զարգացումներին, դժվարանում եմ ասել: Գերմանիայի մտավորականությունն ու ԶԼՄ-ները խիստ քննադատեցին այդ որոշումը, որովհետև դա ցեղասպանության ճանաչում չէր՝ խաբկանք էր թե՛ մեր, թե՛ թուրքերի, և թե՛ իրենց համար: Բացատրեմ, թե ինչու. նախ՝ Գերմանիայի կառավարությունը չեզոք չէր. մեղսակից էր ցեղասպանությանը, այսինքն՝ դաշնակից էր Թուրքիային և քաջատեղյակ էր, թե այնտեղ ինչ էր կատարվում, 2000 գերմանացի սպա բարձր պաշտոններ էին զբաղեցնում Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ: Օսմանական սուլթանությունում գերմանացիները ունեին 15 հյուպատոսություն: Հյուպատոսները այդ օրերին կատարվածը զեկուցում էին Պոլիս՝ իրենց գլխավոր դեսպանությանը, այնտեղից էլ հաղորդում էին Բեռլին: Գերմանացիները քաջատեղյակ էին և այդ առիթով էլ գրաքննություն մտցրեցին Թուրքիայում հայերի նկատմամբ կատարված ոճրագործության մասին, արգելված էր հանրությանը տեղեկացնելը, այնպես որ գերմանացի թղթակիցները լուր չունեին:

Այսօր էլ Գերմանիան սովորական չեզոք երկիր չէ, հիմա ցեղասպանության ճանաչման հարցում նա ավելի շատ ներդրում պիտի ունենա, դժբախտաբար, այդպես չէ: Եթե իրապես Թուրքիայի բարեկամ է, պիտի նրանից պահանջի ցեղասպանության ճանաչում: Վերջիվերջո, եթե ուզում են մտնել Եվրոմիություն, պետք է որոշ նորմեր պահեն: Դա էլ չարեցին. «ցեղասպանություն» բառը ոչ մի տեղ չգործածեցին, մինչև անգամ՝ «դեպորտացիա» բառը: Դեպորտացիա, այս բառի մեջ ուրիշ միտք կա, քան՝ վտարում: Հայերին տանում էին Դեր Զոր՝ կոտորելու, ոչնչացնելու: Դա արտաքսում չէր: Շատ գերմանացի մտավորականներ, գերմանական թերթեր (անգամ Թեսսա Հոֆմանն ասաց. «Ավելի լավ է լռեին ընդհանրապես և այդ առիթով որևէ որոշում չընդունեին») բողոքի մեծ ակցիա կազմակերպեցին: Մեզ խորհուրդ են տալիս հաշտվել թուրքերի հետ, կարծես՝ խռովել ենք: Հիմա գերմանացիները չէ, որ մեզ պետք է հիշեցնեն հաշտության մասին: Հաջորդ կարևոր կետն էլ այն է, որ Գերմանիան առաջարկում է, որ հայ և թուրք պատմաբանները խնդիրը նորո՛ն քննարկեն. արդյո՞ք ցեղասպանություն եղել է, թե՝ ոչ: Մենք գիտակցում ենք, թե դա ի՞նչ է նշանակում. մինչև հիմա 17 պետության կողմից ճանաչված հարցը ջուրը գցել: Ես վախենում եմ, որ մյուս պետությունները այսուհետ ոչ թե Ֆրանսիայի կամ Շվեյցարիայի օրինակին կհետևեն (մերժողին օրենքով կպատժեն), այլ կընդունեն գերմանական վարկածը, որը ոչինչ չի ասում: Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը դիմեց այս քայլին, ոչ թե ցեղասպանությունը ճանաչելու, **դատապարտելու** համար, (ընդգծված բառը բանաձևում ընդհանրապես չկա), այլ իրենք դեմ են Թուրքիայի անդամակցությանը, նրանք առաջարկում են արտոնյալ վիճակ:

Գերմանիայում մենք ունենք ցեղասպանության ճանաչման հանձնախումբ՝ Թեսսա Հոֆմանի նախագահությամբ, Հայկական տեղեկատվության փաստագրական խումբ: Բունդեսթագի որոշմանը Գերմանիայի հայերը լավ չարձագանքեցին. ինձ զարմացրեց նրանց լռությունը:

Ինչ վերաբերում է Ստամբուլի համալսարանի գիտաժողովին, պիտի ասեմ, որ երբ Թուրքիան նեղն է ընկնում, աշխարհի երեսին «փոշի փչելով» փորձում է ցույց տալ, թե ինչ հրաշալի երկիր է, և ցեղասպանության մասին կարելի է խոսել, ազատ արտահայտվել: Որոշ ժամանակ անց վերադառնում է նախկին պնդմանը: Չպետք է մոռանալ, որ այդ երկիրը օրենք ունի սահմանած, ըստ որի, Հայոց ցեղասպանությունը դատապարտողը 2-3 տարի կալանք է ստանում: Եվրոմիության կողմից Հայոց ցեղասպանությունը՝ որպես նախապայման առաջադրելը, միայն ողջունելի է: Կցանկանայի, որ ՀՀ իշխանավորները և հայությունը՝ մտավորականները, անտարբեր չլինեին այս հարցին, ամեն ինչին սթափ նայեին և քննադատական մոտեցում ունենային, ճիշտ ըմբռնեին, թե ինչ է կատարվում և անպայման ժամանակին արձագանքեին: Շուտով 3000 հայ Բրյուսելում ցույց է կազմակերպելու՝ ընդդեմ Թուրքիայի Եվրոմիությանն անդամակցելուն: Հայաստանի որոշ իշխանավորներ (ՀՀ արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը) հայտարարում են, թե Թուրքիան կդառնա Եվրոմիության անդամ և Հայաստանի հարևանը: Այսպիսով՝ ի հայտ են գալիս Սփյուռքի և Հայաստանի հակադիր կարծիքներ: Ես ցանկանում եմ, որ այս հարցով զբաղվող ակտիվ շրջանակները միակարծիք լինեն և իրենց քաղաքական հայացքները ճշտեն և նոր հանդես գան: ՀՀ արտգործնախարարությունը մեկ տարի առաջ կազմակերպել էր նմանատիպ ողջունելի մի հանդիպում, նման հանդիպումներ պետք է պարբերաբար լինեն:

Ապրում եմ մի քաղաքում՝ Բեռլինում, որտեղ 250.000 թուրք կա, ես ամեն օր եմ նրանց տեսնում և **հավատացած չեմ, որ թուրքը կդառնա եվրոպացի, ես հավատացած չեմ, որ թուրքը եվրոպական չափանիշներ կհարգի:** Ինչպես կարող ենք հավատալ, երբ երկու պետության ներկայացուցիչների հրավիրեցին ՆԱՏՕ-ի դասընթացների, և թուրքը կացնով սպանեց հային: Ես չեմ հավատում, որ թուրքը կարող է փոխվել, կարող է տասը տարի խելոք մնալ, մեկ էլ կարթնանա նրա գազանային բնազդը...

Սահմանները բացելով՝ խոսում ենք առևտրի մասին: ՀՀ-ը ի՞նչ պիտի վաճառի Թուրքիային, նա ինչի՞ պետք ունի: Ինչ ուզում է, գնում է Եվրոպայից: Ես չեմ հասկանում, ո՞ր առևտրի մասին է խոսքը: Հայերն ասում են՝ Թուրքիայի ճանապարհներից օգտվենք, թուրքերը կթողնե՞ն արդյոք: Չեմ հավատում այդ բարեկամությանը, և երբ թուրքն արդեն իր դեմքը ցույց է տվել, 12 տարի է ինչ շրջափակել է Հայաստանը, ամեն ինչ արել է մեր դեմ, բացի բացեիբաց պատերազմ հայտարարելուց: Արցախյան պատերազմի ժամանակ 2000 սպա է ուղարկել Ադրբեջան, զենք է տվել, միջազգային բոլոր բանակցություններում սատարել է նրանց:

Ցեղասպանությունն անժամանցելի ոճրագործություն է, որը մի՛շտ դատապարտելի է: Բայց կա մի ճշմարտություն. որքան հեռանում ենք, այնքան վերքը սպիանում է, դժվարանում է լուծման եզրեր գտնելը:

ԲՈՒՆԴԵՍԹԱԳԻ ԸՆԴՈՒՆԱԾ՝ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԲԱՆԱՁԵՎԸ

ՀԱՅԵՐԻ՝ 1915Թ. ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՎԵՐՀԻՇՈՒՄ: ԳԵՐՄԱՆԻԱՆ ՊԱՐՏԱՎՈՐ Է ՆՊԱՍՏԵԼ ԹՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆԸ: Բունդեսթագը որոշում է.

Գերմանական Բունդեսթագը խոնարհվում է բռնության, սպանդի և հալածանքների զոհերի հիշատակի առջև, որոնց ենթարկվել է հայ ժողովուրդը Առաջին համաշխարհային պատերազմից առաջ և դրա ընթացքում:

Բունդեսթագը ցավում է Օսմանյան կայսրության երիտթուրքական կառավարության արարքների համար, որոնք հանգեցրել են Անատոլիայի հայերի գրեթե ամբողջական բնաջնջմանը, ցավում է նաև Գերմանական կայսրության անփառունակ դերակատարման համար, որը, չնայած հայերի կազմակերպված հալածանքների և բնաջնջման վերաբերյալ բազմակողմանի տեղեկություններին, նույնիսկ չի փորձել կասեցնել ոճրագործությունները: Գերմանական Բունդեսթագն այդ վերհիշումով իր հարգանքի տուրքն է մատուցում այն բոլոր գերմանացիներին և թուրքերին, որոնք դժվարին հանգամանքներում և հակառակ իրենց այն ժամանակվա կառավարության դիմադրության, խոսքով և գործով նվիրվել են հայ կանանց, տղամարդկանց և երեխաների փրկությանը: Առանձնապես դոկտոր Յոհաննես Լեփսիուսի գործը, ով եռանդուն և ազդու կերպով պայքարել է հայ ժողովրդի գոյատևման համար, պետք է մոռացումից դուրս բերվի և հայ, գերմանացի և թուրք ժողովուրդների միջև հարաբերությունների բարելավման իմաստով խնամվի ու պահպանվի: Գերմանական Բունդեսթագն իր սեփական տևական փորձառությամբ գիտի, թե յուրաքանչյուր ժողովրդի համար որքան դժվար է մերձենալ սեփական անցյալի մութ էջերին: Նա, սակայն, խորապես համոզված է, որ պատմության ազնիվ քննությունն անհրաժեշտ է և հանդիսանում է հաշտության կարևորագույն հիմքը: Դա հատկապես կարևորվում է հիշողության՝ եվրոպական մշակույթի շրջանակներում, որի կարևոր բաղկացուցիչ մասը տվյալ ազգի պատմության մութ էջերի բաց քննությունն է: Այս տեսանկյունից գերմանական Բունդեսթագը ցավում է, որ այսօր Թուրքիայում դեռ շարունակ անհնար է ընդգրկուն քննարկում ծավալել Օսմանյան կայսրությունում այն ժամանակ կատարված իրադարձությունների վերաբերյալ, և այն գիտնականներն ու գրողները, ովքեր կամենում են զբաղվել թուրքական պատմության այդ հատվածով, մատնված են քրեական-իրավական հետապնդման և հասարակական պարսավանքի: Գերմանական Բունդեսթագն, անշուշտ, տեսնում է նաև առաջին դրական նախանշաններն այն բանի, որ Թուրքիան հիշողության՝ հիշատակված եվրոպական մշակույթի իմաստով, հարաճուն զբաղվում է այդ թեմատիկայով: Դրա օրինակներն են.

- Թուրքական ազգային մեծ ժողովը առաջին անգամ Թուրքիայի հայկական ծագում ունեցող քաղաքացիներին հրավիրել է հայերի հանդեպ իրագործված ոճրագործությունների և թուրք - հայկական հարաբերությունների վերաբերյալ քննարկումներ կատարելու:
- Վիեննայում տեղի ունեցավ թուրք և հայ կանանց երկխոսություն:
- Թուրք և հայ պատմաբանների միջև առաջին շփումները նշանավորեցին փաստաթղթերի փոխանակման սկիզբը:
- Վարչապետ Էրդողանը հայր Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանի հետ միասին Ստամբուլում կատարեց Թուրքիայի առաջին հայկական թանգարանի բացումը և հրապարակայնորեն առաջարկեց ստեղծել թուրք և հայ պատմաբանների երկկողմ հանձնաժողով: Այս տեսանկյունից, սակայն, գերմանական Բունդեսթագին դարձյալ խորը մտահոգություն է պատճառում այն հանգամանքը, որ միջազգային հեղինակություն ունեցող թուրք գիտնականների՝ Հայկական հարցին վերաբերող գիտաժողովը, որը պետք է տեղի ունենար 2005թ. մայիսի 25-27-ը Ստամբուլում, թուրքական արդարադատության նախարարի կողմից արգելվեց, և այդ թուրք գիտնականների՝ թուրքական կառավարության տեսակետներից շեղվող դիրքորոշումները պարսավանքի ենթարկվեցին՝ որպես «դաշույնի հարված թուրք ազգի թիկունքին»: Թուրք և հայ պատմաբանների համատեղ հանձնաժողովի վերաբերյալ վարչապետ Էրդողանի առաջարկը միայն այն դեպքում կարող է հաջողություն ունենալ, եթե տեղափոխվի ազատ և հրապարակային գիտական քննարկման հարթություն: Գերմանիան, որը նպաստել է հայ ժողովրդի հանդեպ ոճրագործությունների իրականացմանը, նույնպես պարտավոր է սեփական պատասխանատվությանը դեմ հանդիման կանգնել: Դա միաժամանակ թելադրում է թուրքերին և հայերին աջակցել՝ անցյալի փոսերից անդին հաշտության և փոխըմբռնման ուղիներ որոնելու: Վաղուց է, ինչ առաջին հերթին Գերմանիայի երկու մեծ եկեղեցիները հանդես են եկել Թուրքիայից եկած հայերի ինտեգրացման համար: Այստեղ առաջացած հայկական համայնքները հանդիպման ու վերհիշումի հնարավորություններ են ընձեռում: Հենց Գերմանիայում ապրող՝ Թուրքիայից եկած մուսուլմանների մեծ թվի առնչությամբ կարևոր առաջադրանք է պատմությունը ստույգ ներկայացնելն ու դրանով հաշտեցմանը նպաստելը: Այդ պատմական իրադարձությունների քննարկումը, սակայն, անմիջական նշանակություն ունի նաև ներկայի համար: Այսօր Թուրքիայի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության հարաբերությունների կարգավորումը առանձնահատուկ կարևորություն ունի ողջ տարածաշրջանի ապագայի համար: Հույժ անհրաժեշտ է ԵԱՀԿ սկզբունքների հիման վրա երկու կողմերում վստահություն սերմանող միջոցառումներ իրագործել: Թուրքիայի կողմից սահմանի բացումն, օրինակ, կարող էր Հայաստանի մեկուսացմանը վերջ դնել և նպաստել դիվանագիտական հարաբերությունների սկզբնավորմանը: Գերմանիայի՝ գերմանա-թուրքա-հայկական հարաբերություններում նրա ունեցած պատմական դերի հիման վրա այսօր առանձնահատուկ պարտավորություն է վիճակվել Եվրոպական Միության՝ հարևանային նախաձեռնությունների շրջանակներում: Նպատակը պետք է լինի միաժամանակ աջակցել Հայաստանի և Թուրքիայի միջև իրադրության նորմալացման ու բարելավման հնարավորության ստեղծմանը և այդպիսով ներդրում ունենալ Կովկասյան տարածաշրջանի կայունացման հարցում: Հիշողության պահպանման հարցում կարևոր նպաստ կարող են ունենալ դաշնային երկրամասերը: Քաղաքականության առաջադրանքն է՝ նպաստել այն բանին, որ հայերի հալածանքների և բնաջնջման լուսաբանումը՝ որպես 20-րդ դարի էթնիկական հակամարտությունների պատմության լուսաբանման մի

Նկարում՝ Բեռլինի թուրքերի ցույցը Քյուրֆյուրսթենդամի պողոտայում, Բունդեսթագի որոշումից հետո:

բաղկացուցիչ մաս իրականացվի նաև Գերմանիայում:

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԲՈՒՆԴԵՍԹԱԳԸ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ԿՈՉ Է ԱՆՈՒՄ.

- Աջակցել, որ թուրքերի և հայերի միջև պատմական մեղքի լուսաբանման, հաշտության և ներման միջոցով համաձայնություն կայանա:

- Հանդես գալ հանուն այն բանի, որ Թուրքիայի պառլամենտը, կառավարությունն ու հասարակությունը պատմության մեջ և ներկայումս հայ ժողովրդի հանդեպ իրենց ունեցած դերակատարումն անվերապահորեն պարզաբանեն:

- Հանդես գալ պատմաբանների մի հանձնաժողովի ձևավորման համար, որին բացի թուրք և հայ գիտնականներից, պետք է նաև միջազգային փորձագետներ մասնակցեն:

- Հանդես գալ այն բանի համար, որ ոչ միայն Օսմանյան կայսրության՝ այդ հարցին վերաբերող փաստաթղթերը, այլև Գերմանիայի կողմից գերմանական ԱԳՆ-ի արխիվից Թուրքիային հանձնված պատճենները հանրությանը հրապարակայնորեն մատչելի դարձվեն:

- Հանդես գալ Ստամբուլում պլանավորված, սակայն պետական ճնշման ներքո հետաձգված գիտաժողովի փաստական իրականացման համար:

- Հանդես գալ Թուրքիայում մտքի ազատության թույլատրման համար, մասնավորապես, նաև այն հարցերում, որոնք վերաբերում են հայերի ճակատագրին:

- Միաժամանակ աջակցել, որ Թուրքիան և Հայաստանը իրենց միջպետական հարաբերությունները նորմալացնեն:

Հիմնավորում. 90 տարի առաջ, 1915թ. ապրիլի 24-ին, Օսմանյան կայսրությունը ղեկավարող երիտթուրքական կուսակցության կողմից Ստամբուլի հայ քաղաքական և մշակութային էլիտան ձերբակալվեց, ուղարկվեց երկրի խորքը և մեծ մասամբ սպանդի ենթարկվեց: Այդ օրն ամբողջ աշխարհում գտնվող հայերի համար դարձավ հիշման օր Օսմանյան կայսրության հայ հպատակների հալածանքների և կոտորածների, որոնք տեղի էին ունենում դեռ 19-րդ դարի հարյուրամյակի վերջին, սակայն ավելի ուժգին իրականացվեցին հետագայում՝ Առաջին աշխարհամարտի ժամանակ: Օսմանյան բանակ զորակոչված հայ զինվորները Օսմանյան կայսրության պատերազմի մեջ մտնելու սկզբնաշրջանում տեղափոխվեցին աշխատանքային գումարտակներ և մեծ մասամբ սպանդի ենթարկվեցին: Կանայք, երեխաները և ծերերը 1915թ. գարնանից ուղարկվեցին մահերթերի, որոնք տեղի էին ունենում սիրիական անապատների միջով: Աքսորվածներից ովքեր ճանապարհին դեռ չէին սպանվել կամ մահացել, այդ ճակատագիրը նրանց հանդիպեց ամենաուշը Դեր էլ Զորի անապատում գտնվող անմարդկային ճամբարներում: Կոտորածներն իրագործվում էին նաև այդ նպատակով կազմավորված հատուկ զորամասերի կողմից: Այդ ձեռնարկների դեմ բարձրաստիճան թուրք պաշտոնյաների դիմադրությունը, ինչպես նաև Օսմանյան պառլամենտից քննադատությունը հանդիպում էր երիտթուրքական ռեժիմի վայրագ մերժմանը: Շատ տարածքներ, որոնցից քրիստոնյա հայերը վտարվել էին, բնակեցվեցին քրդերով և Բալկանյան պատերազմների մուսուլման փախստականներով: Աքսորներից և կոտորածներից տուժեցին նաև այլ քրիստոնյա ազգային խմբերի պատկանողները, մասնավորապես արամեական-ասորական և քաղդեական քրիստոնյաները, սակայն նաև որոշակի մուսուլմանական փոքրամասնություններ: Ըստ անկախ հաշվարկների՝ աքսորներին և զանգվածային սպանդներին զոհ դարձան ավելի քան 1 միլիոն հայեր: Բազմաթիվ անկախ պատմաբաններ, պառլամենտներ և միջազգային կազմակերպություններ հայերի հալածանքներն ու բնաջնջումը բնութագրում են որպես ցեղասպանություն: Օսմանյան կայսրության իրավահաջորդը՝ Թուրքիայի Հանրապետությունը, մինչև այժմ, հակառակ փաստերին, վիճարկում է այն հանգամանքը, որ այդ իրադարձությունները եղել են ծրագրված և որ վերաբնակեցման ենթակա շարասյուներում տեղի ունեցած զանգվածային մահացություններն ու իրագործված կոտորածներն օսմանյան կառավարության ցանկությամբ են տեղի ունեցել: Հայերի հանդեպ թույլատրված դաժանությունը մշտապես արդարացվում էր այն փաստով, որ ինչպես 1878-ին, այնպես էլ 1914-15թթ. շատ հայեր Ռուսաստանի կողմից պայքարել են Թուրքիայի դեմ, և որ առկա է եղել այն վտանգը, թե հայերը նաև Առաջին աշխարհամարտի ժամանակ կհարվածեին Օսմանյան կայսրության թիկունքին: Թուրքական այլ արդարացումներ հիմնվում են թուրքերի դեմ հայերի կիրառած բռնությունների վրա, որոնք ի հայտ են եկել վերաբնակեցման դեմ ցուցաբերված զինված դիմադրության ժամանակ: Թուրքական դիրքորոշման արդարացման համար օգտագործվում են նաև մինչև 1980-ական թվականները հայերի կողմից թուրքերի դեմ իրականացված ահաբեկչությունները: Թուրքիայում կոտորածների և աքսորների չափը ընդհանուր առմամբ շարունակ նվազեցվում և էապես վիճարկվում է: Թուրքական այդ դիրքորոշումը հակասում է հաշտության գաղափարին, որը ներկայացնում է Եվրոպական միության արժեքային համակարգը: Դեռ այսօր էլ Թուրքիայում պատմաբանները հայերի հալածանքների և սպանդի պատմության քննության ժամանակ ազատ չեն և չնայած մինչայժմյան պատժելիության մեղմացմանը, առաջվա պես մեծ ճնշման են ենթարկվում: Գերմանական կայսրությունը՝ որպես օսմանյան կայսրության հիմնական ռազմական դաշնակիցը, նմանապես խորը կերպով ներառված էր այդ իրադարձություններում: Գերմանական կայսրության ինչպես քաղաքական, այնպես էլ ռազմական ղեկավարությունը սկզբից ևեթ իրազեկված էր հայերի հալածանքների և սպանդի մասին: ԱԳՆ-ի փաստաթղթերը, որոնք հենվում են օսմանյան կայսրությունում գերմանական դեսպանների և հյուպատոսների տեղեկագրերի վրա, փաստագրում են կոտորածների և հալածանքների պլանավորված իրականացումը: Չնայած գիտության, քաղաքական և եկեղեցական շատ գործիչների, այդ թվում քաղաքագետների՝ Ֆիլիպ Շայդեմանի, Կարլ Լիբկնեխտի կամ Մատթիաս Էրցբերգերի և ավետարանական ու կաթոլիկ եկեղեցիների մեծանշանակ գործիչների, ինչպես օրինակ Ադոլֆ ֆոն Հառնակի և Լորենց Վերթմանի թախանձագին դիմումներին, գերմանական կայսրության ղեկավարությունը իր օսմանյան դաշնակցի վրա ազդեցիկ ճնշում չձեռնարկեց: Երբ դոկտոր Յոհաննես Լեփսիուսը 1915թ. հոկտեմբերի 5-ին գերմանական Ռայխստագում ներկայացրեց իր՝ հետազոտությունների արդյունքները, հայկական ողջ թեման գերմանական կայսրության կառավարության կողմից դրվեց վերաքննության ներքո: Գերմանական ռազմական վերաքննության կողմից 1916թ. արգելվեց ու բռնագրավվեց նաև Յոհաննես Լեփսիուսի փաստագրական ժողովածուն՝ «Թուրքիայում հայ ժողովրդի դրության մասին տեղեկագիրը»: Լեփսիուսի կողմից ուղիղ գերմանական Ռայխստագի պատգամավորներին ուղարկված այդ փաստագրական նյութերի օրինակները իշխանությունների կողմից բռնագրավվեցին և միայն պատերազմից հետո՝ 1919-ին, պատգամավորներին հանձնվեցին: Գերմանական կայսրության այդ՝ գրեթե մոռացված վանման քաղաքականությունը ցույց է տալիս, որ պատմության այդ գլուխը Գերմանիայում նույնպես մինչև այսօր բավականաչափ լուսաբանված չէ:

Նյութը գերմաներից թարգմանեց ԱՇՈՏ ՀԱՅՐՈՒՆԻՆ

Նկարում՝ Գերմանիայի դեմոկրատ թուրքերը, ովքեր ընդունում են Հայոց ցեղասպանությունը, բողոք-հուշապահակի կանգնեցին թուրքական դեսպանատան առջև:

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ

1905-1906թթ. հայ-թաթարական ընդհարումների լույսի ներքո

(Սկիզբը՝ «Ուխտ Արարատի» թիվ 3-ում)

Խմորումները հայերի շրջանում. 1905-06թթ. հայ-թաթարական ընդհարումների ընթացքում, արևելահայերի շրջանում, տարածքային կենտրոնացման գաղափար այդպես էլ չձևակերպվեց, իսկ առկա խմորումները միայն թաթարների ազգայնամոլական նպատակների արձագանքն էին:

Հայկական ազգային շարժումը թե՛ Արևելյան և թե՛ Արևմտյան Հայաստանում ծնունդ էր առել թուրքահայ դատից, սնվում էր նրանով և 20-րդ դարի սկզբին շարունակում էր մնալ հայության պայքարի գերնպատակը:

Արևելահայերը ինքնավարության պահանջ չէին առաջադրում ո՛չ պաշտոնական հանրագրերում, ո՛չ ինքնավարականների համագումարում և ո՛չ էլ ժամանակակից ադրբեջանցի ուսումնասիրողների կողմից ծայրահեղ ազգայնական ներկայացվող Դաշնակցության կուսակցության ժողովներում: Փոխարքային ներկայացված հայկական հանրագիրը, որը կազմվել էր 1905թ. աշնանը, Թիֆլիսի ներկայացուցչական ժողովում, պահանջում էր գավառային զեմստվո: «...Մինչեւ գրեթե վերջին պատերազմի (իմա՝ Առաջին աշխարհամարտը) նախօրեակը, հայութիւնը քաղաքական պահանջներ չառաջադրեց Ռուսաստանում եւ ոչ էլ ձեւակերպեց իր հողային պահանջները Անդրկովկասում»,- գրում էր Արտ. Աբեղյանը: «Անդրկովկասեան Հայաստանի գաղափարը մեզնից ընդամենը քսան տարի առաջ (իմա՝ 1907թ. - Թ.Վ.) նոր-նոր էր զարթնում: Նա մինչեւ իսկ՝ որպես անուն, դէռեւս գործածութեան մէջ չէր»: Անգամ Սանկտ-Պետերբուրգում տեղի ունեցած ինքնավարականների համագումարում (1905թ. նոյեմբեր) հայերը, ինքնավարության պահանջ դարձյալ չեն առաջադրում:

Հայերը գտնում էին, որ Այսրկովկասի խաչաձև ու շերտավորված բնակեցվածությունը հնարավորություն չի տալիս ժողովուրդների միջև հստակ սահմանային բաժանում անցկացնել, այդ պատճառով անաչառ Պետական Դումայի ձևավորումն ավելի նպատակահարմար էր, քան ազգային ինքնավար կառավարությունների ստեղծումը: Հայերն Այսրկովկասի նահանգներում, բացի 5 գավառներից՝ Երևանի նահանգի՝ Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի, Էջմիածնի, Թիֆլիսի նահանգի՝ Ախալքալաքի, Գանձակի նահանգի՝ Շուշու գավառներից, ոչ մի տեղ մեծամասնություն չէին կազմում: Այս փաստը հայերի մոտ մտավախություն էր առաջացնում, քանի որ ինքնավար ազգային միավորումների կազմավորման դեպքում, իրենք կշահագործվեին վրացիների ու թաթարների կողմից այն տեղերում, ուր իշխանությունը կանցներ վերջիններիս ձեռքը քանակական գերակայության շնորհիվ: Այդ էր պատճառը նաև, որ հայերը պահանջում էին ոչ թե նահանգական, այլ՝ գավառային զեմստվո:

Փաստորեն, անգամ առաջին ռուսական հեղափոխության ժամանակ հայ քաղաքական միտքը շարունակում էր իր ուշադրության կենտրոնում պահել արևմտահայության խնդիրը: Այսրկովկասյան Հայաստանի գաղափարը ձևավորվեց ավելի ուշ՝ իր դրսևորումն ունենալով նախ ժողովրդի գիտակցության մեջ, հետո միայն գործնականում:

Հայերի մեջ անջատողականությունն ակնհայտորեն ներարկում էր մահմեդականությանը բնորոշ բռնապետությունը: Հայ ազգային գործիչների ծրագրերում մինչև 19-րդ դարի սկիզբը առաջ էր քաշվում Հայոց թագավորության ստեղծման գաղափարը, քանի որ հայերը թուրքահպատակ և պարսկահպատակ էին, այսինքն՝ իսլամի տիրապետության տակ էին: 19-րդ դարի երկրորդ կեսից անջատողականությունը Արևելյան Հայաստանում զիջեց իր դիրքերը, քանի որ արևելահայերը այլևս պարսկահպատակ չէին, այլ՝ ռուսահպատակ, այսինքն՝ գտնվում էին քրիստոնյաների տիրապետության տակ: Իսկ արևմտահայերը շարունակեցին ազատագրական պայքարը, և ինքնավարությունը՝ որպես ազգային իդեալ, ձևակերպվեց Արևմտյան Հայաստանում: Այս իրողությունը, բացի մահմեդականությանը բնորոշ բռնապետությունից, բացատրվում է, թերևս, այն հանգամանքով, որ պետականությունից զրկված հայերի ազգապահպանությունը խարսխվում էր քրիստոնեության պահպանությամբ: Հայտնի է, որ քրիստոնեությունը հայոց մեջ կրոն լինելուց զատ և կրոն լինելուց ավելի, էթնիկ հատկանիշ էր: Հայ լինելը, որոշ իմաստով, նշանակում էր քրիստոնյա լինել: Որպես հայ գոյատևելը՝ նշանակում էր նաև գոյատևել՝ որպես քրիստոնյա:

1906թ., երբ Այսրկովկասում հայ-թաթարական ընդհարումները լայն թափ էին ստացել, այնուամենայնիվ, հայերի կողմից ինքնավարության կամ անջատման պահանջ չառաջադրվեց (խոսքը 1906թ. Թիֆլիսում հրավիրված Արևելահայերի առաջին ընդհանուր համագումարի մասին է, որտեղ հայերի ցանկությունները սահմանափակվում էին միայն Ռուսաստանի այլ քաղաքացիների հետ դե-ֆակտո հավասար իրավունքների հաստատման պահանջով):

Ներկայումս ադրբեջանցի հեղինակները հայ-թաթարական ընդհարումների պատճառներից մեկն են համարում հայերի կողմից Այսրկովկասում ինքնավարության հաստատման ձգտումը: Այս մեղադրանքների նպատակը պարզ է՝ արյունալի ընդհարումները որակել՝ որպես հայերի կողմից իրականացվող «էթնիկ զտման» քաղաքականության դրսևորում և մեղքը բարդել հայերի, մասնավորապես՝ Դաշնակցության վրա: Բայց իրականում անգամ Դաշնակցության կողմից այդ խնդիրը՝ որպես մոտակա ծրագիր, չէր ձևակերպվել: Այսպես՝ 1905թ. նոյեմբերին Թիֆլիսում կայացած ՀՅԴ Կովկասյան շրջանային ժողովում, որտեղ քննարկվում էր Այսրկովկասի հայերի համար ստեղծված ծանր կացությունն ու թաթար ազգայնամոլների կողմից ոգեշնչվող անգիտակից թաթարների հարձակումներին դիմակայելու տակտիկան, Վարպետի (Ավ. Իսահակյան) կողմից եղավ հետևյալ առաջարկը. «Աչքի առաջ ունենալով, որ մենք ցրուած ենք եւ ապրում ենք թուրքերի հետ խառն, ...մենք պէտք է դիմենք համախմբման գաղափարին, պէտք է մեր մէջ ցրուած թուրքերին դուրս քշենք, գուցէ եւ նրանց հետ փոխադարձ համաձայնութեամբ՝ գիւղեր փոխանակելով, եւ այդպիսով՝ մի հայկական կոմպակտ մասսա ստեղծել, որը կարողանայ մշակել ու պահպանել իր սեփական կուլտուրան»: Թեպետ, Վարպետի առաջարկը բավականին խելամիտ ու նպատակահարմար էր, որտեղ չկար որևէ թշնամանք կամ ագրեսիա թաթարների դեմ և պաշտպանվեց Շահրիկյանի ու Արմեն Գարոյի կողմից, այնուամենայնիվ, առաջարկը չընդունվեց, (հատկապես՝ դեմ էր Իշխանը) և այն չներառվեց ժողովի կողմից ընդունված բանաձևում:

Այսպիսով՝ Այսրկովկասում մինչ 1905-06թթ. հայ-թաթարական ընդհարումները տարածքային կենտրոնացմանն ուղղված ծրագրեր հայերի և թաթարների շրջանում դեռևս չէին ձևակերպվել, իսկ ընդհարումների ընթացքում դրանք բանաձևվեցին միայն թաթար ազգայնականների կողմից:

ԹԱՄԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԳԱԼՈՒՍՏԸ

Շատ ճանապարհներ ունեինք անցնելիք, դրանցից մեկն էլ արդար պատերազմն էր՝ Արցախի ազատամարտը: Երբ սուր բարձրացնողը ընկնում է սրից՝ մի քայլ մոտենում է հավերժական խաղաղության գալուստը: Արցախյան պատերազմի զինվորները խաղաղության կարապետներ են: Նրանց նվիրումն ու զոհաբերումը, նրանց կռիվը ոչ միայն հանուն հայության ու հայրենիքի էր, այլև՝ հանուն մարդկության առաջընթացի, արդարության և խաղաղության:

Սուրեն Մնացականյանը ծնվել է 1963-ին, Գանձակում: 1967-ին Մնացականյանների ընտանիքը տեղափոխվել է քաղաք Աբովյան: Նա 1980-ին ընդունվել է Ֆիզիկական կուլտուրայի պետական ինստիտուտ: 1984-ին աշխատանքի է անցել ԵՊՀ ֆիզդաստիարակության և սպորտի ամբիոնում, մեկ տարի անց աշխատանքի է տեղափոխվել Աբովյան քաղաքի թիվ 5 և 10 դպրոցներում: Նա իր սաներին տալիս էր ոչ միայն մարմնակրթության, այլև հայրենասիրության ու կյանքի դասեր և պարբերաբար կազմակերպում էր գրական երեկոներ (Սուրենը նաև ստեղծագործում էր), մարզական խաղեր ու մրցումներ:

Արցախյան շարժման առաջին օրերից նա առաջին գծում էր: Կամավոր ազատամարտիկը Գորիսի շրջանի Կոռնիձոր գյուղի երկամյա պաշտպանությունից հետո՝ 1992-ի հոկտեմբերի 3-ին, մեկնեց Լաչին՝ մասնակցելու «մարդասիրական միջանցքի» ազատագրմանը: Անձնվեր մարտիկի ջոկատն ազատագրեց Լաչինի Զաբուղ-Ղոշասու գյուղերի միջև ընկած տարածքը: Անօրինակ ու անկրկնելի դասեր էր տալիս մարտիկներին և իր քաջությամբ, հմտությամբ ու ճշմարտացի դիրքորոշմամբ օրինակ էր ծառայում բոլորին:

Ֆիզիկական զարմանալի ուժի ու կամքի տեր Սուրենը փետրվարյան ցրտաշունչ բքի ու ձյան միջով կարողացավ 8-10կմ տարածքը կտրելանցնել լեռներով՝ իր ուսերին տանելով ծանր վիրավոր հրամանատար Բորիս Հովսեփյանին:

Օմարի ազատագրումից հետո սկսվեց Մարտակերտի պաշտպանության կռիվները. Սուրենը վիրավորվեց թևից: Բայց նույնիսկ վիրավոր՝ չլքեց մարտական դիրքերը. մի ձեռքով շարունակել էր կրակել թշնամու վրա և միաժամանակ խրամատներից շալակած դուրս բերել իր վիրավոր ընկերներին և նաև զոհված մարտիկներին՝ փրկելով թուրքերի հետագա անմարդկային խոշտանգումներից: 1994թ. ապրիլի 25-ին Վերին Չայլու և Թալիշ գյուղերի միջև ընկած բարձունքներում, մարտական գործողությունների ժամանակ, ընկավ Սուրեն Մնացականյանը:

Վերևում՝ ձախից երկրորդը Սուրեն Մնացականյանն է:

Ուսուցիչ-մարտիկ էր: Պատերազմի դաշտում էլ մնաց՝ որպես ուսուցիչ. ժամանակ գտնելով՝ նամակ էր գրում իր սաներին. «Գիտե՛ք, գլխավորը կյանքում սովորելն է՝ իսկական լիարժեք ուսումը, այլ ոչ թե սովորել ցուցադրելը, ձևանալը: Սովորող, գրքերի վրա տքնող մարդու ուղեղը ճկուն է դառնում, շատ հեշտ ու ամբողջապես է «մարսում» ցանկացած տեղեկություն, գործ ու տեսություն: Կրթված, գիտելիքների մեծ պաշար ունեցող, արվեստ ու մշակույթ սիրող մարդու հետ բոլորը շուտ մերվում ու մտերմանում են: Նրանք, անգամ կռվելիս, մարդ (մա՞րդ) սպանելիս չեն կորցնում մարդկային կերպարանքը, չեն մորթում, խոշտանգում, ծանակում թշնամուն: Այո՛, սպանում են, քանի որ հող են պաշտպանում և սպանելիս ու սպանելուց հետո էլ մրմնջում են անդադար՝ «Մեղա՜ Տեր... »: Սովորե՛ք, իմ անուշիկնե՛ր, թող ձեր դատավորը մարդը չլինի, այլ՝ միայն Աստված»:

«Եթե ես լինեի խաղաղության դեսպան...» շարադրությունում Սուրենի դուստրը՝ Լիլիթը (նա մանկահասակ էր, երբ հոր մահվան բոթն առավ) գրել է. «...Ես պատրաստ եմ հայտնվել պատերազմի դաշտում ու այնպես անել, որ զենքերը ծաղիկներ դառնան, հրետանին՝ անտառ, ռումբերը՝ օդապարիկներ...»:

Ներկայացնում ենք Սուրեն Մնացականյանի բանաստեղծություններից երկուսը:

Ճերմակ ամպերը երկնքում լազուր
Ջերմանում են պերճ արևի սիրով,
Սահում են դանդաղ ու շոյում են լուռ
Լեռան գագաթը պիրկ ու անխռով:
Ինչո՞ւ ամպերը լալիս են միայն
Ու չեն ծիծաղում:



ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՀԵԼՈՒ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՋԱՏՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՉԷ

Հարցազրույց Ջավախքի երիտասարդական մարզամշակութային միության (ՋԵՄՄ) նախագահ Վահագն Չախալյանի հետ:

- Ե՞րբ և ինչո՞ւ որոշեցիք ստեղծել ՋԵՄՄ-ը:

- 2000-2001 թվականները ճգնաժամային էին Ջավախքի և ջավախահայության համար: Երևանում 2000-ին ակցիա կազմակերպեցինք. նամակ գրեցինք վարչապետին, սակայն՝ ապարդյուն: Հասկացանք, որ Ջավախքի հարցը Ջավախքում պետք է լուծվի և ստեղծեցինք այս միությունը: 2001-ի ապրիլին ժողով գումարեցինք, որոշեցինք նշել ապրիլի 24-ը, որը հանդիսացավ Ջավախքի երիտասարդական մարզամշակութային միության հիմնադրման օրը:

Միության անունն արդեն հիշեցնում է, որ այն մարզամշակութային է: Չնայած բոլորը մեզ համարում են քաղաքական կազմակերպություն, բայց մենք ձգտում ենք միջոցառումներով պահպանել մեր ազգային ինքնությունը: Առաջնորդվում ենք «Հանուն Ջավախքի հայապահպանության» սկզբունքով: Մեր երազանքն է, որ Մեծ Հայքի Գուգարաց նահանգի Ջավախք աշխարհը (երիտասարդության շրջանում՝ «Քաջատուն») չկորցնի իր հայկական դեմքը:

- Ի՞նչ դժվարությունների եք հանդիպել:

- Սկզբնական շրջանում ամենամեծ դժվարությունը այն էր, որ մեր միությունը չէր ընդունվում ժողովրդի կողմից և, որոշ ուժերի քարոզչության արդյունքում, մեզ ընդունում էին որպես անջատողականներ, և փա՜ռք Աստծո, ժամանակի ընթացքում ամեն ինչ հաղթահարվեց. բոլորը հասկացան, որ մարդավարի ապրելու և ազգային ինքնությունը պահելու ցանկությունը երբեք ոչ մի երկրում անջատողականություն չի համարվել և չի համարվում: Իսկ դժվարությունները ամենօրյա են, հիմնականում՝ կազմակերպչական:

- Ներկայացրեք Ջավախքի այսօրվա խնդիրները:

- Ջավախքում կրթօջախները անմխիթար վիճակում են, մանկապարտեզներ գոյություն չունեն (չհաշված ռուսական մանկապարտեզները): Ծանր է դպրոցների վիճակը, երիտասարդ մասնագետներ չկան: Ինչպես գիտեք, «Հայ ժողովրդի պատմություն» առարկան արգելվում է դասավանդել: Հայ երիտասարդությունը հոգեբանական ճնշվածություն է զգում: «Հայոց լեզու» դասավանդող ուսուցիչը ստանում է 50-60 լարի (վրացական դրամ), իսկ «պետական լեզու»՝ վրացերեն դասավանդող ուսուցիչը՝ 500-700 լարի:

Այս ճնշումներին ավելացել է վերջերս սահմանված անհեթեթ օրենքը, ըստ որի՝ դպրոցները «օտար երկիր» էքսկուրսիա գնալու համար պետք է ստանան կրթության և գիտության նախարարության թույլտվությունը: Փաստորեն, արգելք է դրված հայ դպրոցականին ուխտի գնալ Հայաստան:

Վիճակը նույնն է նաև բարձրագույն հաստատություններում: Վերջերս բացված Ի. Ջավախիշվիլու անվան Թբիլիսիի պետական համալսարանի Ախալքալաքի մասնաճյուղի որևէ ֆակուլտետ տեղաբնակ հայ երիտասարդը ընդունվում է մեծ դժվարությամբ և զրկված է արտոնություններից, իսկ տարածաշրջանում ապրող վրացի երիտասարդը մեծ արտոնություններ ունի: Թբիլիսիի փոխքաղաքապետը խոստացել է, որ եթե վրացի երիտասարդները Ախալքալաքում ամուսնանան, տեղում կստանան աշխատանք և բնակարան: Վրացերեն լեզվի չիմացության պատճառով աշխատատեղերի խնդիր է առաջանում: Ջավախքում ոչ միայն չկա ազգային իշխանություն, այլև՝ գործող իշխանություն: Այս պատճառով, կարևորելով եկեղեցու դերը, նրա կողքին ենք, և այս հարցում իր ակտիվ մասնակցությունն է ցուցաբերում մեր երիտասարդությունը:

Ջավախահայությունը հասել է հուսահատության եզրին, սակայն պատահական չէ, որ վերջին ցույցերը մեծ ոգևորություն առաջացրեցին ժողովրդի մոտ: Համոզված ենք, հայ-վրացական հարաբերություններում այսօր ամենաթույլ օղակը հանդիսացող Ջավախքը, չնայած այս տխուր ու ծանր պատկերին, հզորանալու է տնտեսապես, հոգևոր, մշակութային արժեքներով և դառնալու է երկու երկրների հարաբերություններում կարևորագույն օղակ: Ի վերջո Վրաստանի կառավարությունը դա հասկանալու է և ոչ թե խանգարելու է, այլ՝ աջակցելու:

- Ձեր մաղթանքը հայ ժողովրդին:

- Երբեք պետք չէ զգոնությունը կորցնել, քանի որ թշնամին մեր կողքին է և չի դադարեցրել հայակործան գործունեությունը: Մաղթում եմ միասնություն, կամք, որպեսզի կարողանանք միահամուռ պայքարել:

ԼԻԼԻԹ ՄԱԿԱՐՅԱՆ

ՎՐԱՑԻՆԵՐԸ, ՆԻՆՈՇՄԻՆԴԱՅԻՆԵՐԻՆ ԲԱՐՁՐ ԳՆԵՐ ԽՈՍՏԱՆԱԼՈՎ, ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ԵՆ ՎԱՃԱՌԵԼ ԻՐԵՆՑ ՏՆԵՐԸ

Ջավախքի Նինոծմինդա քաղաքի նորաբաց վրացական որբանոցի հարևանությամբ գտնվող տների հայ բնակիչներին անհամեմատ բարձր գներով առաջարկում են վաճառել իրենց տները: Արձանագրված փաստն արդեն մտահոգություն է առաջ բերել տեղաբնակների շրջանում:

Փաստորեն, Նինոծմինդա քաղաքում ուրվագծվում է ժողովրդագրական պատկերի ի վնաս հայերի փոփոխման քաղաքականությունը: Նախ՝ տեղի հայ մանուկների ձեռքից խլվել է մանկապարտեզը և այն տրամադրվել Վրաստանի այլ շրջաններից բերված վրացի երեխաներին, ապա՝ սկսվում է տների գնման և այնտեղ վրացիներ բնակեցնելու գործընթացը:

Նինոծմինդացիները մտավախություն ունեն, որ եթե բարձր գին առաջարկելով վրացիներին, այնուամենայնիվ, չհաջողվի գնել որբանոցին հարող տները, նրանք կդիմեն ուժի պարտադրման մեթոդին:

ԿԱԼԱՅԱՆ. ՄԵՆՔ ԵՐԱՆՔԻՆ ՀԱՆԳԻՍՏՆԵՐԻՑ ԵՆՔ

- «Կիլիկիա» նավն այսօր ի՞նչ խորհուրդ ունի հայի համար, ինչպե՞ս կբացատրեք դա:

- Ցանկացած հայի մեջ նստած է ծովից ծով Հայաստանը, երևի գենետիկ հիշողություն է դա, շատերի համար՝ նույնիսկ բնականոն: Ունենք նաև Կիլիկիա հասկացությունը, որն ամեն հայի մեջ նստած է՝ որպես երազանք: Ինչքան էլ խոսենք, կորստի բեռը մեզանից յուրաքանչյուրի հետ է: Ինչպես Արցախի ազատագրման հարցն էր երազանք, որն ի վերջո իրականություն դարձավ: Կիլիկիայի առումով՝ այդ երազանքը ևս ժամանակին կիրականանա:

- Ո՞վ հղացավ նավի կառուցման գաղափարը և ինչո՞ւ այն կոչվեց «Կիլիկիա»:

- Նավի կառուցման գաղափարը խմբակային էր՝ ծովային հետազոտությունների Այաս ակումբինը: Ակումբի մի քանի տղաներն էին, որ այն ժամանակ այդ միտքն արտահայտեցին, բայց առաջիններից մեկն Արմեն Ղազարյանն էր: Ամեն դեպքում հայկական նավով օվկիանոս դուրս գալու գաղափարը խմբակային էր: Երբ գաղափարը ծնվեց, մտածեցինք, որ մի երեք-չորս տարի կտևի այն իրագործելու համար, բայց անցավ 20 տարի: Նավն անվանելու երկու տարբերակ կար՝ Այաս կամ Կիլիկիա: Ի վերջո ընտրվեց Կիլիկիա, որովհետև ճանաչողության տեսակետից Այասը (չնայած որ Կիլիկիայի խոշոր նավահանգիստներից մեկն է եղել) հավելյալ բացատրություն էր պահանջում:

- Հերթական նավարկության ժամանակ ալիքները ո՞ւր տարան Ձեզ:

- Նավարկության երկրորդ փուլը մեզ տարավ Անգլիա (թեև նախատեսված էր Ամստերդամ), որտեղ ունեինք ընկերներ և աջակցողներ: Երրորդ փուլը վերադարձն է լինելու Անգլիայից Հայաստան՝ Սևանա լիճ, որտեղ էլ նավը մի քանի տարի գործող թանգարան կլինի:

- Ովքե՞ր են անձնակազմի անդամները, ինչո՞ւ հենց նրանք:

- Հիմնականում ընտրվել են այն տղաները, ովքեր կառուցել են նավը: Երկար ժամանակ ենք միասին աշխատել. միասնականության գաղափարը մեզանում ամուր հիմքերի վրա է դրված: Նավակազմի ընտրության հարցում մենք չենք սխալվել: Այս անգամ տարբեր պատճառներով փոխեցինք երկուսին:

- Այս ճամփորդության հիշարժան դեպքը ո՞րն է:

- Երբ Ջիբրալթարից դուրս էինք եկել Թրաֆալգար, այնտեղից էլ՝ օվկիանոս, Սևանա լճից և Արցախից տարած ջուրը լցրեցինք օվկիանոս: Բառացիորեն կես ժամ անց ուժեղ փոթորիկ սկսվեց, մեր խոհարարը ներքևից կատակով ձայն տվեց. «Տղանե՛ր, գուցե ջրի փոխարեն թթի օղի՞ են ուղարկել կամ էլ օվկիանո՞սն է հարբել»:

Կարելի է հիշել նաև, թե ինչպես Իտալիայում՝ Տորոնտոյի հրվանդանի մոտ, փոթորկի մեջ ընկանք, թիակը վնասվեց: Լիպարի կղզիների գործող հրաբուխը տեսանք, շատ տպավորիչ էր: Ազդեցիկ էր Իսպանիայի Մահվան ափը՝ ժայռոտ էր, մառախլապատ և վտանգավոր:

Մեր ընկերներից մեկը ծառայում էր անգլիական առագաստանավի վրա, ռադիոկապով կապվեցինք և հանդիպեցինք ծովում. երկու առագաստանավ՝ իրար հանդիպակաց, լուսադեմին՝ժամը հինգին. Լամանշում հնչում էր հայերենը:

- Կիլիկիայի դրոշն ու Հայոց եռագույնը ծածանելով, երբ նավը մոտենում էր կառամատույցին, ի՞նչ վերաբերմունքի էիք արժանանում օտարների կողմից: Մի պետություն՝ երեք դրոշ, կա՞ր դրա բացատրության անհրաժեշտությունը:

- Մենք հպարտ էինք: Հայոց եռագույնը, Արցախի և Կիլիկիայի դրոշները օվկիանոս դուրս եկան: Բացատրություն անպայման տալիս էինք, ոչ բոլորը գիտեին, թե Հայաստանը որտեղ է: Շատ հանգիստ բացատրում ու պատմում էինք Հայաստանի, Արցախի, Կիլիկիայի մասին, որ մարդիկ իմանան ու ճանաչեն: Ասեմ, որ եթե չլինեին դրոշները, երևի այդքան մեծ հետաքրքրություն չառաջանար:

- Զորի Բալայանը Ձեր կողքին էր, դարձա՞ք նրա հերթական գրական հերոսը:

- Մեր բախտը բերեց, որ Զորի Բալայանը մեզ հետ էր, ոչ բոլորին է հաջողվում նավակազմի մեջ ունենալ գրող՝ ճամփորդությունը հավերժացնող: Մենք դա գնահատում ենք: Շուտով ճամփորդության երկրորդ գիրքն է լույս տեսնելու՝ գրված ականատեսի աչքերով և գեղեցիկ նկարներով ձևավորված:

- Նավարկության ժամանակ ինչպե՞ս էր անցնում Ձեր օրը:

- Չորս ժամը մեկ հերթափոխ էր լինում: Նավն անընդհատ օրորվում էր և հարաբերական հան-

գիստ հնարավոր չէր: Նավի վրա անգործ մարդ չկար. բայց տղաներից շատերը օրագրեր ունեին: Զորի Բալայանը գիշեր-ցերեկ չէր հեռանում գրամեքենայից: Նա միակ մարդն էր, որ տախտակամածի վրա կանգնած՝ հաճելի եղանակին կամ փոթորկի պահին, ասում էր. «Նավապե՛տ, հրաման տուր, անցնեմ գործի»:

- «Կիլիկիա» նավը ունի՞ պետական աջակցություն:

- Այո՛, առանց պետական աջակցության չէինք կարող ձեռնարկել երկու այսպիսի մեծ ճամփորդություն: Բացի ֆինանսական աջակցությունից, ունեինք դիվանագիտական աջակցություն Հայաստանի արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանի կողմից: Նրա հրամանով բոլոր երկրների դեսպանները օգնում էին մեզ՝ կազմակերպելով բարձր ընդունելություն և լրատվամիջոցների հետ հանդիպում: Լավ էինք զգում, երբ մեզ բարձր մակարդակով էին ընդունում:

- Վերադարձին ակնկալո՞ւմ էիք նախագահի հետ հանդիպումը:

- Մենք ծովում արդեն գիտեինք, որ վերադառնալու երկրորդ օրը հանդիպում է նշանակված ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ: Այդպես էլ եղավ: Նախագահի կողմից բարձր գնահատանքի արժանացանք: Նա խոստացավ, որ «Կիլիկիա»-ն կշարունակի իր ճամփորդության երրորդ փուլը:

- «Կիլիկիա» նավի նավարկությունը համաշխարհային օվկիանոսի ալիքների վրա կարելի՞ է համարել հայի ազգային ոգու արթնացում:

- Համարձակություն չունեմ, որ լիարժեք ասեմ այո՛, բայց շատ կուզեի, որ այդպես լիներ: Մենք ամեն ինչ արեցինք, որ Հայաստանի դրոշն ու պատիվը բարձր պահենք: Մեր օրինակով ցույց տվեցինք, որ ամեն ինչ հնարավոր է: Եվ եթե մարդն ինչ-որ նպատակ է դնում, ապա հասնում է:

Մենք մեր երազանքի ճանապարհին ենք, մի մասին (ունենալով ազատագրված Արցախ) արդեն հասել ենք: Ես համոզված եմ, որ տարիներ անց կգա այն օրը, երբ Կիլիկիան նորի՛ց մերը կլինի:

ՆԱՆԵ ՍԵՎԱՆ

ԱՍՏՎԱԾ ՏՎԵԼ Է, ԵՎ ԵՍ ՎԵՐԱԴԱՐՁՆՈՒՄ ԵՄ

Օրերս Հայ թատերական գործիչների միության Դերասանի տանը տեղի ունեցավ «Անվանի արվեստագետը ձեզ հրավիրում է զրույցի» խորագրով ցերեկույթ՝ նվիրված ճանաչված դերասանուհի, բեմադրիչ, թատերագիր և պատմավիպասան Աննա Պետրոսյանի ծննդյան 70-ամյա հոբելյանին: Նրան շնորհավորելու էին եկել ընկերներն ու մտերիմները: Յուրահատուկ ցերակույթ էր՝ առանց երաժշտական մասի: Մեր սիրելի արվեստագետը... խոսում էր իր և իր ստեղծագործությունների մասին:

- Անելկայի (այսպես են կոչում մտերիմները) կյանքը,- շնորհավորական իր խոսքում ասաց արձակագիր Ռուբեն Մարուխյանը,- եղել է նվիրում արվեստին: Ինչով էլ նա զբաղվել է, ինչ էլ արել է, արել է սիրով՝ ամբողջ հոգով նվիրված: Նա պատմեց, թե ինչպես Լենինականի 1988-ի երկրաշարժից հետո՝ արհավիրքի վերքերը դեռ չսպիացած, դպրոցի դահլիճում տեսնում է երեխաների բեմականացում, որտեղ խոսվում էր մարդու հոգու հզորության մասին: Քաղաքն ավերվել էր, և այդ քաղաքի մեջ մեկը կանգնած բարձրաձայնում էր. **«Մե՛նք կանք, մե՛նք կործանված չենք, մե՛նք ապրում ենք, մե՛նք հզոր ենք»...**

Տիկին Աննայի բոլոր ստեղծագործությունները այդ են ասում:

- Աստված տվել է ինձ, և այդ տվածը ես պետք է վերադարձնեի: Ես արդեն վերադարձրել եմ՝ սիրով, առանց մտածելու, թե փոխարենն ինչ պիտի ստանամ, քանի որ արդեն ստացել եմ: Աստված ինձ տվել է ստեղծագործելու ունակություն և դա այնքան մեծ, այնքան հրաշալի ու անընդգրկելի մի բան է, որ դրանից հետո անհնար է մեկ ուրիշ բան ցանկանալ,- ասաց հոբելյարը: Նա պատմեց, թե ինչպես է «Առասպելի դպրաթատրոնի» պատմությունները (նա դպրաթատրոնում իր սաներին պատմում էր այն, ինչ գիտեր Հայոց պատմությունից) վերածել 6 հատորյակի՝ «Բոլոր ժամանակների Հայաստանը» (առաջին մասերը ներդիրի տեսքով տպագրվել է «Վասն հայության» պարբերականի 1-ից 100 համարներում- խմբ.), «Մոզ քաղաքի կործանումը», «Եղերապատում» և այլն:

Աննա Պետրոսյանին՝ որպես նվեր, բեմադրվեց «Արշիլ Գորկուց» մի հատված: Մենք էլ մեր

ամսագրի՝ «Ուխտ Արարատի» համարներից հանձնեցինք նրան, որն անակնկալ ու հաճելի նվեր էր:

Ցերեկույթը եզրափակեց Գաբրիել Սունդուկյանի անվան դրամատիկական թատրոնի ռեժիսոր Վահե Շահվերդյանը. «Իմ կարծիքով Աննա Պետրոսյանը բացառիկ երևույթ է հայ մշակույթում, բեմում, արվեստում և հայ գրականության մեջ: Աննա Պետրոսյանի նման արվեստագետի կարիք մեր ժողովուրդը շատ ունի և ունենալու է: Նա կին է, որ ոչ մի որպե հանգիստ չունի, որի միտքը անընդհատ պրպտում է, ստեղծագործում»:

ՄԱՐԻՆԵ ՄԱՄՅԱՆ

ԱԶԳԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԿՍՎՈՒՄ Է ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԻՑ

- Գործարար լինելը արդյո՞ք Արմեն Ստեփանյանի մանկության երազանքն էր:

- Նախ և առաջ, ես արվեստագետ եմ՝ նկարիչ (սովորել եմ կրթական մի շարք հաստատություններում), շուտով թեկնածուական ատենախոսություն կպաշտպանեմ: Նկարիչների միության անդամ եմ: Լինելով նկարիչ՝ ինձ համարում եմ արվեստի մարդ: Արվեստը ստեղծագործական աշխատանք է: Ունենալով հետաքրքրություն բիզնեսի և քաղաքականության ասպարեզում՝ դրանցով նույնպես զբաղվում եմ՝ դրանք ևս համարելով ստեղծագործական աշխատանք: Բիզնեսը ինքնին ստեղծագործություն է և արվեստի պես պիտի ստեղծագործես՝ կամ լավ, կամ վատ: Նույնն էլ քաղաքականության մեջ է: Չնայած որոշ կուսակցություններ սահմանափակվում են նեղ շրջանակի մեջ (իսկ այսօրվա քաղաքական գործիչը պետք է լայն տեսադաշտ ունենա): Ես սիրել եմ բիզնեսը, որովհետև այն ինձ համար նաև ստեղծագործական աշխատանք է: Դեռ պատանի տարիքից մտածում էի, որ նկարիչը պետք է սոված և աղքատ լինի, որ լավ ստեղծագործի, բայց դա այդպես չէ: Նկարիչը Խորհրդային Միությունում չէր կարող հարուստ լինել, իսկ առանց գումարի՝ չէր կարող զբաղվել բիզնեսով: Բիզնեսը կարևոր բաղկացուցիչ մաս է կազմում, որպեսզի արվեստն անկաշկանդ լինի:

- Քաղաքական Ձեր հայացքները մինչ անկախությունը, որ ունեիք, փոխվե՞լ են արդյոք:

- Խորհրդային Միության տարիներին ես չէի զգում Հայաստանը, չէի ընկալում հայրենիք հասկացությունը: Ինձ համար դժոխային էր այդ երկիրը. դեռևս դպրոցական տարիքում մտածում էի, թե ինչպես պիտի փախչեմ արտասահման… Ես իմ ապագան այստեղ չէի տեսնում: Փա՛ռք Աստծո, եղավ անկախություն, որի ջատագովներից մեկն էլ ես էի, և ինձանում ամեն ինչ փոխվեց. զգացի, որ ունեմ հայրենիք, և պետք չէ փախչել: Գիտեմ, որ Հայաստանի ապագան նաև ինձանից և ինձ նման մարդկանցից՝ գործարարներից է կախված: Սա մեր հողն է, այստեղ է մեր տունը և մենք պետք է շենացնենք մեր երկիրը:

- Ինչո՞ւ մտաք ՌԱԿ, ո՞րն էր պասիվ դիրքի անցնելու պատճառը:

- Ես եղել եմ ու կամ ռամկավար: Որպես արվեստի և բիզնեսի մարդ՝ զբաղվում եմ նաև քաղաքականությամբ: ՌԱԿ-ի գաղափարներն ինձ հոգեհարազատ էին, անցա նրա շարքերը, որովհետև ես ո՛չ հեղափոխական էի, ո՛չ էլ սոցիալիստ: Մնում էր լիբերալ-դեմոկրատականը, որը մշակույթի ազատական գաղափարների լիբերալ արժեքների ջատագովն էր: Սա էր ՌԱԿ-ի շարքերը համալրելու իմ խնդիրը: Հայաստանում գործող ՌԱԿ-ը համալրված էր նույն կարիերիստ գործիչներով, ինչպես մյուս կուսակցությունները: Չնայած Սփյուռքի ջանքերին, որ շատ էր ուզում ՌԱԿ-ը դառնար «իրոք» կուսակցություն, ցավոք, այդպես էլ չդարձավ: Ես հասա մինչև փոխատենապետի պաշտոնի, բայց տեսնելով կուսակցության ներսում առաջացած ճահիճը, տիղմը, որոշեցի անցնել պասիվ դիրքերի: Ես մի անգամ արդեն երդում եմ տվել այդ կուսակցությանը և մինչև կյանքիս վերջ ռամկավար եմ մնալու: Սփյուռքի և Հայաստանի ՌԱԿ-երը շատ տարբեր են: Այն Հայաստանում, որպես կուսակցություն, դեռ չի կայացել: Հույս ունեմ, որ մի օր կկայանա, և ես իմ լուման կներդնեմ այնտեղ:

- Աշխատանքի բերումով երիտասարդներն են Ձեզ շրջապատում, այսօր երիտասարդությունը դեպի ո՞ւր է գնում:

- Երիտասարդներով շրջապատված լինելը լավ է. միշտ նոր մտքեր են արտահայտում, թարմ ուժ են: Շփվում եմ նաև տարեցների հետ. նրանք ունեն կյանքի փորձ և փիլիսոփայություն: Մեր երիտասարդությունը գնում է դեպի փայլուն ապագա: Նրանց մեջ տեսնում եմ շատ տաղանդավորների, որոնք, ի տարբերություն մյուս ազգերի, կազմում են երեսուն տոկոս: Այլ հարց է, որ այդ բուրգը դեռ չի ձևավորվել. երկրաշարժ, պատերազմ… Պարզապես ժամանակ է պետք, իսկ մեր խնդիրը այն հնարավորինս կրճատելն է:

Երիտասարդին հայրենասիրություն պետք է ներարկենք զգույշ: Քարոզենք ազգասիրություն այնպես, որ չունենանք ազգայնամոլություն: Քաղաքացին առաջին հերթին պետք է հարգի իր պետությունը: Մենք ունենք պետություն և միատար ազգ ենք: Սա մեր հողն է, որ կոչվում է հայկական հող, և պետք է հայկական էթնոսը պահպանենք: Ազգասիրությունը սկսվում է պետականության գաղափարից, որովհետև ազգի կազմակերպման բարձրակետը պետությունն է: **Ես հպարտ եմ, որ հայ եմ և ուզում եմ, որ իմ շրջապատն էլ հպարտանա:** Պատմականորեն սա եզակի դեպք է, որ մենք ունենք ամուր պետություն, երկիր: Եվ սա հրաշք է:

- Ձեր կարծիքով Հայաստանի տնտեսական դաշտում կա՞ դրական տեղաշարժ:

- Ես կասեի, որ Հայաստանում ոչ թե տնտեսական շարժ, այլ բավականին մե՛ծ տեղաշարժ կա: Սխալ հարցադրում է, որ եթե կա, ինչո՞ւ ժողովրդի վիճակը չի բարելավվում: Գործընթացներ կան, որ չեն երևում. շատ անգամ պետական այրերը չեն կարողանում ճիշտ բացատրել, և ոչ ճիշտ քարոզչություն է գնում: Մեծ տեղաշարժեր ենք կատարել, չնայած որ շատ-շատերը դա չեն ուզում ընդունել, տեսնել ու լսել:

- Շփումը օտարազգի գործարարների հետ հե՞շտ է:

- Այո՛, հեշտ է և մեծ առավելություն: Մենք՝ հայերս, բազմակողմանի զարգացած ազգ ենք: Օտարազգի գործարարներն ունեն որոշակի միջազգային կանոններ, մենք ունենք մտքի ճկունություն: Նրանք որոշակի դիրքի են հասել շնորհիվ այդ կանոնների, մենք՝ հայերս, դա դեռ չենք ընկալում և շատ անգամ խնդիրներ ենք ունենում:

- Ո՞րն է ազգային անվտանգության Ձեր մեկնաբանումը:

- Ազգային արժեքներից մեկն էլ այն է, որ ազգը պետք է կարողանա ապրել հարուստ: Հարստությունը ինքնանպատակ չէ, սա պետության գլխավոր անվտանգությունն է: Եթե հարուստ է ազգն ու պետությունը, այն ապահով է և անվտանգ: Շատ կարևոր է, որ գնահատենք մեր բանակը: Հարուստ լինելով, եթե ամուր բանակ չունենանք և չկարողանանք կռվել, այդ հարստությունը պիտանի չի լինի և շատ հեշտությամբ մեր հարևանների ձեռքը կանցնի:

Ազգային անվտանգությունը բաղկացած է զորքից՝ զենքից, բայց միայն դա չի կարող մեր անվտանգությունն ապահովել: Եթե չունենանք պետական կառույց, մեր ազգի կեցությունը չի բարելավվի: Մենք բարեկեցիկ կյանքով պիտի ապրենք մեր հողում: Զենքն ու միտքը մեր անվտանգության կարևոր բաղադրիչներն են:

Ասում են՝ ամեն հայ թագավոր է, ես դրանից միայն ուրախանում եմ, մենք անհատների ժողովուրդ ենք, դա է մեր բարձրագույն արժեքը:

Զրույցը վարեց ՆԱՐԻՆԵ ԱՎԱԳՅԱՆԸ

ՓԱՓԱԳՍ Է՝ ՊԱՆԴՈՒԽՏՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՌՆԱՆ...

Ամէն մարդ աշխարհի վրայ ունի միայն մէկ հայրենիք: Ես ունեմ ոչ թէ «պարզ» հայրենիք, այլ՝ Մեծն Հայրենիք, որուն ոչ մի երկիր չի նմանիր, եւ կը կոչուի Հայաստան: Այն սփյուռքահայը, որ կեանքին մէջ Հայաստան չէ այցելած՝ շատ բան չէ տեսած հայութենէն: Ամէն հայ պարտական է Հայաստան այցելել, որովհետեւ եթէ պատերազմի դաշտերը եւ սրբաւայրերը սեփական աչքերով չի տեսնէ, շատ բան կորսնցուցած կ'ըլլայ:

Ես Հայաստան այցելեցի կարճ ժամանակով, սակայն զգացումներս, որ ունեցա Արարատը տեսնելու ատեն, բացառիկ էին. արդէն նկարներով իսկ արիւնիս մէջ մուտք գործած էր այս Սուրբ լեռը: Յենց Արարատը տեսայ, աչքերս արտասուքով լեցուեցան... Չեմ կրնար չյիշել, հիւրանոցը, որ զատած էի Արարատին կողմը չէր նայեր, նախընտրեցի փոխել հյուրանոցը եւ երկու համարանոց սենեակ ստանձնել՝ Արարատը ամէն օր, ամեն որպէս տեսնելու համար: Ամէն օր՝ առտու ժամը 6:30-ին, կ'արթննայի, որ տեսնեի Արարատը...

Եկեղեցիները, որ այցելեցի (սրբավայրերը միայն գիրքերով կամ նկարներով տեսած էի), չէի հաւատար, որ աչքերովս կը տեսնէի, իսկ յուշակոթողները, ինչպէս՝ Սարդարապատ, Ծիծեռնակաբերդ, մեծ տպաւորութիւն ձգեցին վրաս, Ծիծեռնակաբերդը մեծ դեր ունի եւ ունենալու է Հայկական ցեղասպանութիւնն ընդունելու համար, որովհետեւ այնտեղ շատ բաստեր կան...

Հայաստանը դրական մեծ ազդեցութիւն ձգեց վրաս, չեմ կրնար կեանքս շարունակել առանց Հայաստանի, որ տարին անգամ մը այցի չգամ: Կ'ուզեմ աշխատել եւ հոս ապրել՝ հայրենիքիս սուրբ հողին վրայ: Բայց տնտեսական վիճակը վատ է, եթէ մէկը գործ չունենայ Հայաստանի մէջ, շատ դժուար կ'ըլլայ հոս ապրիլը: Կարող եմ աշխատանք ստեղծել Հայաստանի մէջ իմ մասնագիտութեամբ, այդ ժամանակ կը թողնիմ ամէն ինչ եւ կուգամ ապրելու Երեւանի մէջ կամ Սեւանայ լճին մօտ կամ ուր որ ըլլայ, կարեւորը՝ Սուրբ հողին վրայ:

Ամէն երկիր ունի իր դժուարութիւնները, եւ Հայաստանն ալ ունի, բայց ոչ մին ազդեցութիւն կամ տպաւորութիւն չի ձգեցին վրաս: Եթէ մեռնեմ, հարց չունեմ, որովհետեւ դրախտ կարճ ժամանակի համար ապրեցայ: Այդ շրջանը, որ Հայաստան պտտեցայ եւ Սուրբ տեղերը, պատերազմի դաշտերը, յուշակոթողները, Արարատը տեսայ, արդեն ինքնին դրախտ է:

«Ազատ ու անկախ Արցախը ողջունում է ձեզ», երբ Արցախ մտնելէս առաջ կարդացի, այնպիսի ուրախութիւն զգացի, որ բացատրութիւն չունի...: Բայց առաջին բանը, որ մտածեցի, զոհուած եւ կենդանի մարտիկներուն մասին էր, որովհետեւ ես ուրախութեան մէջ էի տեսնելով, սակայն իրենք պատերազմած էին, զոհուած եւ վիրաւոր, այսինքն՝ կեանքերնին նուրիած մայր հողին...

Կը հաւատամ, որ մօտ ատենէն պիտի վերադառնամ Հայրենիք եւ փափագս է, որ տնտեսական վիճակը բարելաւուի, եւ հայ պանդուխտները վերադառնան...

Չի մոռանալով մեր գրաւուած հողերը, եթէ ետ վերադարձնենք, կունենանք մեր Պատմական Հայաստանը, որ համայն հայութեան երազանքն է եւ ոչ մէկ ճիգ պետք չէ խնայել՝ ետ վերադարձնելու մեր հողերը (մինչեւ Կիլիկիա) եւ ամէն մէկ հայու պարտքն է իր կարելի եղածին չափ օգտակար ըլլալ՝ համայն հայութան երազը իրականացնելու...

ՄԿՕ ՕՏԱՊԱՇԵԱՆ
Պեյրութ, Պուրջ Համմուդ, Երեւան

ԼՂՀ-Ն ՈՐԵՎԷ ՓՈՒԼՈՒՄ ԿԱՆՑՆԻ ԻՐ ՍԵՓԱԿԱՆ ՏԱՐԱԴՐԱՄԻՆ

ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար Սպարտակ Թևոսյանը «Մեդիամաքս» գործակալությանը տված հարցազրույցում ասել է, որ ԼՂՀ-ն որևէ փուլում կանցնի իր սեփական ազգային տարադրամի թողարկմանը: Նախարարը, սակայն, չի նշել Ղարաբաղյան տարադրամը շրջանառության մեջ դնելու հստակ ժամկետները, ասելով, որ ԼՂՀ կառավարությունը դեռևս տանում է նախապատրաստական աշխատանք: Ըստ Ս. Թևոսյանի, «ազգային տարադրամն անկախ պետականության կարևոր բաղադրիչներից է, ինչը մեծ նշանակություն ունի ԼՂՀ համար»: Նախարարը նշել է, որ սեփական տարադրամի անցնելուց հետո ներկայումս Լեռնային Ղարաբաղում օգտագործվող հայկական դրամը շրջանառություն կունենա հանրապետությունում այլ արտասահմանյան տարադրամների հետ:

«Ուխտագնացություն դեպի Արցախ» առաքելության շրջանակում Լեռնային Ղարաբաղում է Մեծ Բրիտանիայի քրիստոնեական կազմակերպությունները ներկայացնող 20-հոգանոց պատվիրակությունը:

Պատվիրակությունը գլխավորում է Մեծ Բրիտանիայի խորհրդարանի Լորդերի պալատի փոխխոսնակ, բարոնուհի Քերոլայն Քոկսը, որը Լեռնային Ղարաբաղ է այցելում 60-րդ անգամ (առաջին այցը կայացել է 1989 թվականին):

ԿՓՈՐՁԵՒ ԱՇԽԱՐՀԸ ԴԱՐՁՆԵԼ ԱՎԵԼԻ ԲԱՐԻ

Արմեն Մովսիսյան

Եթե աշխարհը սկսվեր ինձանից, երևի առաջինը չգործած և գործելիք մեղքերիս համար քավություն կխնդրեի Աստծուց: Այս մոլորակի պատմության մեջ՝ տիեզերքի վրա, կենդանի կյանք լինելու ամբողջ ընթացքում երևի ամենավտանգավոր «գիշատիչ» տեսակն ենք, որը ոչ միայն «հոշոտում» է իր տեսակին, այլև՝ կենսոլորտը: Գիտակից էակ լինելով՝ մենք ավելի շատ ապրում ենք բնազդներով, քան՝ գիտակցությամբ: Դա, իհարկե, երազանք է, դա այսօրվա ցավը չէ, և ոչ էլ վաղվանն ու երեկվանը, դա եկել է մարդու հայտնվելու հետ ի սկզբանե: Ես հավատում եմ, որ կա տիեզերական ուժ՝ բանականություն, որն ավելի վեր է, քան՝ մարդու ստամոքսի միջոցով մտածելը: Փա՛ռք Աստծո, գոնե այն քչերը, ովքեր այդ բանականության կրողներն են, պատմության ընթացքում տվել են հիանալի առկայծումներ, բռնկումներ, որոնք կոչվում են մարդկային մտքի հանճարեղություն, մարդկային ոգու թռիչք: Ամեն դեպքում, մոլորակը միշտ էլ առաջընթաց է ապրում, բայց հիմա այդ ուղուց շեղվել է, ըստ իս, գնում է դեպի փակուղի: Մենք իսկապես դառնում ենք գործող աշխարհի մի մասնիկը, որտեղ հոգևորի ու բանականի տեղերը շատ ավելի ստորադասված են: Կուզենայի բնության, մեր խղճի հետ մի քիչ ավելի հաշտ ապրեինք, այդ ուղեղ կոչված նյութի ծալքերը մի քիչ աշխատեցնեինք, թե չէ այսօր կամաց-կամաց նմանվում ենք «բանական հոտի»: Համապարփակ աշխարհը, եթե ինձանից սկսվեր, կփորձեի գոնե իմ ասած կետերը ուղղել: Վեհի մասին մտածենք, որովհետև ես գտնում եմ, որ այն մեր կյանքում ոչ թե կարևոր մասնիկ է, այլ ողջ իմաստավորումն է իր մեջ պարփակում:

Երգ գրելով՝ հանգել եմ առավել քան մի պարզ ճշմարտության, որ ընդամենը գրածներս երգեր են: Ստանիսլավսկու խոսքերը, որ մեր ես-ն ենք ավելի շատ սիրում արվեստի մեջ, խանգարում է: Ասում է, թե արվեստի մարդը պետք է մի քիչ ամբիցիա ունենա, որ առաջնորդվի: Ընդհանրապես կասկածով եմ վերաբերվում այն արվեստին (մասնավորապես երաժշտությանը), որտեղ ես-ը ավելի կարևորված է, քան՝ արած գործը, դա շատ վտանգավոր է: Եթե գիտակցենք, որ երբ ինչ-որ բան անում ենք և լավ է ստացվում, ապա դա մենք չենք. մենք ընդամենը փոխանցողներ ենք: Եթե այս գիտակցությամբ մոտենանք, կհասկանանք, որ մեր «արած» կոչվածը վտանգավոր հնչերանգ է պարունակում իր մեջ, մանավանդ, երբ ասում ենք՝ իմ հանդիսատեսը: Ի՞նչ տխուր արտահայտություն է: Կամ իմ երկրպագուները՝ նույնիսկ չգիտակցելով այդ բառի իմաստը: Ի՞նչ է նշանակում երկրպագու՝ կիսաստվա՞ծ ենք, կիսակուռքե՞ր, ի՞նչ են պատկերացնում: Ընդամենը երգ է, որ գրում ենք, կինո է, որ նկարում ենք, դեր է, որ խաղում ենք: Եթե կարողանանք այդ դերը, երգը, կատարած գործը ծառայեցնել մարդկանց, լավը դառնալու, նրա մեջ բարին բարձրանալու, ուրեմն, կարելի է ասել, որ իզուր չենք ապրում: Եթե միայն ես-ը՝ «քաղցած ես»-ը բավարարելու համար է, ես դրա հետ կռիվ ունեմ ու միշտ կունենամ:

Հայ լինելը (խոսքերս բարձրագոչ չհնչեն) շատ կարևոր է ինձ համար: Ես պատկանում եմ մի ազգի, որը դարերի պատմության մեջ ունեցել է և՛ փառավոր էջեր, և՛ սարսափելի տխուր էջեր: Իրական աչքերով նայենք մեր անցած ուղուն: Պետք է ուսումնասիրել այն, ինչ իսկապես եղել է, երբ ֆիդային կռվում էր ազգի համար, իսկ ազգի մյուս մասը՝ թուրքի յաթաղանի տակ հող էր մշակում ու արտի երգ գրում: Գուցե պետք է վերլուծենք, թե ո՞րն էր պատճառահետևանքային կապը 1915-ի ջարդի, ինչո՞ւ մենք չկարողացանք համազգային ինքնապաշտպանությամբ ձեռք բերել մեր անկախությունը:

Ճանաչելով մեզ՝ կարժեքավորենք մեր պետականությունը: Այդ ժամանակ ես միայն կհավատամ, որ կունենանք «Հայրենիք» գաղափարի իսկական ձևակերպումը:

Հայ ժողովրդին ցանկանում եմ անամպ երկինք, հոգու խաղաղություն. արյուն շատ ենք տեսել: Կուզենամ, մեր փոքրիկ հայրենիքը ոչ թե շենացնենք պաստառներով, այլ՝ գործերով: Հային մաղթում եմ բարօրություն և բարեկեցություն, որ առավոտյան արթնանալով, հայ տղամարդը չմտածի, թե այսօր ի՞նչ է անելու, որ ընտանիքի համար հաց վաստակի: Կուզենայի, որ հայն իսկապես իրեն զգա ի՛ր տան՝ ի՛ր Հայրենիքի տերը:

Զրույցը վարեց ԱՐՇԱԿ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԸ

ԸՆԴ ԵՂԵԳԱՆ ՓՈՂ ԼՈՒՅՍ ԵԼԱՆԵՐ

Մեկնարկեց ժողովրդա-գուսանական երգերի փառատոնը

Ընդ եղեգան փող լույս ելաներ… հնչում են «Եղեգան փող» ժողովրդա-գուսանական երգարվեստի համահայկական փառատոնի բացումն ազդարարող խոսքերը:

Գուսանն ու աշուղը սիրո երգիչ են: Գողթան գուսաններ արտահայտությունը շատերն են լսել, այն ձգվում է մինչև հայոց պատմության խորքերը: Աշուղը (աշըղ) արևելյան ծագում ունեցող բառ է՝ 17-րդ դարում ծագած: Աշուղները գրում էին երգերի տեքստերը, ոճը փոխվեց սկսած Սայաթ-Նովայից ու Ջիվանուց. նրանք սկսեցին գրել նաև երաժշտությունը: Հետո եկան գուսան Աշոտը, Հավասին, Շերամը…

Այսօր, սակայն, գուսաններին ասպարեզ տալու խնդիր կա, այդպես է կարծում գուսան Հայկազունը: «Եղեգան փող» փառատոնը, գուսանի խոսքերով, կկանգնեցնի անկումը և, պահպանելով հինը, կստեղծի նորը, քանի որ այսօր շատ ստեղծագործողներ կան:

Հիրավի, մեր հանրապետությունում ապրում և ստեղծագործում են շուրջ 40 գուսաններ և աշուղներ՝ կոչումներով և առանց կոչումների: Իսկ փառատոնի հայտատուների թիվը մի քանի օրում 120-ից հասել է 200-ի:

Փառատոնի բացման արարողությանը հանդես եկան պետական կոլեկտիվներ և անհատ կատարողներ: Նրանք կատարում էին այն ծիսերգերը, աշխատանքային երգերն ու օրհներգերը, հորովելներն ու նուրիները, որոնք սկիզբ են առել «Հարանց վարքից» ու «Հայսմավուրքից»:

ԿԱՐԻՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱ ԳԱՐՈՒՆ

Հայրիկն ասաց.- Իմ հայրենյաց
Փուշն անուշ է քան զ'վարդ,
Ես այն փշոց մեջը դարձյալ
Կ'որոնեմ սիրուն վարդ...

Հայրիկ, երբ այն ժամանակ ծնվեցիր քո հայրենի Շատախում, երևի, շատ այլ Հայրիկներ էլ էին ծնվել ի պատիվ Խրիմյան Հայրիկի... Աստծո կամոք, քո ծնունդը օրհնյալ էր, օրհնյալ, ինչպես ի վերուստ ազգի մեծերին է տրված:

Տասնամյա պատանիդ տեսար մահ ու ավերի, ջարդ ու կոտորածի սև դառնությունները, սակայն ծնունդդ դրանով չէր կանխորոշված...

Լճացման «հրաշալի» տարիներին, երբ ամեն մի հայեցի խոսք նացիոնալիզմ էր համարվում, կարողացար հայրենի երգն ու բանը զարթնեցնել, հասցնել ազգիդ ականջին, որ լցված էր սովետական ինտերնացիոնալ-հայրենասիրական երգերով:

Սիրելի՜ Հայրիկ, այսօր՝ քո հարյուրամյակին, կրկին մեզ հետ ես՝ Արամ Խաչատրյանի անվան համերգային մեծ դահլիճում: Մեծ համերգ է՝ նվիրված հայ երգի մեծ երախտավորիդ՝ Հայրիկ Մուրադյանի 100-ամյա հոբելյանին...

Էկրանին են հայտնվում կադրեր, ուր Հայրիկն է իր երգերով ու իմաստուն խոսքերով՝ ամենքիս հարազատ, ամենքիս հոգու կանչին ունկնդիր... Սահում են կադրերը, տանում են մեզ կարոտի՝ Ավետյաց ԷՐԳԻՐ, ուր սարերն են մեր, կարոտի, սիրո, հաղթության, երփներանգ ծաղիկներով զարդարուն... Շատախն է, որին վերջին անգամ նայեց նա վշտալլուկ աչքերով ու... անտես, անվերադարձ թողեց հայրենի եզերքը, հոգում՝ ամբարած մորից, պապից, իր ազգ ու տակից հարազատ ժողովրդի երգն ու պարը, անգնահատելի հարստություններ, որ պիտի ժայթքեին 60-ականների զարթոնքի սքանչելի այդ օրերին...

Դահլիճը լուռ լսում է ֆիլմին հաջորդող իր իսկ անունը կրող համույթի սաներին (գեղ. ղեկ. Հասմիկ Հարությունյան):

Պարի լուսո աստղ էրևաց,
Աղոթարան տրներն ի պաց...

Երգում են նրանք ինքնամոռաց ու հանդիսատեսին տանում 150 տարի հետ՝ Վարագա վանք, ուր առաջին Հայրիկն էր, դեռևս Վարագա վանքի վանահայրը՝ Արծիվը Վասպուրականի, ապագա կաթողիկոս Խրիմյան Հայրիկը, որ բազմախոփ գութաններ էր բերել Եվրոպայից Վարագա, և այդ գութանների կարողությամբ հիացած մշակները ստեղծել էին այդ սքանչելագործությունը.

Աշխրքի շեն վեր կութնին էր,
Կութան չէլներ, աշխար ի՞նչ էր...

Երևի մի այլ Հայրիկ էլ էր պետք, որ այս ամենը վերադարձներ աշխարհով մեկ սփռված, բազում տառապանքներից ու կորուստներից մազապուրծ այս ժողովրդին...

Հայրիկ երևույթի մասին իր խոսքն է ասում ազգագրագետ-բանահավաք Արուսյակ Սահակյանը ու բեմ հրավիրում՝ Հայրիկ Մուրադյանի դստեր, համույթի հիմնադիր ղեկավար, երջանկահիշատակ վաղամեռիկ Մարո Մուրադյանի անվան «Ակունք» ազգագրական երգի պարի համույթին... խմբավար՝ Արեգ Միքայելյան:

Երգերի ու պարերի շարան... դահլիճը «սարերն է բարձրանում»... Փոթորկվում է դահլիճը անվերջանալի թվացող ծափահարություններից: Երգում են հայրենի երգ ու բանի մատաղահաս ժառանգորդ մենակատարները... Նրանց հաջորդում է հայրենիքում և Սփյուռքում ճանաչված Աննա Մայիլյանը...

Սիրով է ընդունվում «Շողակն» երգի պարի համույթը, մենակատարներ՝ Հասմիկ Հարությունյան, Ալիկ Հարությունյան, դուդակահար Գևորգ Դաբաղյանի նվագակցությամբ ու նաև՝ մենանվագով...

Երգեհոնահար Վահագն Ստամբոլցյանի հոգեպարար երաժշտությամբ, ուղեկցվում էր ֆիլմի ցուցադրությամբ: Իսկ Վան-Վասպուրական միության նախագահ Ռոմիկ Հովնանյանի խոսքն ասված էր ի տրիտուր Վարպետի ազգանվեր ու ազգաշահ գործունեությանը, որ այնպես խոնջանքով իրականացրեց հայ երգի մեծ երախտավորը:

Երգերը հաջորդում էին միմյանց, բեմում է Արսեն Գրիգորյանը, որին անչափ հավանում էր Հայրիկը:

Տավրոսյան անառիկ լեռներից իջել է ահա «Կիլիկիա» ժողովրդական նվագարանների համույթը՝ պարեղանակների ու երգերի նվագով ջերմացնելով հանդիսատեսի հոգին...

Բեմում է «Կարին» համույթը. (գեղ. ղեկ. Գագիկ Գինոսյան) Կարնո Քոչարի, Չարմահալի «Քաջերի» պարը:

Վերջում բեմ բարձրացան «Վան» և «Զարթոնք» խմբերի վետերանները, խմբեր, որ իր ժամանակին, դեռևս 70-ականների վերջերին հիմնադրեց ու ղեկավարեց Հայրիկ Մուրադյանը...

Հոգու ջերմ խոսքով հանդես եկավ Հայրիկ Մուրադյանի հարսը՝ Նարինեն...

Համերգի ավարտին հոգու և ոգու երանության մեջ, հանդիսականներն ու բեմում հավաքված բոլոր խմբերի համակազմը միասին երգեցին Վարդան զորավարին նվիրված «Իմ հայրենյաց հոգի Վարդանը»...

Երբ ավարտվում է որևէ համերգ, որն անցնում է բացառիկ ջերմ մթնոլորտում, սկսվում է չնախատեսված երրորդ բաժինը:

Համերգը դահլիճից տեղափոխվեց Ֆիլհարմոնիայի բակ, ոգևորված երաժիշտներն ու հանդիսականները միասնականորեն սկսեցին մի նոր, բացօթյա համերգ, որը թևածեց մինչև ուշ գիշեր... Կարոտ հարազատ երգին ու հայրենակարոտ պարին, իրար միախառնված պարում էին իրիկնային Երևանի աստղազարդ երկնքի տակ, հնչում էր զուռնան, պայթում էին դհոլները, պարում էին նրանք իրենցից ու աշխարհից վերացած... և երևի նրանցից վերև, աստղերի թարթող լույսի միջից նրանց բիբլիական պարին էր հետևում նա՝ հարյուրամյա **ՄԵԾ ԵՐԱԽՏԱՎՈՐ ՀԱՅՐԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆԸ...**

ՔԵՅԹԻ ԳՈՒՆԴԱԿՉՅԱՆ

ՇԵՔՍՊԻՐՅԱՆ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆ

Հայ թատերաբեմում տոն էր. «Արմմոնո» 3-րդ թատերական միջազգային փառատոնն էր մեկնարկել Երևանում: Աշխարհի տարբեր երկրներից (Մեծ Բրիտանիա, ԱՄՆ, Ռուսաստան, Շվեյցարիա, Լեհաստան, Թուրքմենստան, Իրան) ժամանել էին դերասաններ, ռեժիսորներ ու թատերագետներ:

...Գուժ Մանուկյան, Հովհաննես Բաբախանյան, Արթուր Կարապետյան, Գարեթ Ամսթրոնգ, Առնոլդ Շվեցով, Քշիշտոֆ Գորդոն... այս տաղանդավոր դերասանների մասնակցությունն արդեն իսկ խոսում էր փառատոնի հաջողության մասին, սակայն այն կրկնակի տոն դարձրեց շեքսպիրյան պիեսների աշխարհահռչակ բեմադրիչ Ռոբերտ Ստուրուան:

Այս փառատոնը տարբերվում էր նախորդներից. շեքսպիրյան էր: Հանդիսատեսին հնարավորություն տրվեց՝ դիտելու 14 ներկայացում՝ բացառապես Վիլյամ Շեքսպիրի ստեղծագործությունների հիման վրա կամ մոտիվներով: Ի տարբերություն նախորդ երկու տարիներին՝ փառատոնն այս տարի մրցութային չէր:

«Յուրաքանչյուր փառատոն պետք է լինի մշակութային հրավառություն և պետք է խրախուսի դերասանի նոր քայլը»,- նշում է Հակոբ Ղազանչյանը:

«Տրակտատ թաշկինակի մասին» ներկայացումով սկսվեց «Արմմոնո» ներկայացումների միջազգային թատերական 3-րդ փառատոնը: Օթելլոյի կերպարը մարմնավորում էր Հովհաննես Բաբախանյանը, Մարիամ Ղազանչյանը՝ Դեզդեմոնայի կերպարը. նա առաջին անգամ էր մասնակցում թատերական միջազգային փառատոնին:

Արտերկրից ժամանած օտարազգի դերասանները խաղում էին մայրենի լեզվով: Թատրոնի լեզուն թարգմանության կարիք չունի, առավել ևս մոնոթատրոնը, որտեղ առաջնահերթը բեմական շարժումն է, դերասանի վարպետությունն ու դիմախաղը:

Մեծ Բրիտանիան ներկայացնող Գարեթ Ամսթրոնգը առաջին անգամ էր այցելել Հայաստան և հեռացավ մեծ տպավորություններով: Իսկ Ռուսաստանից ժամանած Կոնստանտին Ժելդինը հիացած էր հայ հանդիսատեսով:

«Հայաստանում մենք իրականացրեցինք աշխարհում առաջին շեքսպիրյան մոնոփառատոնը, և ես հավատում եմ, որ այն շարունակական կլինի»,- ասաց փառատոնի գեղարվեստական ղեկավար Անջեյ Ժոտովսկին:

Ավարտվեց «Արմմոնո» ներկայացումների 3-րդ միջազգային թատերական փառատոնը, իսկ փառատոնի տնօրեն Հակոբ Ղազանչյանն արդեն մտածում է 4-րդի մասին...

ԱՆԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՄԵՏԱՂԻ ԵՎ ՀՈԳՈՒ ՄԵՂԵԴԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Գյումրեցի է Աշոտ Մխեյանը: Ավարտելով նկարչական ուսումնարանը՝ աշխատել է որպես ուսուցիչ և մինչև հիմա էլ աշակերտներին օգնում է հասնել ոսկերչական գործի նուրբ հմտությանը, որը նա ձեռք է բերել ինքնուրույն՝ շնորհիվ իր տաղանդի, համբերության և ջանասիրության: 1990-ից նա Ռուսաստանի նկարիչների միության անդամ է:

Ա. Մխեյանի քանդակները բազմիցս ցուցադրվել են ամենահայտնի ցուցահանդեսներում՝ արժանանալով գեղեցիկի արժեքը գնահատողների հավանությանը: Քանդակագործի որոշ աշխատանքներ ցուցադրվել են Հայաստանի, Բուլղարիայի և Իրանի ցուցասրահներում:

Արվեստագետի շնորհը անսահման է քանդակագործի հարուստ պաշարով՝ հոգևոր պատկերացումների ներաշխարհով: Նրա «Հետևանք» քանդակը ողբի և մարդկային տխուր ապրումների արտացոլանքն է. գունդը՝ խորհրդանիշ հավերժության, անթերիության և մեր մոլորակի: Նկարիչը փորձում է մարդկությանը զերծ պահել չմտածված արարքներից, որպեսզի դրանք վաղը չարտահայտվեն ի հեճուկս մարդկային բարօրության:

«Հետևանք»-ն ունի տխուր եզրահանգում. թվում է, թե մարդկային կերպարում ընկալվում է անզորությունը, դժբախտությունը և ինքն իր հանդեպ անվստահությունը, բայց միաժամանակ ամբողջ քանդակից հորդում է ուրիշ լավատեսական, կենսահաստատման երանգավորում:

Երևում է, որ մշակութային արժեքները օժտված են ոչ միայն խոսքային արտահայտությամբ, այլև ներծված են երաժշտությամբ: Արվեստագետի աշխատանքները ոչ միայն պետք է նայել, այլ նաև ուշադիր ունկնդրել, դրանք անհրաժեշտ է զգալ, որտեղ միահյուսված է Արևմուտքի և Արևելքի մեղեդայնությունը:

Ա. Մխեյանի ոսկերչական աշխատանքները յուրահատուկ են իրենց նրբությամբ, որոնք երկար փնտրտուքի և հեղինակի ստեղծագործական երազանքի արդյունք են՝ արտահայտելու համար կանացի նրբագեղությունը: Եթե քանդակագործը «ստեղծագործում» է իրական-ավանդական հողի վրա, ապա ոսկերիչ Աշոտ Մխեյանը հակված է իմպրովիզացիայի՝ և՛ դասական, և՛ ավանգարդ ոճով: Եվ այս ամենում չկա ոչ մի ավելորդություն ու պատահականություն, դրանք բնական են, ինչպես կյանքը և անկեղծ՝ ինչպես զգացմունքները:

ՀԱՍՄԻԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ

Գրիգոր Լուսավորչի անվան հետ կապված է հայոց պատմության թերևս ամենակարևոր իրադարձությունը՝ քրիստոնեության մուտքը Հայաստան: Այն ամբողջովին փոխեց հայ ժողովրդի ազգային նկարագիրը, մշակութային արժեհամակարգը, պատմական ընթացքը: Քրիստոնեությունը պետական կրոն հռչակվեց 301-ին՝ Տրդատ թագավորի օրոք, հայոց առաջին կաթողիկոս դարձավ Գրիգոր Լուսավորիչը: Գրիգոր Լուսավորչի Հայաստանում քրիստոնեության տարածման, Խոր Վիրապում նրա տասներեքամյա բանտարկության, Ավետարանագործելու և հայ ժողովրդի դարձի, հեթանոսական հավատալիքների և բարքերի դեմ պայքարի մասին հետաքրքիր պատմություններ են մեզ հասել: Փորձենք ներկայացնել Լուսավորչին՝ որպես աստվածաբան-մատենագիր:

Հայ ժողովրդի հոգևոր ուսումնա-դաստիարակչական գործի հիմնական ծանրությունը կրում էր Գրիգոր Լուսավորիչը: Նա քրիստոնեական վարդապետության քարոզչությունից զատ կատարում էր նաև հայ քրիստոնեական դպրության, մշակույթի հիմնադրման և կազմակերպման գործը: Ագաթանգեղոսը տեղեկություններ է հաղորդում այն մասին, որ Լուսավորիչը Տրդատ թագավորին հորդորում է դպրոցներ բացել գավառներում, որոնց հիմնադրումն ուղեկցվում էր քարոզչական բուռն գործունեությամբ:

Նոր ընդունված կրոնի տեսական-աստվածաբանական հիմունքները մեկնաբանելու համար Լուսավորիչը Հայաստանի զանազան վայրերում հանդես է գալիս վարդապետական քարոզներով, որոնք հայ մատենագրությանը հայտնի են «Հաճախապատում» անունով: Այս ճառերի հեղինակային պատկանելության հետ կապված՝ հայ մատենագրության մեջ կան տարբեր կարծիքներ: Քանի որ հայոց գրեր գոյություն չեն ունեցել Լուսավորչի ժամանակ, կա տեսակետ, ըստ որի, ճառերը պատկանում են Մաշտոցի գրչին: Սակայն դեռևս 7-րդ դարում կազմված դավանաբանական ժողովածու հանդիսացող «Կնիք հավատոյ»-ում՝ «Հաճախապատում» ճառերը հիշատակվում են Լուսավորչի անունով: Կան նաև այլ վկայություններ Գրիգոր Մագիստրոսի, Հովհան Իմաստասերի և այլոց մոտ՝ հօգուտ Լուսավորչի հեղինակային պատկանելության: Մեսրոպ Մաշտոցը գրերի գյուտից հետո դրանք թարգմանել է հայերեն (որոնք, ամենայն հավանականությամբ, գրված են եղել հունարեն): Աստվածաբանի այս աշխատությունը բաղկացած է քսաներեք ճառերից. «Յաղագս ամենասուրբ Երրորդութեան», «Վասն անփոփոխ ինքնութեան էութեանն Աստուծոյ», «Վասն անձնաւորութեան Երրորդութեան» և այլն: Ճառերում խոսվում է քրիստոնեական դավանաբանության կարևորագույն հարցերի՝ Սուրբ Երրորդության երեք անձերի՝ Հայր, Որդի, Սուրբ Հոգի Աստվածների հարաբերակցության մասին: Սուրբ Երրորդության վերաբերյալ ասում է, որ «Նրանց՝ Երրորդության անձերի բնությունը մեկ է և մեկ է նրանց իսկությունը՝ մեկ կամք, մեկ բարերարություն, մեկ արարչություն, մեկ աստվածություն, մեկ զորություն: Չկա մեկ այլ տեղից հավելված, զտված, այլ անսկիզբ Երրորդություն, որն աղբյուրն է և որից բաշխվում է բոլոր արարածներին նրա արարչական խնամքը»:

Հեղինակն անդրադառնում է նաև արարչության խնդրին. գտնում է, որ Աստված նյութը ստեղծել է ոչնչից, և իր բարերար կամքի պատճառով Արարիչ է կոչվել: Աստված չորս նյութից է արարել աշխարհը՝ հող, օդ, ջուր, կրակ: Սակայն այս չորս տարրերը նա ստեղծել է ոչնչից՝ իր իմաստությամբ և զորությամբ: «Հաճախապատում» ճառերի մեջ արծարծվում են նաև բարոյաբանական հարցեր. նրա մեջ կան խրատներ՝ ուղղված ճգնակյաց-անապատականներին, կոչ է անում ապաշխարության, փառաբանում է՝ ի սեր Քրիստոսի նահատակությանը:

Հետաքրքիր է Լուսավորչի տեսությունը ազատ կամքի վերաբերյալ: Հիմնական գաղափարը հետևյալն է. մարդն ունի ազատ կամք, սակայն նա պետք է կարողանա իր կամքը ծուլել Աստծո կամքին՝ իրականացնելով Աստծո և մարդու կամքի ներդաշնակ գոյակցությունը: Լուսավորիչը խոսում է նաև նախախնամության՝ Աստծո ողորմածության մասին: Աստված՝ որպես արդարության արեգակ, լույս տալով ջերմացնում է ոչ միայն հավատացյալներին, այլև՝ անհավատներին, ոչ միայն արժանավորներին, այլև՝ անարժաններին: Լուսավորիչը վերլուծում է մարդկային մի շարք առաքինություններ՝ հավատ, սեր, հեզություն, խոնարհություն՝ բխեցնելով Սուրբ Գրքից: Քննության են առնվում նաև աստվածաճանաչողության վերաբերյալ հարցեր. Աստված անճանաչելի է և նրան բանականությամբ քննելու ամեն փորձ, սկզբից ևեթ, դատապարտված է անհաջողության: Միայն հավատքով և, բացառելով որևէ քննություն, մենք իմանում ենք, որ Աստված, լինելով անպատճառ, ամեն ինչի գերագույն պատճառն է:



Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» մեջ հանդիպում ենք Լուսավորչի աստվածաբանական մտքերին, որտեղ, օրինակ, ասվում է, որ Աստված արարիչն է ամենայնի և չկա մեկ ուրիշ արարիչ:

Լուսավորչի «Հարցմունք եւ պատասխանիք» երկում պատմվում է հեթանոսական սովորույթների և զանազան հմայությունների մասին, կան նաև նրանց ազդեցությունից զերծ մնալու վերաբերյալ խորհուրդներ: Այս երկի բովանդակությունը բացահայտում է երկի գրվելու պատճառները, այն է՝ քրիստոնեությունը՝ որպես նոր տարածվող կրոն, ուներ նախկին հեթանոսական գաղափարական մնացուկներից ազատվելու և ամրապնդվելու կարիք:

Ամփոփելով ասենք, որ Լուսավորչի կյանքն ու մատենագրական վաստակը վկայում են նրա խորը հավատի, քրիստոնեական կրոնին նրա նվիրվածության մասին, և մյուս կողմից բացահայտում են Լուսավորչին՝ որպես աստվածաբան-գիտնական: Նրա թողած ժառանգությունը հայ աստվածաբանական մատենագրության մեծարժեք գանձերից է:

ԱՇԽԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԳԱՌՆԻ ԱՄՐՈՑԸ

Սկզբնավորվելով հեռավոր անցյալից և անցնելով պատմական զարգացման հոլովույթով՝ նախաքրիստոնեական շրջանի Հայաստանում գոյություն է ունեցել զարգացման ինքնօրինակ աստիճանի հասած տեղական հարուստ ճարտարապետություն, որի խոշորագույն արտահայտություններից էր Գառնի ամրոցը՝ կառուցված 77-ին և կանգուն մնացած 1600 տարի: Այն եղել է հայ թագավորների ամառային նստավայրը և իր եզակի գիտական ու գեղարվեստական նշանակությամբ, հաղթահարելով ազգային մշակույթի սահմանները, լայն ճանաչման է հասել: Ենթադրվում է, որ սյունազարդ տաճարը նվիրված է եղել արևի հայոց աստված Միհրին:

Ամրոցի տեղադրությունն ու նկարագրությունը. Գառնի ամրոցը (իր համանուն գյուղի հետ մեկտեղ) գտնվում է Այրարատ աշխարհի Կոտայք գավառում՝ Ազատ կամ Գառնո գետակի աջ ափին, եռանկյունաձև բարձունքի վրա, Գեղամա լեռնաշղթայի Գեղասար լեռնագոտու ստորոտին, սարավանդի և լեռնալանջի վրա: Ամրոցը երեք կողմից շրջապատված է բարձր, անմատչելի ժայռերով, իսկ հարակից խոր ձորերի միջով սրընթաց գահավիժում է Ազատ գետը, որը սնուցում է Ազատ ջրամբարը, որտեղից էլ՝ Արարատյան դաշտ և միախառնվում Արաքս գետին:

Գառնին՝ վերականգնումից առաջ:

Գառնի ամրոցը կառուցված է եռանկյունաձև դարավանդի վրա, որը հարավային, հարավարևմտյան և կիսով չափ արևելյան կողմերից շրջապատված է խոր ձորերով և շուրջկալված անանցանելի ժայռերով, իսկ մյուս հատվածներում տասնչորս աշտարակների և հզոր պարսպապատերի հաջորդականությամբ ստեղծված է ռազմաշինության (ֆորտիֆիկացիոն) մի հզոր համակարգ: Ամրոցի արևելյան հատվածներում, որտեղ հակառակորդը տեղանքի պատճառով դժվարությամբ կարող էր մոտենալ պարսպապատերին, հետևաբար նրա հարձակումը հնարավոր էր պակաս ուժի գործադրումով իսկ հետ մղել, աշտարակները կառուցված էին 25-32 մետր հեռավորության վրա, իսկ այն մասում, որտեղ թշնամին կարող էր համեմատաբար անարգել մոտենալ պարիսպներին, մեծ թվով աշտարակներ էին կառուցվել, որոնք միմյանցից 10-13,5 մետր հեռավորության վրա էին գտնվում:

Աշտարակները ուղղանկյունաձև են: Հայկական լեռնաշխարհում ուղղանկյունաձև աշտարակները գոյություն են ունեցել դեռևս ուրարտական ժամանակաշրջանից (Արգիշտիխինիլի):

Պարսպապատերը և աշտարակները ունեցել են ատամնաձև վերջավորություններ: Ինչպես պարիսպները, այնպես էլ աշտարակները կառուցված էին տեղական կապտավուն որձաքարի խոշոր վիմերով՝ առանց շաղափի, որոնք հղկվել են մեծ ճարտարությամբ: Քարերը սրբատաշ էին և ունեին ժապավենաձև երիզներ: Որմնաքարերը միացված էին երկաթե կապերով, որոնց քարերի հետ միացման հանգույցները լցված էին կապարով: Ամրոցի պարիսպներից ներս պահպանվել են աշխարհիկ և պաշտամունքային կառույցների ճարտարապետական-գեղարվեստական մեծ արժեք ներկայացնող մնացորդներ ու շինություններ (վերականգնված են հեթանոսական տաճարը, բաղնիքը և պալատական շենքերի մնացորդները): Այդ շենքերը, համախմբված լինելով ամրոցի եռանկյունաձև տեղանքի հարավային հատվածում, միմյանց նկատմամբ ունեցած դասավորությամբ և ընդհանուր մտահղացումով, կազմել են ճարտարապետական մի յուրահատուկ անսամբլ, որի կոմպոզիցիոն կենտրոնը կազմել է տաճարի սյունազարդ հորինվածքը, որից մոտ քսան մետր դեպի արևմուտք՝ հրվանդանի ուղղաձիգ ժայռերի գրեթե պռնկին, բարձրացել են պալատական շենքերը: Բաղնիքը գտնվում էր տաճարից մոտ հիսուն մետր դեպի հյուսիս-արևմուտք:

Պատմական ակնարկ. Գառնիի վերաբերյալ առաջին գրավոր հիշատակությունը տալիս է հռոմեական պատմագիր Կորնելիոս Տակիդոսը (մ. թ. 1-2-րդ դարեր): Ըստ պայմանագրի, ամրոցը հռոմեացիների կողմից իբր պահակազորի կենտրոն է գործարկվել, որին ապավինել են հայ հռոմեասերները և Միհրդատ թագավորը (ծագումով վրացի, վրաց Փարսման թագավորի եղբայրը): Անդրադառնալով Միհրդատի Հայաստանի թագավոր կարգվելուն և իր եղբոր որդու՝ Հռադամիզդի գահակալական դավադրությանը, Տակիդոսը գրում է. «Հանկարծակի ներխուժումից ահաբեկված՝ Միհրդատին Հռադամիզդը քշեց Գորնեաս (Jorneas), որն ապահով էր թե՛ տեղադրության, թե՛ հռոմեական կայազորի պաշտպանության հետևանքով»:

Հայ մատենագրության մեջ Գառնին առաջին անգամ հիշատակում է Մովսես Խորենացին: Ըստ Մ. Խորենացու, Գառնի ամրոցը կառուցել է Գեղամ նահապետը. «Բայց ինքն՝ Գեղամ, դառնայ անդրէն ի դաշտ անդր, և առ ոտամբ նորին լերինն ի ձորակի միջում ամրոց շինէ ձեռակերտ մի եւ կոչէ զանոն նորա Գեղամի, որ յետոյ ի Գառնկայ թոռանէ նորա անուանեցաւ Գառնի» (Մ. Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1981թ.):

5-րդ դարի հայ մյուս մատենագիրների մոտ Գառնին հիշատակվում է իբրև խիստ ամրացված «արքունի բերդ» (Փավստոս Բուզանդ), կամ իբրև «ամուր քաղաք», ուր «կանայք զորացն էին» (Եղիշե): Գառնին, իբրև զորակայան, հիշատակված է և Սեբեոսի մոտ, այն է՝ Գառնին զորակայան է հանդիսացել նաև պարսիկների տիրապետության ժամանակ: 10-13-րդ դարերի պատմիչների մոտ Գառնին հաճախ անվանվում է գյուղաքաղաք կամ քաղաքագյուղ: Հետագայում՝ իբրև անմատչելի ամրոց, այն աստիճանաբար կորցնում է իր նշանակությունը, չնայած շինարարական կյանքն այնտեղ շարունակվում է մինչև ուշ միջնադար՝ 15-16-րդ դարեր:

Գառնի ամրոցը փլվել է 1679-ի երկրաշարժից և կիսավեր մնացել 300 տարի: Այն վերականգնվել է ճարտարապետ Ա. Սահինյանի նախագծով և անմիջական ղեկավարությամբ՝ 1969-75 թվականներին: 24 սյուները խորհրդանշել են օրվա 24 ժամերը: Պահպանվել է բաղնիքի խճանկարով հատակը, որը պատրաստված է 15 գույնի բնական քարերից և պատկերում է ծով ու ծովային տեսարաններ: Խճանկարը հին Հայաստանի մոնումենտալ գեղանկարչության հրաշալի հուշարձաններից է:

ՍՄԲԱՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՍՔ ԴԵՂՁԵՆՈՒ ՄԱՍԻՆ

Այս դեպքը պատահել է մեր թվարկությունից առաջ՝ 185 թվականին, Արտաշատ մայրաքաղաքի հիմնադրման ժամանակ: Հայոց Արտաշես թագավորը հյուրընկալում էր ամեհի Հռոմի երդվյալ թշնամի, կարթագենցի զորավար Հաննիբալին: Հենց վերջինիս խորհրդով էլ թագավորը ձեռնարկում էր հայոց ապագա մեծ քաղաքամայր Արտաշատի կառուցումը: Առաջինը սկսեցին կառուցել դեպի արևմուտք նայող պարսպաշարը: Սկզբում պարսպի հիմնափոսում թագավորը մի բուռ ոսկի ու մարգարիտ նետեց: Հետո բերեցին մատուցարանի վրա շարված հայկական հնամենի մասունքներ, որոնցով ասես էլ ավելի պիտի ամրապնդվեին քաղաքի պատերը: Թագավորը դրանք մեկ-մեկ ցույց էր տալիս Հաննիբալին և նոր գցում փոսը: Բայց ահա կարթագենցի զորավարը զարմանքով նայեց կարմրաժեռ մի ուլունքի:

- Սա դեղձի կորիզի՞ց է տաշված,- ասաց Հաննիբալը:

- Այո՛,- հավաստեց Արտաշեսը և ավելացրեց,- հազար տարեկան է:

- Երևի ձեր նախնիները սա բերել են Պարսկաստանի՞ց,- հարցրեց կարթագենցի զորավարը:

- Ինչո՞ւ Պարսկաստանից, չինացիներն էլ իրենց դեղձն ունեն, բայց դեղձը նաև հայկական պտուղ է: Հայոց աշխարհից են դեղձը տարել Պարսկաստան: Չինական դեղձը Չինաստանում է մնացել, աշխարհում տարածվել է հայկականը: Մեր պապերը աչք են բացել թե չէ՝ հայկական հողում աստվածապարգև դեղձուտներ են տեսել:



«Ոչ հայն իր դեղձենուն փայտով կխփի, ոչ էլ՝ պարսիկն իր դստերը»: Սա պարսկական առած է, զորավա՛ր: Դեղձենի ունեցող պարսիկն այսպիսի խոսք չէր ասի:

- Ափսո՜ս, բա դեղձաստանը Հայաստանը լինի, և դեղձին պերսի՞կ կոչեն: Բայց այդ սխալ և անարդար անվանումն ուղղել հնարավոր չէ: Աշխարհն այդ պտղին պերսիկ է ասում:

- Այո՛, հզորները միշտ էլ եղծել են աշխարհի դեմքը, խաթարել ամեն բան, հաճախ սևին՝ սպիտակ ասել և հավատացրել ամենքին, թե դա այդպես է:

- Արքա՛, պահիր այս կորիզը: Հիմնափոսը գցելու փոխարեն, պետք է սա կախել քաղաքի մայր դարպասի ճակատին և ի տրիտուր աշխարհի գրել, որ հայկածին դեղձը «պերսիկ» կոչվելուց հազար տարի առաջ Հայաստանում դեղձի կորիզներից ուլունքներ են շինել և զարդարել գեղանի հայուհիների պարանոցները:

Քանի դեղձենի է աճում Հայաստանում

Ես լսել եմ, որ շատ հնում, երբ ժամանակը հարբածի պես կլոր տարին միանգամից կամ ամառ էր դարձնում կամ ձմեռ, Հայաստան աշխարհում ինչքան մարդ կար, այնքան էլ դեղձենի էր աճում: Ամեն անգամ ծնունդ ունեցող տան շեմին աննկատ հայտնվում էր Աստղիկ աստվածուհին և դեղձի մի կորիզ գցում դռան առջև: Նորածնի հայրը կամ պապը տնկում էին այդ կորիզը: Եվ երբ արմատակալելուց ու ծառ դառնալուց հետո դեղձենին սկսում էր փթթել՝ նույն տարում թոթովում էր նաև մանուկը: Դա նշան էր, որ մարդու խոսքը պետք է շնչավորվեր դեղձի բուրմունքով, լիներ քաղցր, սրտահաճ, սրտաթով: Եթե մեկը մոռանար ու իր նորածնին բախտակից դեղձենի չտնկեր, մի պճեղ բուրմունք կպակասեր Հայոց աշխարհում:

ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Սոսյաց անտառ,1988թ.

ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻ ԱՍՊԵՏ

Հոկտեմբերի 1-ին՝ Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնի նոր թատերաշրջանի բացման օրը, «Կանգ առ երկրագունդ» ներկայացումից հետո (պիեսի հեղինակ՝ Պերճ Զեյթունցյան, բեմադրող ռեժիսոր՝ Արմեն Խանդիկյան) բեմ բարձրացավ Մշակույթի գործիչների համահայկական լիգայի նախագահ, Կոմիտասի անվան կոնսերվատորիայի պրոֆեսոր Դավիթ Ղազարյանը և հրապարակեց լիգայի որոշումը՝ Պերճ Զեյթունցյանին «Հայ արվեստի ասպետ» շքանշանով պարգևատրելու մասին: Այդ շքանշանը, ինչպես նշված է վկայականի մեջ, տրվում է «Հայ մշակույթում ունեցած բացառիկ ներդրման համար»: Մինչ այս, սակավաթիվ պարգևատրվածների թվում եղել են մեծանուն Գ. Գասպարյանը, կոմպոզիտորներ էդ. Միրզոյանը, Ալ.Հարությունյանը, գեղանկարիչներ էդ. Իսաբեկյանը և Հ. Հակոբյանը, իսկ արտերկրի ստեղծագործող մտավորականներից՝ Շառլ Ազնավուրը, Ռոստրոպովիչը, Սպիվակովը:

Պերճ Զեյթունցյանը շնորհակալություն հայտնեց բարձր պարգևի համար՝ նշելով, որ այն թանկ է նախ և առաջ նրանով, որ հանձնվում է իր արվեստագետ գործընկերների կողմից: «Հայ արվեստի ասպետ» կոչումը պարտավորեցնում է այդ անվանը, բարոյական արժեքներին հավատարիմ մնալ, երբեք գործարքի մեջ չմտնել սեփական խղճի հետ: Թեև տխրորեն կատակեց նա. «70-ի շեմին արդեն ուշ է նման «գործարքների» համար, եթե մանավանդ մինչ այդ չես սովորել»:

ՍԵՐԳԵՅ ԳԱԼՈՅԱՆ

Հուրիկ Սուրուզյան (Եգիպտոս) - Եգիպտագետ, միակ կին եգիպտագետը աշխարհում: Ծնվել է 1948-ին, Բաղդադում: Եգիպտագիտություն է ուսանել Փարիզի էկոլ դը Լուվրում: Ապրում է Կահիրեում, զբաղվում է Հին Եգիպտոսի մշակույթով: Գրել է «Կահիրեի թանգարանի ուղեցույցը» (Մուհամեդ Սալեհի հետ), որը լույս է տեսել անգլերեն, արաբերեն, գերմաներեն, իտալերեն, ֆրանսերեն լեզուներով: Հոդվածներով աշխատակցել է մամուլին և եգիպտագիտական բառարանին: Դասախոսություններ է կարդացել Եվրոպայում և ԱՄՆ-ում: Զբաղվում է նաև հայ ճարտարապետության հարցերով, այցելել է Հայաստան: Կինն է գերմանացի նշանավոր եգիպտագետ Ռայներ Շթադելմանի: Եղբայրը՝ Զարեհ Սուրուզյանը, փիլիսոփայության դասախոս է Կանադայում, քույրը՝ Զեփյուռ Սուրուզյանը՝ նկարչուհի (ուսանել և հայտնի արվեստագետ է դարձել Իտալիայում):

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԸ

Պարը արտահայտում է յուրաքանչյուր մի ազգի բնորոշ գծերը, մանավանդ բարքն ու քաղաքակրթության աստիճանը:
ԿՈՄԻՏԱՍ

Հայ ազգային պարի սկզբնավորման պատմությունը. Դեռևս ամենապարզունակ հավատալիքների առաջացման պահից պարը օրգանապես միահյուսվել է տվյալ միջավայրի ծեսերին: Հնուց ժողովուրդների կյանքում պարին մեծ դեր էր հատկացվում: Ինչքան շատ էին զարգանում մոգությունն ու հմայությունները, ավելի ուշ նաև կրոնը, այնքան բարդանում էին տարբեր նախնի - տոտեմների, ոգիների, աստվածությունների պաշտամունքին վերաբերվող պարային գործողություններով ծեսերը՝ ստանալով ավելի ու ավելի բարդ արտահայտչական տեքստ - ձևավորում, ավելի բարդ թատերականացում:

Մոգական ծեսերում իր արտահայտությունն է գտել նախնադարյան մարդու բնությունը «վերափոխելու» երազանքը:

Շատ թատերականացված պարային ներկայացումներ փոխանցում էին համայնքի, ցեղի կամ ժողովրդի «պատմությունը», էպոսներ և առասպելներ՝ տարբեր նախնի - տոտեմների, հերոսների, ոգիների, կուռքերի կյանքի մասին, նրանց կերպարանքի և արարքների արտացոլմամբ: Նրանք սովորաբար խաղարկվում էին ընծայական ծեսերի ժամանակ, երիտասարդությանը իր ցեղի «պատմությունը» ուսուցանելու համար:

Պարային թատերականացված ներկայացումները նաև բնության պտղաբերության, բուսական և կենդանական աշխարհի աճի, աշխատանքում, որսի ժամանակ, պատերազմում, ձկնորսության մեջ, հաջողության կոչող մոգական ակտեր էին:

Պարային թատերականացված ներկայացումների շարժումներով նմանակում էին ներկայացվող իրական և ֆանտաստիկ կերպարների շարժումներին և համայնքի անդամների գործունեության այն ոլորտի շարժումներին, որոնց վրա անհրաժեշտ էր «ներգործել - կոչել հաջողությունը», օրինակ՝ աշխատանքային, որսորդական, ձկնորսական, ռազմական, մրցողական և այլ շարժումներին:

Այլ շարժումների - դրական մոգության ակտերի մի ամբողջ շարքով «ապահովում» էին սեփական առողջությունը, հաջողությունը, թշնամու հանդեպ հաղթանակը:

Աշխատանքային գործիքների, սպասքի, ամենօրյա և տոնական հագուստի, կացարանի կահավորանքի, զենքի զարգացմանը զուգահեռ զարգանում էին նաև գործողությունների բովանդակության հետ կապված սրբազան գործողությունների պիտույքները, նրանց ռեկվիզիտների առարկաները, գործող անձանց հանդերձանքը, նրանց գլխարկները, դիմակները, կոշիկները, երաժշտական գործիքները, սիմվոլիկ զարդանախշերն ու նկարները:

Ժողովրդական պարային թատերականացված ներկայացումներում, կախված նրանց նշանակությունից և բովանդակությունից, մասնակցում էին միայն աղջիկները (կամ կանայք, կամ համատեղ), միայն տղամարդիկ (միայն ազապները, կամ միայն ամուսնացածները, կամ համատեղ), միայն երեխաները (մեկ կամ երկու սեռերի), ինչպես նաև համայնքի ամբողջ բնակչությունը համատեղ:

Համայնքի յուրաքանչյուր չափահաս անդամ (ինչպես՝ երեխա, այնպես էլ դեռահաս) իր տոհմավագի հսկողության տակ մասնակցում էր մոգական և պաշտամունքային նշանակությամբ իր սեռին և հասակին համապատասխան գործողություններին:

Երբ պաշտամունքի կատարումը կենտրոնացավ արհեստագետ պատարագիչների ձեռքում, թատերականացված պարային գործողությունների որոշ ձևեր սկսեցին կատարել միայն յուրաքանչյուր աստվածության պաշտամունքի սպասավորները և նրան հաղորդակից աղջիկներն ու տղաները:

Շատ հին ժամանակներից է ընթանում նաև աշխարհիկ պարերի, մրցությունների և խաղերի զարգացումը: Պարերը, երգեցողությունը, երաժշտական գործիքների վրա նվագակցումը, ակրոբատիկան, մրցությունները ու խաղերը սկսեցին ավելի հաճախ ծառայել ոչ միայն պաշտամունքային գործողությունների, մոգության և կրոնի նպատակներին, այլև՝ աշխարհիկ արվեստի նպատակներին:

Հայ ժողովրդի հնագույն պարերի մեզ հասած ժառանգությունը հաստատում է ծիսական պարերում տեղային առանձնահատկություններն ու նրանց պահպանումը հայերի կողմից: Հեթանոսական ժամանակաշրջանի մասին եզրակացությունները թելադրվում են ինքնաբերաբար հին գրողների մատնանշումներով, ըստ հնագույն Հայաստանում հեթանոսական տաճարների բաշխվածության, տարբեր վայրերում՝ տարբեր աստվածությունների պաշտամունքով:

Միաժամանակ իր սովորությունների և մշակույթի ժառանգության - էպոսի, առասպելների, պարերի, ինչպես նաև տոնակատարությունների և պաշտամունքների պահպանման ձգտումը վկայում է, որ հայկական և օտարերկրյա աստվածությունների կերպարների, անունների ու պաշտամունքների հետ խաչասերման ընթացքում պետք է հաղթեին համահայկական և տեղային սովորույթները և տեղային աստվածության գործունեության բնորոշիչ առանձնահատկությունները, նրա պաշտամունքը և նրան նվիրված պարային ներկայացումները:

Իր նախնիներից ժառանգած շարժումային պարային արմատական ֆոնդի հիման վրա հայ ժողովուրդը ստեղծեց իր հիմնական պարային համաժողովրդական շարժումային ֆոնդը՝ նրա հետագա լրացումներով և զարգացումներով, ինչպես նաև հնացած և այլևս չօգտագործվող շարժումների պարբերական վերացումով: Դեռևս 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին հայ ժողովրդի տարեկան մեծ տոներից շատերի հետ էր կապված բազում ավանդական հին ծիսական պարերի և թատերականացված ներկայացումների կատարումը: Հաճախ որոշ նախկին ծիսական պարեր կատարվում էին սովորույթի ուժով, քանզի նրանց անցյալ մոգական նշանակությունները սկսել էին ժողովրդի կողմից մոռացության մատնվել:

Շատ աշխարհիկ պարեր սկսեցին առանձնանալ հետզհետե մոռացվող ծիսական գործողություններից: Իսկ աշխարհիկ պարերի որոշ տեսակներ ստացան խնջույքային բովանդակություն:

Հայկական պարերի կատարման տեղը և ժամանակը.

Հայկական պարերը կատարվում էին բաց երկնքի տակ և ծածկված շինություններում:

Բաց երկնքի տակ կատարվում էին համաժողովրդական տարեկան կրոնական տոների ժամանակ. **Տրնդեզ, Համբարձում, Վարդավառ, Բարեկենդան** և այլն:

Հայկական պարերը բաց երկնքի տակ էին կատարվում նաև ուխտավայրերում:

Հարսանեկան ծիսակատարության ժամանակ պսակադրության համար դեպի եկեղեցի գնալու ամբողջ ճանապարհին, պսակադրության ժամանակ և փեսայի տան ճանապարհին մասնակիցների պարերը նախկինում չար ոգու խարդավանքից և չար աչքից պաշտպանելու խնդիրն էին կրում:

Բաց հրապարակում էր կատարվում նաև հուղարկավորության պարային երգը և թաղման պարերը:

Հայերը պարերը կատարում էին նաև ծածկված շինություններում:

Հեթանոսության շրջանում, Հին Հայաստանի տաճարներում կատարվում էին ծիսական Տաճարային **պարեր - Պարք Մեհենականք:**

Փակ շինություններում բնակչությունը ավելի շատ պարում էր ձմեռը:

Տարվա տաք եղանակին դա տեղի էր ունենում այն ժամանակ, երբ պարերով ծեսերը պետք է կատարվեին կացարաններում:

Յուրաքանչյուր գյուղում և քաղաքում գոյություն ուներ հրապարակ կամ պարապ տեղ, որտեղ տարբեր տոնակատարությունների ժամանակ կազմակերպվում էին հասարակական պարեր և խաղեր:

Հնում պարերի, թատերականացված գործողությունների, խաղերի և մրցույթների մի ամբողջ շարք կանոնակարգված էր՝ ըստ կատարման ժամանակի: 20-րդ դարի սկզբին արդեն ծիսական մի շարք պարեր սկսեցին կատարվել իրենց ծեսերից դուրս, ցանկացած ժամանակ, ցանկացած տեղում:

Պարերի կատարման հերթականությունը նույնպես խիստ կանոնակարգված էր:

Հայկական պարերի մասնակիցների քանակը, սեռը և տարիքը.

Ըստ մասնակիցների քանակի, հայկական պարերը բաժանվում են կոլեկտիվ, խմբային, զույգային և մենապարերի:

Կոլեկտիվ պարերում կարող էին մասնակցել միանգամից անսահմանափակ քանակով պարողներ: Խմբային պարերում, որոնք հիմնականում ավելի կատարողական բարդություններ էին կրում, հնարավոր չէր մարդկանց մեծ քանակով պարել և պարում էին 10, 15, 20 հոգով:

Կախված կոլեկտիվ պարի նշանակությունից և բովանդակությունից՝ այն կարող էին կատարել առանձին կամ համատեղ՝ ամուսնացած տղամարդիկ, կանայք, պատանիները, օրիորդները:

Հին հայկական կոլեկտիվ պարերը այս կամ այն սեռի և տարիքի անձերի մասնակցությամբ, բաժանվում են կանանց և տղամարդկանց պարերի, պատանիների և օրիորդների պարերի, աղջիկների և տղաների-մանկական պարերի:

Մեզ հասած հայկական կոլեկտիվ պարերի ահռելի քանակի համեմատ՝ խմբական պարերի, զուգապարերի և մենապարերի քանակը այնքան էլ մեծ չէ, սակայն մեզ են հասել այս պարատեսակների որոշ անգին գոհարներ:

Հայկական պարերի տարատեսակները

Հայկական պարի հիմքը զիստային (զսպանակավոր) շարժումներն են: Սակայն նույնիսկ դրանում խիստ տարբերություն կա, թե մեկ պարային քայլի ընթացքում քանի զսպանակ է արվում, ըստ որում՝ այդ զսպանակներն էլ կարելի է անել խորը կամ շատ մեղմ:

Հայկական պարերը կարելի է բաժանել ըստ մի քանի բաղկացուցիչների: Նախ և առաջ, կատարման բնույթով պարերը կարելի է բաժանել **երեք** մեծ խմբերի. **1.** պարերգեր, որոնք զուգորդվում են երգերով, **2.** ազգային երաժշտական գործիքներով են նվագակցվում, **3.** նախորդ երկուսի համադրումով:

Կարելի է տարանջատել նաև շարժումների ձևերով՝ **կենցաղային, աշխատանքային, արտահայտչական, նմանակող, նկարագրող, խորհրդանշական, պայմանական:**

Կոլեկտիվ և խմբակային պարերը տարբերվում են իրարից նաև ձեռքերը բռնելու ձևերով՝ **ճկույթներով, ափերով, խաչված ափերով, ուսերով, գոտկատեղից:**

Իսկ ամենակարևոր տարանջատումը պարերի բովանդակությունն է, որոնց մեծ մասը հնում ունեցել է բանավոր տեքստային զուգադրում և իրենց բովանդակությամբ բաժանվել է հետևյալ խմբերի՝ **առասպելական, ծիսական, էպիկական, աշխարհիկ, լիրիկական, աշխատանքային, պաշտամունքային, ռազմական, ճանապարհի, որսորդական, լարախաղացների, մանկական** և այլն**:**

Պարերի մասին խոսելուց չի կարելի չնշել նաև հայկական տարազների առանձնահատկությունների մասին, որոնք ոչ միայն իրարից շատ տարբեր են, այլև բնորոշում են այն տարածաշրջանը, գավառը, նահանգը, որը ներկայացվում է:

Պարերը տարբերվում են նաև իրենց տարածքային պատկանելությամբ, քանի որ բնակլիմայական պայմաններն իրենց անջնջելի հետքն են թողել նրանց վրա:

Հայկական պարարվեստը ունի պահպանված այնպիսի նմուշներ, որոնք արժանիորեն կարող են համալրել համաշխարհային պարային գանձարանը, եթե իհարկե նորից հայտնվեն ուշադրության կենտրոնում:

ԳԱԳԻԿ ԳԻՆՈՍՅԱՆ

Նկարներում՝ «Կարին» երգի պարի ազգագրական համույթի ելույթը Օձունում:

ԱՂՁՆԻՔԱՀԱՅԵՐԻ ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐՆ ՈՒ ԾԵՍԵՐԸ

Աղձնիքահայերի ավանդական, առավելապես գյուղական հասարակության մեջ, ամուսնությունը՝ հարսանիքը, պարտադիր հեղինակություն ու հարգանք վայելող ամենանշանակալից իրադարձություններից էր: Աղձնիքում գյուղական համայնքի գործող իրավասովորութային կարգի պայմաններում՝ ամուսնությունը պաշտոնապես ճանաչվում և իրավական կիրարկման ձև էր ստանում հարսանեկան ծեսերի ու սովորույթների բազմատարր համակարգի իրագործումից հետո միայն: Հարսանեկան ծիսաշարը ներառում էր երեք հիմնական փուլ՝ խնամախոսություն, նշանադրություն և հարսանիք:

Խնամախոսության գործընթացը սկսվում էր աղջիկտեսից, որը տղայի մոր և մերձավոր ազգական կանանց գործն էր ու նպատակ ուներ մի կողմից տեսնել և հավանել ապագա հարսնացուին, մյուս կողմից էլ շոշափել աղջկա մոր ու մերձավոր կանանց կարծիքն ու վերաբերմունքը: Աղջկա հոր տուն էին ներկայանում տղայի մայրը, մորաքույրը և այլ հարազատներ: Հյուրերը բարեհաճ ընդունվում էին, նստեցվում փռոցներին ու սպասում՝ մոր կանչով աղջկա հայտնվելուն: Աղջիկը խոնարհաբար բարևում էր եկվորներին, ապա հերթով համբուրում՝ նրանց ձեռքը: Աղջիկտեսի եկած կանանցից ավագն այդ ընթացքում ուշադիր զննում էր աղջկա դեմքը, քայլքը, ատամները, խոսեցնում՝ ստուգելով ձայնը: Նախնական զննումից ու հավանություն տալուց հետո տղայի ծնողներն աղջկա տուն էին ուղարկում իրենց պատգամախոսին՝ աղջկա ձեռքը խնդրելու: Խնամախոսության գնացողը «ուզնկան» էր կոչվում, իսկ ծիսակատարությունը՝ «ուզնկանություն», որն արվում էր գաղտնի, որպեսզի անհաջողության դեպքում կողմերի արժանապատվությունը վիրավորված չլինի: Համաձայնության գալուց հետո պայմանավորվում էին «խոսքկապի» մասին:

«Խոսքկապ» կոչվում էր այն պայմանավորվածությունը, որը տեղի էր ունենում խնամի դառնալու ցանկություն ունեցողների միջև: Նախապես լուր ուղարկելով՝ տղայի հարազատները քահանայի ուղեկցությամբ, կիրակի օրը՝ երեկոյան, աղջկա ծնողների տուն էին գնում խնամախոսության՝ խոսքառումի: Ամենատարբեր կողմնակի խոսակցություններից հետո քահանան կամ քավորը հայտնում էր գալու նպատակը: Համաձայնությունից հետո սկսվում էին խոսքառումի թեթև հացկերույթը, շնորհավորանքներն ու մաղթանքները: Այսքանով ավարտվում էր խնամախոսության փուլը, որին պիտի հաջորդեր նշանադրությունը, որը կոչվում էր *«նշանդրեք»* կամ «*նշանտուք*»:

Նշանդրեքն ամուսնահարսանեկան ծեսերի առաջին փուլի վճռորոշ պահն էր: Նշանդրեքից մի քանի օր առաջ փեսացուն և նրա հայրը, քավորին նվեր արվող գառան վզին կարմիր երիզ կապած, գնում են քավորականչի, որպեսզի նրան մասնակից դարձնեն նշանդրեքի ծեսին: Տղայի կողմից նշանդրեքին մասնակցում էին 10-12 հոգի, ովքեր կոչվում էին «նշանավորներ», աղջկա կողմից՝ մոտ 15 հոգի: Տոնականորեն զգեստավորված նշանավորներին աղջկա հոր տանը դիմավորում էին հոտնկայս: Այնուհետև սկուտեղով մեջտեղ էին բերում հարսնացուի նվերները: Նվերների մեջ շատ էին լինում զանազան ոսկե, արծաթե և վաղարծե զարդեր:

Նշանդրեքին փեսացուին ու հարսնացուին ներկայացնում էին միայն նշանը հանձնելու պահին: Հարսնացուն ներկայանում էր որևէ տարեց կնոջ ուղեկցությամբ՝ գլուխը խոնարհած՝ նշանացի ողջունելով ներկաներին: Քահանան օրհնում էր բերված նվերները և հերթով տալիս հարսնացուին: Քահանան կատարում էր նաև հաց կտրելու արարողությունը: Իրար վրա դրված երեք լավաշների մի կողմից բռնում էր տղայի, մյուսից՝ աղջկա հայրը: Խնամիները, երիցս տալով նշանադրության հարցում իրենց փոխադարձ համաձայնությունը, ձգելով կտրում էին լավաշները, մի մասը՝ հարսին, մյուսը՝ փեսային՝ ուտելու: Այս պահերը կոչվում էին «կեսպսակ»: Այս ամենից հետո սկսվում էր նշանդրեքի հացկերույթը՝ շնորհավորական կենացներ ու բարեմաղթանքներ:

Աղձնիքահայերի ամուսնահարսանեկան սովորույթներում ուրույն տեղ ուներ ևս երկու կարգի երևույթ՝ օժիտը (ջհեզ) և գլխագինը (խալամ կան ղալան): Ըստ սովորության՝ նշանադրությունից հետո կողմերը պայմանավորվում էին, թե ինչ նյութական պարտականություններ ունեն իրենցից յուրաքանչյուրը: Այդ պայմանը կայացնելու պահը հայտնի էր «ղալան կտրել» և «խալանկտուր» անվամբ, որ բառացի նշանակում է «գլխագնի որոշում»: Օժիտը տանում էին գլուխլվանեքի օրը: Հարսանիքից ութ օր առաջ հարսի մայրը կլոր հացի վրա դրված մի գունդ հալվա աղջիկների կամ պատանիների հետ ուղարկում էր գյուղի բոլոր տները՝ կանչի: Իսկ հաջորդ օրը գրեթե բոլորը գալիս էին օժիտ բանալու: Նշանդրեքից հետո խնամիները պատրաստվում էին հարսանիքին: Խնամիների նյութական կարողություններին համապատասխան՝ հարսանիքը տևում էր 3-7 օր:

Հարսանիքը սկսելուց մեկ օր առաջ, տղայի հետ մի տղամարդ գնում էր հարսնացուի հոր տուն՝ հարսնացուի հետևից գնալու օրվա ու ժամի վերաբերյալ հաղորդելու: Այդ մարդը հայտնի էր «աղվես» անունով:

Հարսանեկան ծեսերը սկսվում էին հինգշաբթի օրվանից, որը հայտնի էր հաց ու խմորի օր անվամբ, իսկ ուրբաթ օրը հարսանիքի բուն գործողությունները սկսելու օրն էր, հայտնի էր եզ մորթելու կամ մսացուի օր, մակարխաչեղբայրների կամ ազաբչարիների օր, փեսացուին ածխելու և լողացնելու օր անվանումներով: Այդ օրը երեկոյան տեղի էր ունենում մակարների ընտրությունը: Ուրբաթ օրն աղջկա տան ծիսական անունը հայտնի էր «ծաղկոց» ձևով: Հարսնացուի տունը հարսնացուին ուրախացնելու համար նրա շուրջն էին հավաքվում իր ամենամտերիմ ընկերուհիները, որոնք ծաղկևոր էին կոչվում: Որոշվում էր ուղեկցող հարսնաքույրը և հարսնեղբայրը: Մակարների և հարսնաքույր-ծաղկևորների հիմնական դերերը հարս ու փեսային «պաշտպանելն» էր: Հարսնացուի և փեսայի թիկնապահներ ընտրելուն զուգընթաց տեղի էր ունենում հարսանիքին հրավիրելու ծեսը, որ հայտնի էր կոչընկան անվամբ:

Բուն հարսանյաց հանդեսը, որով վերջնականապես վավերացվում և ավարտին էր հասցվում ամուսնությունը, բաժանվում էր հետևյալ փուլերի՝ հարսնառ, հարսանեկան հանդես, պսակ և առագաստ: Այս ամենն իրագործվում էր մի շարք ծիսական - մոգական գործողություններով, ինչպիսիք էին՝ հարսին հագցնելու, փեսային սափրելու, լողացնելու և հագցնելու, ուռք կամ նուռծ կոչված փեսածառը զուգելու և այլ ծեսերով, որոնք լրացնում, ամբողջական տեսք էին հաղորդում և առավել բազմերանգ դարձնում հարսանեկան հանդեսը:

ԱՐՏԱԿ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՍԻՊԻԼ

(ԶԱՊԵԼ ԱՍԱՏՈՒՐ, 1863-1934)

(Սկիզբը՝ «Վասն հայության» պարբերական, թիվ 105-107, 2004թ.)

Սիպիլը՝ Հայկանուշ Մառքի «Հիշատակներ»-ում

Էսայան վարժարանի Սիպիլի սաներից Հայկանուշ Մառքը (հետագայում՝ անվանի խմբագիր, գրող, հրապարակախոս) 1945թ. հրատարակեց իր «Հիշատակներս Էսաեան վարժարանէն» գիրքը: Որտեղ, ինչ խոսք, լուսավոր մի տարազով մեզ է ներկայանում Սիպիլ երեւույթը. «Սիպիլի անունը այդ պահուն մանաւանդ մոգական հմայք մը ունէր, եւ ճիշդ այդ միջոցին էր, որ մեզի աւետեցին, թէ ան մեր ուսուցչուհին պիտի ըլլար: Ամէնս մեկ խենթացեր էինք, մեր ընդունելութիւնը եղաւ միանգամայն պատկառոտ եւ սխրալի եւ անկարգ: Երբ դասարանէն ներս մտաւ, արդէն ոտքի էինք բոլորս... պիտի ծափահարէինք, եթէ չքաշուէինք:

Անշուշտ, որ հպարտ էի Սիպիլին աշակերտուհի ըլլալով»:

Տարիներ անց այդ նույն աշակերտուհին հանդես եկավ առանձին բանախոսությամբ՝ նվիրված Սիպիլին, որում անդրադարձավ նրան՝ իբրև կին և մայր, իբրև գրագիտուհի և բանաստեղծ, ուսուցիչ, հանրային գործիչ: Այս վերլուծությունը հարուստ նյութ է տալիս մեզ՝ երկուստեք թե՛ Սիպիլի և թե՛ նրա սանուհու մասին՝ իբրև մտավորականների: Միևնույն ժամանակ, այն լավագույնս լրացնում է Գ. Զոհրապի և Հ. Ասատուրի կերտած դիմանկարները:

Ահա, թե ինչ է ասում Հայկանուշ Մառքը. «Սիպիլ՝ Իւսկիւտարի սխրալի միջավայրին եւ արուեստագէտ մօր մը օրօրումներով սկսած է ներշնչում գտնել...:

Սիպիլ՝ իբր կին, անսովոր կին մըն էր: Ան բացարձակապէս իմացական կին է, եւ հակառակ կեանքին ընծայած անակնկալներուն՝ միշտ մնացած է բարձրութեան մը վրայ, զոր իր սիրտն ու միտքը ընծայած են իրեն: Ունէր ցասման բորբոքուն պահեր, իր ճշմարտասէր եւ խրոխտ հոգին անիրաւութեան կամ խաբկանքի դէմ կը պայքարէր:

Մեծ գեղապաշտ մըն է եւ շնորհալի տանտիկին միեւնոյն ատեն: Գիտէր առանց ճիգի առինքնել իր ունկնդիրները: Եւ բանաստեղծ էր ան ամէն բանի մէջ: Սիպիլի տունը մագնիսական հմայք մը ունէր, եւ հաւատարիմները ամէն անգամ հաղորդուած կը մեկնէին հոնկէ: Աղուոր անկիւն մըն էր ան, գեղարուեստի բոյն:

Մայրութիւնը վեհ բան մը ունէր Սիպիլի մէջ: Անտարակոյս, մեծ սէր, բայց երբե՛ք՝ տկարութիւն: Իր երկու աղջիկներն ալ իր շունչով տաքցան, այնքա՜ն մեծ էր իր հեղինակութիւնը: Յուզիչ եւ վսեմի տարուած յղացում մըն է Սիպիլի մայրական սէրը: Սիպիլի մայրութիւնը տարածուած էր նաեւ իր շուրջիններուն վրայ»:

Հ. Մառքը այնուհետեւ անդրադառնում է Սիպիլին՝ իբրև բանաստեղծուհու և գրագիտուհու, որոնք, մասնավորապես, ուշագրավ են գրականագիտական, արվեստաբանական տեսանկյուններից. «Մեր ականջները օրօրուեցան սխրալի երաժշտութեամբ մը, մեր աչքերը զմայլեցան, մեր հոգիները թրթռացին»: Հ. Մառքը նկատում է նաև, որ Սիպիլը «ունեցաւ անշուշտ դանդաղումներ, ո՞ր գրագէտն էր, որ պիտի յաւակնէր զիկզակներ ունեցած չըլլալ»: Ապա հավելում, թե «Լեզուն եւ քերթուածները իրաւունք կուտան մեզի զինքը ընդունելու մեր մեծ վարպետներէն մին»:

Այս նույն տեսակետն ունի նաև Դանիել Վարուժանը, հատկապես՝ հայոց լեզվի զարգացման մեջ Սիպիլի խաղացած դերի հարցում:

ՓԱՌԱՆՁԵՄ ՍԱՐԳՍԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՈՐՈՆՈՒՄ ԵՆ ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԴԱՐՁԱԾ ՀԱՅ ՈՐԲԵՐԻՆ

Ըստ «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթում տպագրված լոնդոնյան BBC-ի հաղորդագրության, Բերքե Բաշ անունով վավերագրական ֆիլմեր պատրաստող մի թրքուհի մեկնել է իր ծննդավայր՝ սևծովյան Օրդու քաղաք որոնելու հայ որբերի, որպեսզի նրանց մասին փաստագրական ֆիլմ նկարահանի: Այնտեղ իր ազգականների հետ զրուցելուց պարզել է, որ իր ծնողները ևս ժամանակին որդեգրել են հինգ հայ երեխաների:

Մինչ օրս եղեռնի օրերին թուրք ընտանիքների փրկած և մահմեդական դարձրած երեխաների պատմությանը ոչ ոք չի անդրադարձել: Եվրոմիությանն անդամակցելու Թուրքիայի համառ ջանքերի շրջանակներում ծայր առած Հայոց ցեղասպանության քննարկումները հավանաբար առիթ են ընձեռել, որ վերացվի տաբուն այդ բնագավառում:

«Հավատացած եմ, որ դժվար է լինելու: Մարդիկ դժվարությամբ են արձագանքում իմ նախաձեռնությանը՝ հարցնելով, թե ինչու եմ փորփրում անցյալը»,- խոստովանել է Բաշը՝ նշելով, որ շատ թուրք ընտանիքներ ժխտում են, որ երբևէ հայ անդամներ են ունեցել իրենց ընտանիքներում:

«Բայց մենք գիտենք, որ դրանք այնքա՜ն մեծ թիվ են կազմել, որ Օսմանյան կայսրության իշխանավորները գաղտնի կարգադրություն են արել, կպատժեն բոլոր նրանց, ովքեր հայ երեխաներ են փրկել՝ թաքցնելով իրենց ընտանիքներում»,- հավաստում է Ստամբուլի Բոսֆորի համալսարանի պատմաբան պրոֆ. Սելիմ Դերինգիլը:

«Մահմեդական դարձած այդ քրիստոնյաները վախենում են խոսել իրենց անցյալի մասին: Եթե մի թուրքի այսօր ասեն, որ ծնողները հայեր են եղել, նրան «գյավուր» են անվանում, անհավատ՝ որակում և դասում՝ հասարակությունից մերժվածների թվին»,- Բաշի հետ զրուցելիս նշել է «Ակօս» թերթի խմբագիր Հրանտ Դինքը, որը հաճախակի է առնչվում այդ հարցին և փորձում իր թերթի միջոցով օգնել հարազատներին փնտրող հայրենակիցներին:

Հ.Օ.

ՀԻՆ ԹԻՖԼԻՍԸ ԵՎ ԳԱԲՐԻԵԼ ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ (1825-1912)

Ա. «Հին Թիֆլիզը հայոց գրականության էլ երկու մեծ անուն է թողել - Սայաթ-Նովա և Գաբրիել Սունդուկյան»,- գրում է Հովհաննես Թումանյանը: Սունդուկյանի ստեղծագործության ինքնատիպությունը և պատմական բովանդակությունը Թումանյանը խորագիտորեն պատճառաբանում է հին Թիֆլիսի իրականությամբ՝ քաղաքի պատմության մեջ առանձնացնելով հին և նոր շրջաններ: Սունդուկյանագիտությունը, ցավոք, շրջանցել է այս կարևոր դիտարկումը: Եվ, իրոք, ինչո՞վ էր առանձնանում «Հին Թիֆլիզը»: «Էն մի առանձին, յուրատեսակ աշխարք էր,- գրում է Թումանյանը,- որի մեջ եկել-միացել էին կովկասյան ժողովուրդներն, ամենքն իրենց առանձնահատուկ կյանքով ու երանգով և հորինել էին ազգերի մի վերին աստիճանի գրավիչ ու հետաքրքրական խառնուրդ ու կյանք:

…Երբ ես առաջին անգամ Թիֆլիզ եկա՝ ուսումնարան մտնելու, ինձ թվաց, թե ընկա մի հարսանքատուն, ուր հրավիրված էին Կովկասի բոլոր ազգերն ու ցեղերը՝ քեֆ քաշելու: …Զուգված, զարդարված, շրջխկում ու զրընգում էր ամբողջ քաղաքը: …Էսպես էր ապրում հին Թիֆլիզը-գժի նման»: Ըստ էության, Թումանյանի բնութագրած հին Թիֆլիսի հանրության կյանքը կենսագործվում էր դեռևս համայնքային կազմակերպվածության սկզբունքներով:

Միջնադարի ավատական ավտարկիկ, ներփակ, ինքնաբավ համայնքը շատ հետազոտողներ համեմատել են մեղվափեթակի հետ, ինչը բավարարվում է սեփական արտադրանքով և քայքայվելիս՝ մշտապես վերաստեղծվում է միևնույն սկզբունքով ու կերպով: Հայտնի է, որ համայնքը կարգավորող բարոյահոգեբանական արժեքները ստեղծվում են հավաքականորեն՝ կոլեկտիվի կողմից: Գերագույն արժեքները ստեղծող սուբյեկտը, ըստ էության, համայնական հանրության հավաքական կամքն է, ինչը միտված է տվյալ հանրության համընդհանուր բարօրությանը, այդ իսկ պատճառով էլ կյանքի կոչված բարոյականությունը մշտապես արդար է և ճիշտ: Կոլեկտիվի փորձից որոշարկված ավատական մշակույթը՝ հանրության կյանքում մակածում է բարոյական և հոգեբանական միակամություն: Անհատի կեցությունը համայնքում, առանց ազատության կորստի, իդեալականորեն ներդաշնակվում է ընդհանուր համակեցությանը: Բարոյական նորմը, այս պարագայում, հետերոնոմ չէ, չի պարտադրվում դրսից, այլ ինքնորոշ է և բխում է կոլեկտիվի դեռևս չտարբերակված ես-ից, նրա հավաքական էությունից և շարունակում է փոխանցվել սովորույթի ուժով, սովորութենական հոգեբանությամբ:

«Մեզ ծվատող խղճի խայթը, վիշտը, անհանգստությունները ու տագնապները չէին բնակվում նրանց հարկերի տակ: Այնտեղ, ընդհակառակը, թագավորում էր խոնարհ պարզությունը, բնական ուրախությունը, անմիջական մաքրությունը և հասարակ անմիջականությունը: …Աշխատանքը նրանց համար վերածվում էր զվարճանքի ու հաճույքի: Համայնքում սիրում էին իրար այն պատճառով, քանզի բոլոր էակներն ուժեղ էին իրենց միասնության չափով: Թագավորում էր լիակատար վստահությունը» (Д. Л. Дешан, Истина, или истинная система, М. 1973. с. 220): Այդ առումով, տեղին է նաև ռուս մտավորական Ռ. Իվնևի Թիֆլիսից ստացած առաջին տպավորությունը. «Ոչ մի տեղ կյանքը այնպես չես զգում, ինչպես՝ այստեղ: Քաղաքը ամբողջությամբ վառ արևային գույների մեջ է: Այդ պատճառով էլ վիշտն այստեղ ավելի դառն է, ուրախությունն՝ առավել բուռն, իսկ սերը գեղեցիկ է և բռնկուն: Այստեղ գորգերն անգամ թափ են տալիս ինչ-որ առանձնահատուկ ուրախությամբ: Մրգավաճառները և բանջարեղեն վաճառողները, ավելի շուտ, նման են պատահաբար այստեղ հայտնված ծաղրածուների: Նրանք չեն կարող հանգիստ խոսել, նրանք պետք է հռհռան, ծիծաղեն, սրամտեն՝ չխնայելով անգամ իրենց սեփական ապրանքը» (Р. Иванов, У подножия Мтацминды, М., 1973, с. 158):

Սակայն այդ ամենն այնքան ժամանակ, քանի դեռ համայնքն ունի իր իդեալական տեսքը: Համայնքի ինքնաբավությունը վտանգում են հիմնականում երկու գործոն: Առաջինը դրա մշակույթի ոչնչացումն ու այլասերումն է: Մինչդեռ համայնքը հենց այդ մշակույթով է դառնում օրգանիզմ, այդ մշակույթը նրա կենսոլորտն է: Համայնքի կյանքում արմատացած պատմական և բնական հանրակեցության պայմանները և արժեքները ամրակայվում են ժողովրդի բնազդի մեջ: Եվ քանի որ համայնքը դարեր շարունակ պարզ վերարտադրության մեխանիզմով կարողանում է հարատևել, ապա իր բարոյական արժեքները միջնադարի մարդը ընկալում է ոչ թե որպես պատմական, այլ որպես բնական, հավիտենական արժեքներ: Այդ պատճառով էլ կոլեկտիվ ենթագիտակցությունը ընդգծված մերժողական կեցվածք ունի եկամուտ կենցաղավարության, կյանքը կազմակերպող օտար և խորթ սկզբունքների ու արժեքների հանդեպ:

19-րդ դարում համայնքային մշակույթները սկսում են այլասերվել եվրոպական քաղաքակրթությամբ և կենցաղավարության ընդօրինակումներով: Օսվալդ Շպենգլերը կարծում է, որ քաղաքակրթությունը հակոտնյա է էթնիկ մշակույթին: Եթե մշակույթը խորքային իրողություն է, ապա քաղաքակրթությունը ունի տարածականորեն ծավալվելու միտում, ինչն այլասերում և ոչնչացնում է տվյալ համայնքի կուլտուրան, դիմազրկում՝ ժողովրդի անհատական նկարագիրը: Հ. Թումանյանի կարծիքով՝ այդ պատճառով էլ «կորչում է ժողովուրդների անհատականությունը, առանձին ոգին, սեփական գույն ու երանգը, էն ամենը, որ էնքան բնական են, ինչքան իրանց երկրի կլիման ու բնությունը և ինչով որ նրանք կենդանի են, գեղեցիկ են, մեծ են: Չէ՞ որ ամեն ուժ սնունդ է առնում, զարգանում ու մեծանում իր հարազատ կլիմայի մեջ…»:

Տնտեսության զարգացումն է համայնքն այլասերող երկրորդ գործոնը: Ռուս հասարակագետ Պլեխանովի կարծիքով հին սովորությունները չքանում են, հին արարողությունները խախտվում են այն ժամանակ, երբ մարդիկ մտնում են նոր, փոխադարձ հարաբերությունների

մեջ: Եվ համայնքը, որը դիմանում էր քաղաքական կյանքի փոթորիկներին, անզոր և անպաշտպան է դուրս գալիս տնտեսական էվոլյուցիայի տրամաբանության առջև: Փոքրային տնտեսության և ապրանքային արտադրության զարգացումը փոքր առ փոքր փորում է այդ ներփակ կեցության հիմքերը: Տնտեսական քայքայող գործոնին գումարվում է նաև «պետության քայքայիչ ազդեցությունը, պետություն, որին հանգամանքների բուն իսկ ուժը հարկադրում է պաշտպանելու անհատականության սկզբունքը», ինչին համայնակեցությանը բնորոշ կոլեկտիվիզմի մշակույթի դիրքերից դիմակայում է համայնական հոգեբանությունը և այդ հոգեբանությունը կրող գրավոր մշակույթը:

Գ. Սունդուկյանը, պետության քայքայիչ ազդեցության առումով, գրում է. «Մարթասեր, արթար տերութինը էն տերութինն է, որ չալիշ է գալի իր հալալ օրենքնիրը էնենց մտցնե էն երգրումը, յա քախկումը, վուր էս երգրի, յա քախկի ադաթնիրը ու սովորութիննիրը անդսկածի տակն ու վրա չանե»: Սակայն, զարգացման տրամաբանությունն աստիճանաբար որակափոխում էր հանրության կյանքը՝ ի հայտ բերելով հարաբերությունները կարգավորող նոր ձևեր և եղանակներ:

Եվ իրոք, ութսունական թվականներից, Հ. Թումանյանի կարծիքով, Թիֆլիզն սկսում է փոխվել, փչանալ. «Եվ հին Թիֆլիզը, որ մի առանձին ինքնուրույն աշխարք էր ու զվարթ կյանք էր ներկայացնում իր համ ու հոտով, լեզվով ու ադաթով, աղ ու հացով, նիստ ու կացով-անցել է արդեն: Անցել է և անդառնալի»:

«Դիփ տակն ու վրա էլավ միր աշխարքը, Քուռն ու քարափը էլի էնդունքին ու մարթիկը ինչ դառան,- խորը ցավով, ափսոսանքով հնչեցնում է Գ. Սունդուկյանը,- արթարութինն ու ճշմարտութինը միր մեչը մումով պըտրելու է դառիլ, ու պատվականութինը, խոսկի տեր ըլիլը, նամուս, սիրաթ, ախպըրութին խո էլ իսկի մի՛ հարցնի: Էստունց մագիեր անթիվ ու անհեսաբ խափիլ, ատելութին, նախանձ, գռփիլ, գջլիլ ու գուղութին: Պատիվն ու փառքը փուղինն է ու հարստութենինը»: Ամենուր՝ «ստութին, խափիլ, ղալբութին, շառիր, հաշաքրութին, անիրավութին...»: Մինչդեռ առաջ «միզմեն ամեն մեկը դիփունիս համա էր փիքր անում, ու դիփունքս ամեն մեկի, մարդկանց մեջ արթարութին ու մարդասիրութին կար»:

Նկարում՝ հին Թիֆլիսը:

ԱՐԱՄ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

ԵՄ-Ն ՉԻ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԿԱՐՍ - ԱԽԱԼՔԱԼԱՔ ԵՐԿԱԹԳՃԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ

«Եվրոպական Միությունը չի պաշտպանում Կարս-Ախալքալաք երկաթգծի շինարարության նախագիծը և այն անարդյունավետ է համարում»: Այս մասին Բրյուսելում Մեդիամաքսի թղթակցին տված հարցազրույցում ասել է Եվրոպական Հանձնաժողովի տրանսպորտի և էներգետիկայի Գլխավոր Տնօրինության ներկայացուցիչը, որը խոսել է իր անունը չբացահայտելու պայմանով: Նա հայտարարել է, որ ԵՄ-ն առավել արդյունավետ է համարում Կարս-Գյումրի-Թբիլիսի երկաթգիծը, որը տեղավորվում է TRACECA նախագծի շրջանակներում: «Ադրբեջանը և Թուրքիան հանդիսանում են TRACECA-ի մասնակիցներ, և մենք տեղեկացրել ենք այդ երկրներին մեր դիրքորոշման մասին»:

Նա նաև հայտնել է, որ Եվրոպական Հանձնաժողովը պաշտոնական նամակ է ստացել Հայաստանից, որում հայկական կողմը հայտարարել է Կարս-Գյումրի-Թբիլիսի երկաթգծով անցնող տարանցիկ բեռներն առանց իր տարածքում կանգառի բաց թողնելու պատրաստակամության մասին: «Հայկական կողմի այս առաջարկությունը լուրջ հույսեր է ներշնչում»,- հայտարարել է Եվրոպական հանձնաժողովի տրանսպորտի և էներգետիկայի գլխավոր տնօրինության ներկայացուցիչը:

ՀՐԱՆՏ ԴԻՆՔԻՆ՝ 6-ԱՄՍՅԱ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԱԶԱՏԱԶՐԿՈՒՄ

Ստամբուլի դատարանը 6-ամսյա պայմանական ազատազրկման է դատապարտել «Ակօս» թերթի գլխավոր խմբագիր Հրանտ Դինքին՝ «Թուրքերի ազգային ինքնությունը վիրավորելու» մեղադրանքով: Ըստ «Ասոշիեյթեդ պրեսի», դա նշանակում է, որ «ազգությամբ հայ լրագրողը չի ազատազրկվի, եթե չկրկնի արածը»: 2004թ. սկզբին իր տպագրած հոդվածներից մեկում Դինքը դիմել էր հայերին՝ հորդորելով նրանց «հրաժարվել թուրքերի հանդեպ թշնամությունից, որը թունավորում է ձեր արյունը»: «Ակօսի» աշխատակիցներից Կարին Կարաքաշիլիի կարծիքով, դատարանը ենթատեքստից դուրս է մեկնաբանել այն բառերը, եզրակացնելով, թե թուրքական արյունը, Դինքի կարծիքով, թունավոր է:

Դինքը լիովին մերժել է մեղադրանքը՝ դա որակելով քաղաքական: Նա բողոքարկելու է վճիռը գերագույն դատարանում, իսկ եթե մեղադրանքը ուժի մեջ մնա, դիմելու է Մարդու իրավունքների եվրոպական դատարան: «Եթե այդ մեղադրանքները չհանվեն իմ վրայից, ես կհեռանամ Թուրքիայից, որտեղ ապրել եմ ողջ կյանքս»,- ասել է նա:

Մեր հայրենակիցը բազմաթիվ թուրք գրողների, արվեստագետների և միությունների նախագահների աջակցությունն է արդեն ստացել: Ինչպես հաղորդում է «Թըրքիշ Դեյլի նյուս»-ը, նրան աջակցություն են հայտնել մարդու իրավունքների պաշտպանության Ստամբուլի մասնաճյուղի նախագահ էրեն Քեսքինը, նշանավոր լրագրող Ալի Բայրամօղլուն, հրատարակիչ Ռագըպ Զարաքօղլուն, Հեղափոխական աշխատավորների միության համադաշնության գլխավոր քարտուղար Մուսա Ջամը, Ստամբուլի բժիշկների միության նախագահ Գենջեյ Գյորսոյը և այլ կազմակերպությունների ղեկավարներ: «Ակօս» թերթի խմբագրություն այցելելուց հետո թուրք գրող Օյա Բայդարը մամուլին հայտարարել է. «Որպես քաղաքացիներ, ցանկանում ենք հայտնել, որ մենք հպարտ ենք Հրանտ Դինքի համաքաղաքացիները լինելով: Մենք մշտապես աջակցելու ենք նրան»:

ԹԵՈԴԻԿԻ ԵՂԵՌՆԱՊԱՏՈՒՄԸ

Ա. Հետեղեռնյան շրջանի ազգային-քաղաքական իրողությունները, որոնք «սրի և սովի մղձավանջով» անցած վերապրողների կյանքի սոսկ

շարունակությունը չէին, «այլ մի ողջ ժողովրդի աշխարհասփյուռ ներկայության գոյությունը», սերունդներին գոնե և զուտ ճանաչողության իմաստով փոխանցելը հրամայապահանջ է:

Թեոդիկի (Թեոդորոս Լապճինճյան, 1873թ. Կ. Պոլիս, 1928, Փարիզ) «Հուշարձան ապրիլ տասնմեկի» (Կ. Պոլիս, 1919թ.) կենսագրապատումը իր տեսակի մեջ բացառիկորեն առանձնանում է այն պատճառով, որ գրվել է Մեծ եղեռնից անմիջապես հետո, փորձահմուտ բանահավաքի, հրապարակագրի, հայության ամենատարբեր շրջաններում մեծ համբավ վայելող գործչի կողմից, ում նկատմամբ ճակատագրի «մեծահոգությունը» փոխհատուցվեց իր իսկ հետագա անխոնջ գործունեությամբ: (Մինչ այդ, ըստ ժամանակագիրների, Թեոդիկը նույնպես շղթայակապ աքսորվում է Դեր Զոր, հայ մարտիկների մի խմբի հաջողվում է նրան ազատել: Մինչ Առաջին աշխարհամարտի ավարտը Թեոդիկը ուրիշի անվամբ, ծպտյալ աշխատում է Տավրոսի թունելախորշերի ռազմական շինարարությունում):

«Հուշարձան ապրիլ տասնմեկի» կենսագրապատումը ընդգրկում է շուրջ ութ հարյուր մտավորականների, ազգային-քաղաքական, ազգային-կրթական, եկեղեցական գործիչների, առևտրական հանրային ոլորտի ազգապահ ներկայացուցիչների համառոտ կենսագրականները՝ նրանց կյանքի անցած ուղու և գործունեության լուսաբանումով: Գրքի առաջաբանի հեղինակ, Մեծ եղեռնի վերապրողներից, Հայ առաքելական եկեղեցու սպասավոր Զավեն եպիսկոպոսը, անդրադառնալով գրքի բացառիկությանը, կարևորում է գալոց ավանդվող, հայ պատմության այս եղեռնապատումից հառնող «փաղանգը այն հերոսներուն», որոնք իրենց ժողովրդի ստրկության շղթաների դեմ պայքարելով՝ «գաղափարին հաղթանակի» նահատակներն էին. «Այդ գիշերն էր, որ բռնակալությունը բռնակալություններեն վայրագ էր, արյունկզակը դավադրեց հայ ժողովրդի մտածող ու գործող ուժերուն դեմ: Այդ գիշերն է, որ հավաքվեցան մեկիկ-մեկիկ հայ մտավորականները, ալ անգամ մըն ալ չվերադառնալու համար, ալ անգամ մըն ալ չբախելու համար այն դուռը, որ գոցված էր իրենց ետևեն ցավի ու հուսահատության անհուն հառաչանքներու մեջեն: ...Ո՞ւր են անոնք, որ հավատացած էին, թե կրնան սպանեն Գաղափարը խարույկներու վրա՝ հրով ու սրով: Պատմությունը ծածկած է անոնց անունները մոռացության անարգ քողով: Ու մինչդեռ կլռեն անարգանքի տակ, դահիճները, զոհերը կխոսին փառքին մեջ՝ անմահներու լեզվով: Մեր հանձնախումբը, մատուցանելով հարգանքի այս պարզ, բայց սրտագին հարկը մեր

Նկարում՝ Գ. Զոհրապի ընտանիքը:

նահատակված գործիչներուն, որոնց մեջ բռնակալությունը հավակնեցավ սպանել հայ ազատագրության իդեալը, առաջնորդեցավ միակ մտածումով մը՝ տոնել գաղափարին հաղթանակը բիրտ ուժին դեմ»:

Արժանահիշատակ է, որ մեծահամբավ գործիչներից շատերի անունն այսօր հայ հասարակությանն անծանոթ է: Հանիրավի մոռացված գործիչներից Հարություն Շահրիկյանն իր ժամանակի օրենսգետ-քաղաքագետների այն սակավաթիվ ներկայացուցիչներից է, որ 1903-15թթ. Կ. Պոլսի հայ մամուլում հանդես է եկել ազգային-քաղաքական, այսօր բնավ հրատապությունը չկորցրած, հրապարակումներով:

Միևնույն ժամանակ լինելով Թուրքիայի Ազգային ժողովի պատգամավոր (Կ. Պոլիսի մեծահամբավ թաղամաս համարվող Սկյուտարից ընտրված)՝ նա զբաղվում էր ոչ միայն ընթացիկ քաղաքականությամբ, այլև՝ հրատարակում ժամանակին մեծ հնչողության արժանացած աշխատություններ («Մեր հավատամքը», «Օսմանյան կայսրության անկման պատմությունը» և այլն): Կարևոր համարելով ազգային պատմության դերը բոլոր ժամանակների համար՝ և նվիրագործվող Հ. Շահրիկյանը առանձնահատկորեն նշում է ազգի անցյալի կարևորությունը՝ ապագայի կերտման շարունակականությունը ապահովելու համար: Վերջին հաշվով, ժողովուրդների հարատևության խնդիրը հուզել և առաջնային է եղել բոլոր ազգերի համար և բոլոր ժամանակներում. «Մեծ ազգերու պատմությունը անոնց մեծ դեմքերու պատմությունն է: Զնջեցե՛ք Կեսարներու, Ալեքսանդրներու, Արիստոտելներու պատմությունը և այլևս չմնար փայլը հռոմեական, մակեդոնական և հունական մեծություններեն ու փառքերեն: Բայց այս պայմանադրական ճշմարտություն մըն է: Այդ մեծությունները չէին կրնար դարբնվիլ, եթե միջավայրը և զանոնք ծնող ժողովուրդները, որոնք ընդունակ ըլլային այդ մեծությունները ծնելու՝ անցյալի հպարտությունն ունեին, ներկային պինդ փարված են իրենց ստեղծագործություններով ու իդեալներով և, որոնք, իրավամբ, վստահաբար կը նային ապագային»: Ընդհանրապես, խոսելով ազգի և հարատևության մասին, Շահրիկյանը կարևորում է մնայուն ազգային կյանք ստեղծելն ու դրանով առաջնորդվելը, այն, ինչ չափազանց դժվարին, եթե չասենք՝ անիրագործելի էր Արևմտահայաստանում, ավելի ճշգրիտ՝ 1908-ին իշխանության եկած երիտթուրքերի իշխանության պայմաններում:

Մինչեղեռնյան և դրան հաջորդող ժամանակաշրջանները, ազգային և կյանքի տեղատվություններն ու մակընթացություններն իրենց կնիքն էին դրել Թեոդիկի եղեռնապատումում ներկայացված գրեթե բոլոր գործիչների կյանքի և գործունեության վրա: Ավելին, նրանցից շատերը և առաջին հերթին արևմտահայ իրականության թերևս ամենահավասարակշիռ ազ-

գային-քաղաքական գործիչը՝ Գր. Զոհրապը, որը նաև Թուրքիայի պառլամենտի ամենահեղինակավոր պատգամավորներից էր, անխոնջ օրենսդիր-իրավաբանի իր գործունեությամբ, տարիներ շարունակ թուրքական քաղաքական-հասարակական կյանքի հորձանուտում, մի տեսակ անփոխարինելի դեր էր ստանձնել: Ավելի իրազեկված էր և ավելի չափավոր՝ լայն բարենորոգություններ պահանջելու առումով, որպիսին Ռուսաստանի ու Եվրոպայի պետությունների թվացյալ աջակցությամբ պահանջում էին հայ քաղաքական ուժերը՝ Առաջին աշխարհամարտի նախորդ և հաջորդ տարիներին: Սփյուռքահայ գրող Անդրանիկ Ծառուկյանի բնորոշմամբ. «Զոհրապը իր ժամանակին ամենեն ճառագայթուն դեմքն էր, եւ ժամանակիցներուն աչքին՝ ազգային հպարտություն մը: Եվ ահավասիկ, որ լման հասակով մը ցցվի նաեւ ժամանակեն դուրս, բազմաշնորհ տաղանդին զանգվածովը կը տիրապետե ամենուն, բայց չի ճնշեր ոչ մեկուն վրա, արձանի մը պես, որ բոլորեն շքեղ է, լայնանիստ ու գեղեցիկ, բայց որ երբեք չի նսեմացներ շուրջի մյուս գեղեցկությունները. Մեծ եղեռնի զոհերուն մեջ Զոհրապը ընդունեցինք՝ որպես խորհրդանիշ, ոչ անպայման խառնվածքի նախասիրությամբ մը եւ ոչ իսկ արժանիքին գերազանցությամբը, այլ պարզ այն պատճառով, որ առավելաբար իր անձին եւ գործին մեջ կը գտնենք բոլոր պատասխանները այն հարցումներուն, որոնք հայ միտքը չարչարած են անցյալին, կը շարունակեն չարչարել այսօր»:

Ընդհանրապես, Հայ Միտք և Մեծ Եղեռն հասկացությունների արդեն 90-ամյա փոխգոյակցությունը առավել բացատրելի-տեսանելի է Զոհրապի անձով և գործունեությամբ: Լինելով հայ մտքի (ինչպես նաև ոգու) կենսունակ առարկայացման ջատագով՝ այլ բառով ասած՝ հայ մարդու բարեմասնություններով օժտված առինքնող անհատականություն, Զոհրապը դեռևս 1914թ. իր օրագրային գրառումներում նշում է. «Հայոց վիճակը մեծապես մտահոգություն պատճառելու հանգամանք ունի: Թուրքիո եւ Ռուսիո մոտալուտ բախումին առիթով ո՞ր կողմը բռնել, ի՞նչ ընել. պատասխանատվությունով լեցուն խնդիր: Ու եթե, նույնիսկ, կարելի ըլլա կիսատ որոշում մը տալ, ո՞րն է մարմինը, որ զայն պիտի գործադրել տա եւ ազգին հոգվոց մեջ պիտի մտցնե: Եվ ճիշտ ասոր համար ավելի քան երբեք պետք է անհատաբար չդադրինք հետեւելէ դեպքերուն, դաս մը քաղենք անոնցմե եւ ապագա դեպքերը ճշտիվ գուշակելու եւ անոնց համեմատ մեր ազգին բռնելիք ընթացքի մասին որոշ ուղղություն մը կարենալ գծելու համար»: Սակայն դեպքերի զարգացման վայրիվերո ընթացքը և դրանց հաջորդող անսպասելի քաղաքական շրջադարձերը նույնիսկ Զոհրապի համար էին լիովին անսպասելի: Այլևս անհնար էր երկու տերությունների մոտալուտ բախումից հայոց համար առաջացած քաղաքական հետևանքների դեմն առնելը: Այլևս չափազանց ժամանակավրեպ էր զոհրապյան «որո՞ւ կողմը բռնելու» հարցադրումը, քանզի դեպքերի ընթացքը և ժամանակը աշխատում էին... ոչ հայոց օգտին:

Գր. Զոհրապի օրագրային գրառումների (հատկապես 1915-ի ապրիլյան նշումները) տագնապահետք տրամադրություններից ակնհայտ է, որ մեծ գրողի մտահոգությունը դարձյալ պատերազմական իրավիճակի հետևանքներից խույս տալն է: Սա չի նշանակում, թե նա իսպառ անպատրաստ է հանկարծական քաղաքական զարգացումներին, և, որ ամենաէականն է, այդ զարգացումների բովում հայությանը սպասվելիք անկանխատեսելի ՈՃԻՐԻՆ:

ԱՐԹՈՒՐ ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ
Բանասիրական գիտություններ-ի թեկնածու

ԻՍՄԵԹ ԲԵՐՔԱՆ «ՀԱՅԵՐՆ ՈՒ ՀՈՒՅՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԲՆԻԿՆԵՐ ԵՆ»

Թուրքական «Ռադիկալում» տպագրած «Թուրքիայի թուրքացումը» հոդվածում թուրք հայտնի լրագրող Իսմեթ Բերքանը գրել է, որ հայերն ու հույները Թուրքիայում բնիկներ են, և, որ Արևելքից եկած թուրքերի 1000 տարին դեռևս չի բոլորել:

«Երբ Կոստանդնուպոլսում կառուցվում էր Այա Սոֆիա տաճարը, թուրքերի պապերը դեռևս Միջին Ասիայում էին»,- գրել է նա՝ նշելով, որ Թուրքիայի թուրքացման նախագծում հիմնական և գլխավոր հարցն այն է, թե երբ պետք է այն ավարտվի, ցավով նշելով, որ այդ գործընթացը շարունակվում է անգամ մեր օրերում:

Նշելով Ամերիկայի հնդկացիների օրինակը՝ Բերքանն ասել է, որ ներկայումս նրանց ոչ թե «հնդկացի», այլ «տեղացի ամերիկացիներ» են կոչում: Բերքանի խոսքերով, գալով Անատոլիա, ամերիկացիների՝ հնդիկներին կոտորելու նման «թուրքերը տեղացի ազգերին ոչ թե ոչնչացրել, այլ ապրել են միասին և անգամ խառնվել նրանց: Ըստ նրա՝ այդ «գործընթացը» շարունակվել է այնքան, մինչև «Անատոլիայի ժողովուրդների մեջ թուրքերը վերջինը լինելով՝ հայտնաբերեցին ազգայնականությունը: Քանի դեռ այդ գործընթացը շարունակվում է, թուրքերը չեն կարողանում առերեսվել իրենց անցյալին և չեն կարողանում ընդունել անցյալում կատարված իրենց սխալները: Իսկ առանց դրանք ընկալելու և ընդունելու՝ մեծ ազգեր չեն լինում: Ինչքան էլ Սահմանադրության մեջ նշենք, որ «ժողովուրդն անբաժանելիորեն ամբողջական է», թուրք ազգն ինքը կասկածում է իր «անբաժանելի ամբողջականության մեջ» և դա է պատճառը, որ շատ հաճախ իր մեջ դավաճաններ է փնտրում»,- գրել է թուրք լրագրողը:

- Եթե ուզում ենք արգելել նոր ցեղասպանությունները, ապա 1915-ի փաստերի հետ պարտադիր պետք է հաշտվենք,-

Ռագըպ Զարաքօղլու, գրող, հրատարակիչ, Թուրքիայում մարդու իրավունքների ակումբի հիմնադիր:

ՀԱՃԸՆ

Լեռնային Կիլիկիայի հայաբնակ խոշորագույն բնակավայրերից մեկը՝ Հաճըն քաղաքը, գտնվել է Տավրոս լեռների գրկում՝ Քերմես լեռան լանջին: Նրա մոտով հոսում է Աչի գետը, որի անունից էլ հավանաբար Հաճընն ստացել է իր անվանումը: Գեղատեսիլ է Հաճընի լեռնային բնաշխարհը: Զուր չէ, որ ժողովրդական ստուգաբանությամբ «Հաճըն» նշանակում է հաճելի վայր:

Քաղաքն ունեցել է շուրջ 35 հազար բնակիչ, 9 դպրոց, ամերիկյան քոլեջ, 3 եկեղեցի, 3 վանք, 12 ջրաղաց: Նշանավոր էին հաճընցի արհեստավորները: Տնտեսական ու մշակութային այս խոշոր կենտրոնը Կապադովկիայի կողմից Կիլիկիայի դարպասն էր և պատմության ընթացքում հաճախ է մարտնչել օտարերկրյա զավթիչների դեմ: Հաճընը տվել է այնպիսի նշանավոր մարդիկ, ինչպիսիք են՝ Մարտիրոս Պոյաճյանը (Ժիրայր), Համբարձում Պոյաճյանը (Մեծն Մուրադ), Կարապետ Թուր-Սարգիսյանը (Աղասի), բանաստեղծ Մարտիրոս Ոսկյանը և ուրիշներ:

Հաճընի հերոսամարտի նահատակների օրը. 1920թ. մարտ-հոկտեմբեր ամիսներին Լեռնային Կիլիկիայի Հաճըն քաղաքն ութ ամիս շարունակ դիմադրեց թուրքական զորքերին:

...1914թ. Հաճընը 30.000-անոց հայաբնակ քաղաք էր՝ հարուստ մշակութային կյանքով և ազատագրական պայքարի իր նվիրյալներով: 1915թ. հաճընցիները նույնպես տարագրվեցին դեպի սիրիական անապատներ:

1918թ. հոկտեմբերի 30-ին Օսմանյան կայսրությունը՝ Առաջին աշխարհամարտում պարտվելով, պառակտվեց: Դեկտեմբերին անգլո-ֆրանսիական դաշնակիցներն ու նրանց շարքերում կռվող հայկական լեգեոնի կամավորները գրավեցին Կիլիկիան: Տարագրված հայության մի մասը վերադարձավ հայրենիք: 1916թ. հոկտեմբերի 27-ի հայ-ֆրանսիական համաձայնությամբ՝ պատերազմի հաղթական ավարտից հետո,

եթե հայերը մասնակցեին Թուրքիայի դեմ մղվող պատերազմին, Կիլիկիայում պետք է ստեղծվեր ինքնավարություն՝ Ֆրանսիայի հովանու ներքո: Աշխարհի տարբեր երկրներից 5000-ից ավելի հայ կամավորներ զինվորագրվեցին Կիլիկիան ազատագրելու հույսով: Սակայն իր տնտեսական և քաղաքական շահերից ելնելով՝ Ֆրանսիան որոշեց Կիլիկիան զոհաբերել Թուրքիային: Դիվանագիտական այս խարդավանքի առաջին զոհերից մեկը դարձավ Հաճընը: Հայրենի քաղաք վերադարձած հաճընցիները շատ կարճ խաղաղ կյանք ապրեցին: 1920թ. մարտին Հաճընը պաշարվեց քեմալական գերակշիռ ուժերի կողմից: Հաճընցիներն ամիսներ շարունակ, առանց արտաքին օգնության, բազմիցս ետ մղեցին թշնամուն:

Ֆրանսիացի լրագրող-միջազգայնագետ Միշել Պայառեսի խոսքերով՝ «միջազգային սրիկաների» զոհը դարձած հաճընցիների (նաև ամբողջ կիլիկիահայության) փրկված բեկորները թողեցին հայրենի Կիլիկիան և ցրվեցին աշխարհով մեկ՝ այս անգամ արդեն ենթարկվելով սպիտակ ջարդի՝ ծուլման վտանգին:

1920թ. հոկտեմբերի 15-ին ընկավ Հաճընը, սակայն այսօր ապրում են հաճընցիները, նրանց հերոսական ոգին. վկա՝ հայրենիքի Նոր Հաճընն բարգավաճ ավանը, վկա՝ Արցախի գոյամարտի մասնակից հաճընցիների սերունդները:

Նոր Հաճընն. Արզնի կիրճի և Արզնի-Շամիրամ ջրանցքի հարևանությամբ կառուցված նորաստեղծ բնակավայրը հաճընցիների խնդրանքով 1958թ. ստացել է Նոր Հաճընն անունը:

Ռ. Իսրայելյանի նախագծով 1973թ. Նոր Հաճընում կանգնեցվեց Հաճընի հերոսամարտի նահատակների հիշատակը հավերժացնող հուշարձան-կոթող:

Նոր Հաճընը արդյունաբերական կենտրոն է ադամանդագործության բնագավառում: Նորհաճընցի վարպետների հղկած թանկարժեք քարերն այսօր էլ մեծ պահանջարկ են վայելում համաշխարհային շուկայում: Քաղաքն ունի շուրջ 13 հազար բնակիչ, արվեստի և հանրակրթական դպրոցներ, քաղաքային գրադարան, մարզադպրոց, մշակույթի պալատ, Կիլիկիայի պատմության թանգարան:

ՀԱԿՈԲ ՄԱՆՋՅԱՆ

Իսպանացի մտավորականների շրջանում դրական արձագանք է գտել Եվրոմիության հետ Թուրքիայի լիիրավ անդամակցության բանակցությունների սկզբնավորման որոշումը: Մտավորականները, որոնք աջակցում են Թուրքիայի լիիրավ անդամակցությանը, Իսպանիայում հրատարակվող Cronica թերթին տված մի հոդվածում կոչ են արել բացատրել բոլոր այն պատճառաբանությունները, որոնք դեմ են հանդես գալիս Թուրքիայի անդամակցությանը:

Ըստ իսպանացի մտավորականների՝ Թուրքիայի անդամակցությանը խանգարող պատճառները չորսն են.

1. Թուրքիան եվրոպական երկիր չէ,
2. Թուրքիան եվրոպական արժեքները չի կիսում,
3. Կնկատվի թուրք աշխատուժի ակտիվ ներհոսք դեպի Եվրոպա,
4. Մուսուլմանական երկիրը դեմոկրատական արժեքները չի կարողանում մարսել:

Հունաստանի արքեպիսկոպոս Հրիստոդուլոսը Եվրոմիությանը Թուրքիայի անդամակցության հարցի շուրջ ասել է. «Եթե Թուրքիան Եվրոմիություն մտնի, ապա Եվրոպան կթուրքանա»: Հրիստոդուլոսը Աթենքում կրոնական ծիսակատարության ժամանակ ասել է. « Ես դեմ եմ Թուրքիայի անդամակցությանը: Թող ոչ ոք չհավատա այն բանին, որ Թուրքիան Եվրոմիության անդամ դառնալուն պես կեվրոպականացվի: Վախենում եմ, որ հակառակը կլինի, այսինքն՝ Եվրոպան կթուրքանա»:

ՀԱՅՈՑ ԿԱՊԻՏԱԼԻ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ

ՄԿՐՏԻՉ ՍԱՆԱՍԱՐՅԱՆ (1818-1890)

Լուսահոգի այս մարդու ամբողջ կյանքն անցավ Ավետարանի սրբազնագիր նշանաբանի ներքո. «Մի գիտեսցե ձախ քո, զինչ գործէ աջ քո»: Նա պատկանում էր ազգանվեր հայկազունների այն աստղաբույլին, որի վերցնողբերող ձախ ձեռքը չիմացավ, թե ինչ է անում բաժանող-տվող աջը: Եվ ամենը մատուցեց հարազատ ժողովրդի գոյապահպանության խորանին:

Մկրտիչ Սանասարյանի ծնողները վանեցիներ էին, հայրը՝ Սարգիսը, առևտրական հարաբերություններ ուներ Թիֆլիսի հայերի հետ և, ի վերջո, մշտական բնակություն հաստատեց Կովկասի վարչական, տնտեսական, մշակութային կենտրոնում: Այստեղ էլ ծնվեցին նրա Մկրտիչ ու Կարապետ որդիները և Կատարինե դուստրը:

Մկրտիչն ուսում ստացավ Ներսիսյան վարժարանում, որտեղ նրա համադասարանցին ու մտերիմ ընկերն էր Դավիթ Ռոստոմյանցը՝ ապագա բժիշկը, որը 1864թ. դարձավ «Սբ. Գրիգոր Լուսավորչի անվան Բաքվի հայոց մարդասիրական ընկերության» ստեղծման նախաձեռնողը: Վարժարանն ավարտելուց հետո՝ 1835թ., Մ. Սանասարյանն ու Դ. Ռոստոմյանցը ճանապարհվեցին Կարին, որպեսզի այնտեղից անցնեն Վենետիկ և շարունակեն ուսումնառությունը: Սակայն ընկերներին վիճակված չէր Իտալիա հասնել. Թիֆլիսում վախճանվեց Սարգիս Սանասարյանը, և Մկրտչի քեռին՝ Երեմիա Արծրունին, պատանիներին ճանապարհից ետ բերել տվեց:

Ահա Ե. Արծրունու հորդորով ու ցանկությամբ էլ նրա քրոջ որդին՝ Մկրտիչ Սանասարյանն անցնում է զինվորական ծառայության և ռազմական գործողությունների ժամանակ ցուցաբերած խիզախության համար նույնիսկ պարգևատրվում Սբ. Գեորգիի շքանշանով:

Մ. Սանասարյանը զինվորական ծառայության ընթացքում որոշակի դրամագլուխ էր կուտակել, բացի այդ՝ պաշտոնաթող սպաները բարձր թոշակ էին ստանում: Նա իր դրամագլուխը գործի մեջ դրեց և գնեց «Կավկազ ի Մերկուրի» («Կովկաս և Մերկուրիոս») շոգենավային ընկերության մասնաբաժիններ: Այս ընկերությունը, ընդհուպ մինչև 1917թ. բոլշևիկյան հեղափոխությունը, Ռուսաստանի ամենախոշոր գետանավային ընկերությունն էր, որը մենաշնորհային դիրք ուներ Վոլգայով բեռնափոխադրումների գործում և որի տասնյակ նավերը մտնում էին Կասպից ծով ու հասնում Պարսկաստանի նավահանգիստներ: Այս ջրային ուղին վիթխարի նշանակություն ուներ երկու երկրների առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման գործում:

Մ. Սանասարյանը եռանդուն մասնակցություն ունեցավ ընկերության հետագա գործունեության մեջ. էական նպաստ բերեց նրա առաջընթացին ու բարգավաճմանը, ի վերջո, ընտրվեց ընկերության տնօրեն և պաշտոնավարեց մինչև կյանքի վերջը: Ի գնահատումն նրա ծառայությունների, ընկերության վարչական խորհուրդը նավերից մեկն անվանեց «Մկրտիչ Սանասարյան» (”Íèêèòà Ñàíàñàðîâ”): Իսկ Պարսից շահը, հաշվի առնելով հայ ձեռնարկատիրոջ ներդրումը երկու երկրների միջև տնտեսական հարաբերությունների ամրապնդման գործում, նրան պարգևատրեց բարձրագույն «Շիր ի Խուրշիդ» («Արև և Առյուծ») շքանշանով:

Մ. Սանասարյանը ռուսական առևտրաարդյունաբերական բիզնեսի ականավոր ներկայացուցիչներից էր, և դժվար է ասել՝ նա կվերադառնա՞ր իր ժողովրդի ակունքներին, կունենա՞ր պարտքի ու պատասխանատվության զգացում ազգի նկատմամբ, իր անգնահատելի օժանդակությունն ու նպաստը կբերե՞ր հատկապես հայեցի կրթությանը, եթե չլիներ Կարապետ Եզյանցը (1835-1905): Այս մարդը ծնվել էր Մոսկվայում, ավարտել՝ Լազարյան ճեմարանը և աշխատանքի անցել Ներքին գործերի նախարարությունում՝ որպես շարքային պաշտոնյա, ապա Պետերբուրգի համալսարանում քննություններ էր հանձնել, ստացել արևելյան լեզուների մագիստրոսի կոչում և դարձել լուսավորության նախարարության կոլեգիայի անդամ: 1904թ. նա արժանացավ իսկական պետական գաղտնի խորհրդականի տիտղոսի: Կ. Եզյանցի դրդմամբ բարերարության ուղին բռնեցին ռուսահայ դրամատերեր Հովսեփ Իզմիրյանը, Մարգար Պապովյանը, Մարիամ Կազաչկյանը, նավթարդյունաբերողներ Առաքել Ծատուրյանը և Ավետիս Ղուկասյանը: Նրա հորդորով Թիֆլիսում բացվեցին Հովնանյան, իսկ Նոր Նախիջևանում՝ Գոգոյան իգական վարժարանները: Կ. Եզյանցն էր, որ Մ. Սանասարյանին շարունակաբար մատնացույց արեց ազգին տեր կանգնելու նրա պարտականությունը: Արձագանքը եղավ, գրեթե, ամիջապես, իսկ արդյունքները՝ անմոռանալի:

Դեռևս 1860-ականներից Մ. Սանասարյանը սկսեց ֆինանսապես օժանդակել Կովկասի հայ և այլազգի ուսանողներին, կրթաթոշակներ տրամադրել Մոսկվայի բազմաթիվ հայ ուսանողների, իսկ առավել օժտվածներին, կրթությունը շարունակելու համար, ուղարկել արտասահման:

1870-ին իր նախնյաց ծննդավայրում՝ Վանում, տեղի «Սանդխտյան ընկերության» հետ մեկտեղ, հիմնադրեց «Սանդխտյան» բարձրակարգ իգական վարժարանը, որտեղ դասավանդում էին ժամանակի լավագույն ուսուցիչները, իսկ 1884-ին կառուցեց վարժարանի նոր, բարեկարգ շենքը: Ի նշանավորումն այդ իրադարձության և ի գնահատումն Մ. Սանասարյանի ներդրման, ուսումնական հաստատությունը վերանվանվեց «Սանդխտյան-Մարիամյան»՝ բարերարի մոր անվամբ:

1881թ. Կարինում (Էրզրում) հիմնեց իր անունը կրող վարժարանը, որի տարեկան ծախքի՝ 5.000 ռուբլու մի մասը մշտապես ինքն էր տրամադրում և իր հաշվին պահում 25 սաների:

Ուսումնական հաստատություններ հիմնեց նաև այլ վայրերում. Վանի վիլայեթի Խառակոնիս գյուղում՝ ժողովրդական ուսումնարան (տարեկան ծախքը՝ 1.000 ֆրանկ, ինքն էր հոգում), Նուխիի գավառի Նիժ և Վարդաշեն գյուղերում՝ մեկական վարժարան: Ֆինանսապես օժանդակել է նաև Սբ. Էջմիածնի Գևորգյան ճեմարանին: Իր հիմնած դպրոցներին անվճար տրամադրում էր գրականություն, հովանավորում էր գրքերի, դասագրքերի, ձեռնարկների հրատարակումը:

1885թ. Մ. Սանասարյանն այցելեց Կարին՝ տեսնելու իր հիմնած վարժարանը, ծանոթանալու ուսուցչական կազմի և աշակերտության հետ: Երկշաբաթյա այդ այցելությունը վերածվեց համաքաղաքային ցնծության և տոնախմբության՝ ի պատիվ բարերարի: Այդ այցը պատճառ

դարձավ, որ բարերարության «վարակը» տարածվի և քաղաքի մյուս դրամատերերն էլ «թասիբի» ընկնեն. դրանից հետո էր, որ Գ. Մսրյանի ծախքով Կարինի Նոր թաղում բացվեց Մսրյան վարժարանն ու մանկապարտեզը, Աղաբալյան ընտանիքի կողմից՝ Աղաբալյան վարժարանը («Կանա-ճամփա» թաղում), Ս. Տեր-Ազարյանի կողմից՝ Տեր-Ազարյան վարժարանը («Չայ-Դայա» թաղում), Մ. Գավաֆյանի կողմից՝ Գավաֆյան վարժարանը («Դեմիր-Այագ» թաղում): Ըստ էության, Կարինը դարձավ արևմտահայության ամենախոշոր կրթական կենտրոններից մեկը:

Մկրտիչ Սանասարյանը վախճանվեց 1890թ. մայիսի 19-ին՝ Փարիզում: Հաջորդ օրը Սանկտ-Պետերբուրգի Կոլոկոլնայա փողոցի թիվ 9 հասցեում գտնվող նրա տուն այցելեցին հայոց Սբ. Կատարինե եկեղեցու քահանա Գևորգ Խանթարճյանցը, 2-րդ գիլդիայի վաճառական Հակոբ Խոջեյնաթյանը, իսկական գաղտնի խորհրդական Ալեքսանդր Գուրգենբեկյանը: Նրանք հայտնաբերեցին հանգուցյալի կտակը, որը տարան քաղաքի առաջնակարգ նոտարներից մեկի՝ Տիմոֆեյ Անդրեևի մոտ: Վերջինս բացեց կտակը և ընթերցեց հանգուցյալի վերջին կամքը: Դա 1886թ. հուլիսի 10-ին գրված, 19 կետից բաղկացած, այսօր արդեն պատմական արժեք ներկայացնող փաստաթուղթ է:

Նախ, իր կտակի գործադրողներ էր նշանակել իսկական գաղտնի խորհրդական Կարապետ Եզյանցին, իսկական պետական խորհրդական Գևորգ Եվանգուլյանին և իր քրոջ որդուն՝ պաշտոնաթող պետական խորհրդական, բժիշկ Լևոն Տիգրանյանին: Ապա թվարկել էր այն անձանց, ում հարկ էր համարել հատկացումներ կատարել. իր սպասավոր Իլյա Լեսորշչիկովին՝ 300ռ., աղախին Ագրաֆենա Մասլովային՝ 100ռ., իր մանկության ընկերոջը՝ Թիֆլիսի «Մեղու Հայաստանի» թերթի խմբագիր Պետրոս Սիմոնյանցին ցկյանս հատկացրել էր 600ռ. տարեկան կենսաթոշակ՝ դրա համար տրամադրելով 12.000ռ. անձեռնմխելի գումար: Պ. Սիմոնյանցի մահից հետո այդ գումարը պիտի միանար Սանասարյան վարժարանի դրամագլխին (ավելացնենք. 600ռ. այդ ժամանակ այնքան խոշոր գումար էր, որ խմբագիրը մինչև կյանքի վերջ անհոգ ապրեց):



Նկարում՝ Կարնո Մ. Սանասարյան վարժարանը:

Կտակի գրեթե բոլոր հաջորդ կետերը ազգային նշանակություն ունեն: Մ. Սանասարյանը 10.000ռ. դրամագլուխ էր հատկացրել Վանի «Սանդխտյան-Մարիամյան» դպրոցին, որի տարեկան շահութատոկոսով պիտի հոգացվեին ուսումնական հաստատության ծախսերը:

Սակայն իր ունեցվածքի «առյուծի բաժինը» տրամադրել էր Կարինի «Սանասարյան» վարժարանին: Կտակի 5-րդ կետում շարադրված էր նրա հիմնական կամքը. **«Ցագմամբ տաճկաստանցի հայ լինելով և ըստ կարյացս կամենալով օժանդակել կրոնակից համազգայիններիս բարօրության, որոնք Տաճկաստանում զուրկ են մնացած կրթվելու միջոցներից, ես իմ մահվանս րոպեին, թե՛ Ռուսաստանում և թե՛ արտասահմանում երևան գալիք մնացյալ ստացվածքս՝ լինեն դրանք անշարժ կայք և կամ դրամագլուխներ, առձեռն դրամներ, տոկոսաբեր թղթեր, բաժնետոմսեր, պարտամուրհակներ, բաժեր (տուրքեր) և պարտքի վավերագրեր՝ միով բանիվ ինչ բանի մեջ և որտեղ էլ գտնվեն, կտակում եմ ի շինություն և պահպանություն իմ՝ հայերի համար հիմնարկած և անունս կրող վարժարանին, որ գտնվում է Տաճկաց կայսրության Կարին քաղաքում, ուր ազգակիցներս ավելի կարոտ են կրթական հաստատությանց, իմ անվամբ հայոց համար հիմնված նույն վարժարանին կտակում եմ նմանապես իմ մատենադարանը, ալբոմները, հավաքածույքն ու տպարանական պարագաները»:**

Բացի այդ, վարժարանի հովանավորությունը հանձնում էր Ամենայն հայոց կաթողիկոսին, միաժամանակ պայման դնելով, որ դասավանդումը լինի հայոց լեզվով, իսկ սաներից առնվազն 30-ը լինեն լուսավորչական հորից-մորից ծնվածներ:

Վարժարանի գլխավոր տեսուչ էր նշանակել Կ. Եզյանցին, նրան իրավունք էր վերապահել հարկ եղած պարագայում ուսումնական հաստատությունը տեղափոխել այլ վայր և այդպիսի լայն լիազորությունները բացատրել էր այն բանով, որ նրան՝ Կ. Եզյանցին **«ուրիշներից ավելի հայտնի են ինձ առաջնորդող շարժառիթներն ու փափագները անունս կրող վարժարանի նկատմամբ»:**

19-րդ կետում, Մ. Սանասարյանը վերջին փափագն էր հայտնել. **«Կցանկամ, եթե միայն հնարավոր լինի թաղվել վարժարանիս գտնված տեղում՝ Կարին»:** Բարեբախտաբար թե դժբախտաբար, դա հնարավոր չեղավ. նրա դին Փարիզից տեղափոխեցին Թիֆլիս և հողին հանձնեցին մեծ ազգայինների՝ ռազմական ու պետական գործիչների, ազնվականների ու կապիտալիստների պանթեոնում՝ Վանք եկեղեցու բակում:

Կտակը վիթխարի ազգային-հասարակական արձագանք գտավ թե՛ Արևելյան, թե՛ Արևմտյան Հայաստանում: Հնչեղությունն ու հետաքրքրությունն այնքան մեծ էր, որ 1895-ին կտակակատարներ Կ. Եզյանցը և Գ. Եվանգուլյանը, բարոյականության կանոններից ելնելով, հարկ համարեցին հանդես գալ մանրակրկիտ հրապարակային հաշվետվությամբ: Եվ այստեղ ամենայն փայլով դրսևորվեցին, առաջին հերթին, Կ. Եզյանցի ազնվությունն ու օրինավորությունը, և ակնհայտորեն պարզ դարձավ, որ Մ. Սանասարյանը չէր սխալվել կտակակատարի ընտրության հարցում:

Կ. Եզյանցը, նախ՝ կազմեց Սանասարյան վարժարանի նոր կանոնադրությունը, որը ներկայացրեց Պոլսո պատրիարքին: Ապա՝ 2.720 ռուբլով մահարձան կանգնեցրեց Վանք եկեղեցու բակում՝ բարերարի գերեզմանի վրա, 1.069 ռուբլով կիսանդրի տեղադրեց Սանասարյան վարժարանի բակում: Ուշագրավ է մի հանգամանք ևս. նա Մ. Սանասարյանի գործերով մեկնել էր Փարիզ և այդ ճամփորդության վրա ծախսել 2.100ռ.: Բայց ծախսել էր... սեփական փողը, առանց կոպեկ իսկ վատնելու Մ. Սանասարյանի միջոցներից:

Երկար տարիներ Մկրտիչ Սանասարյանի՝ ականավոր կապիտալիստի, մեծ ազգասերի, բարերարի հիմնած ուսումնական հաստատությունները տասնամյակներ շարունակ կրթություն տվեցին ու դաստիարակեցին հայ պատանիների ու աղջիկների բազմաթիվ սերունդների:

Հիմա պատկերացրեք Սանասարյան վարժարանը. երկհարկանի, բարձր առաստաղներով, լուսավոր դասասենյակներով, փառահեղ, քառանկյուն մի կառույց: Միջանցքներում կախված են բարերարի թանկարժեք ընծա-

ները՝ Ռուբենսի, Այվազովսկու և այլ նշանավոր նկարիչների կտավները: Ձմռանն ընդարձակ բակում սառցադաշտ էին սարքում, և հարյուրավոր պատանիներ ու աղջիկներ... չմուշկ էին քշում. ես համարձակություն ունեմ պնդելու, որ դա Օսմանյան կայսրության միակ վարժարանն էր, որտեղ գիտեին՝ ինչ բան է չմուշկը...

Ի՞նչ եղավ այդ ամենը:

1915թ. Հայոց ցեղասպանության ժամանակ թուրք բարբարոսները ավերեցին ու ջարդուխուրդ արեցին Վանի «Սանդխտյան-Մարիամյան» վարժարանը: Կարնո վարժարանը նույնպես ավերվեց, իսկ ուսուցիչների մեծ մասը յաթաղանի զոհ գնաց: Մ. Սանասարյանը Կ. Պոլսում ուներ հասութաբեր կալվածքներ, որոնք թուրքական կառավարությունը՝ որպես լքյալ գույք, բռնազավթեց:

Մ. Սանասարյանը ո՛չ Թուրքիայի քաղաքացի էր, ո՛չ էլ այդ երկրում էր վաստակ, ունեցվածք, հարստություն ձեռք բերել: Նրա վարժարանները, կալվածքները իր անձնական սեփականությունն էին, որ վերջին կամքով՝ կտակով, տրամադրել էր ազգին: Մի՞թե ազգը՝ օրինական տերը, իրավունք չունի ետ պահանջելու այն, ինչ իրեն է պատկանում:

Եվս մեկ դիտարկում. Կարնո «Սանասարյան վարժարանը» թուրքերը հողին հավասարեցրեցին 1916թ., իսկ 1938թ. Բերիայի հրամանով հողին հավասարեցվեց Թիֆլիսի Վանք եկեղեցին, և Մ. Սանասարյանի ոսկորները նետվեցին աղբանոց: Երբևէ որևէ հայի մտքից ու սրտից կջնջվի՞ այս ողբերգական հուշը. երբե՛ք: Հայոց սերունդները մտապահելու են այն:

Իսկ արդի հայ դրամատերերը, եթե ցանկանում են փողվորից դառնալ կապիտալիստ, եթե ցանկանում են ազգի հավաքական հիշողության մեջ մնալ, չմատնվել անէ մոռացության, պիտ գիտակցեն՝ անմահության պանթեոն տանող ուղիղ ճանապարհը բարերարությունն է:

ԽԱՉԱՏՈՒՐ ԴԱՎԱՅԱՆ

ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹՅՈՒՆ

Բագնայր գիւղը կը գտնուի Մեծ Հայքի Այրարատ նահանգի Շիրակ գաւառին մէջ՝ Անիէն արեւմուտք: Բագնայրի մէջ գտնուած է համանուն վանքը (10-13-րդ դարեր), որ բաղկացած էր չորս եկեղեցիներէ: Մայր եկեղեցին՝ Սբ. Աստուածածինը, կառուցած է Սմբատ Մագիստրոս Պահլաւունին 1012-ին: Այս եկեղեցիէն հարաւ-արեւելք կը գտնուին երկու փոքր եկեղեցիներ: Ասոնցմէ մօտաւորապէս 200մ հիւսիս-արեւելք կը գտնուի Սբ. Երրորդութիւն եկեղեցին (11-րդ դար): Սուրբ Աստուածածին եկեղեցին, թէ՛ ներսէն եւ թէ՛ դուրսէն ունի 11-13-րդ դարերու արձանագրութիւններ: Բագնայրի մէջ կան նաեւ քանի մը մատուռներ, որոնցմէ մէկուն վրայ կայ 1223թ. արձանագրութիւն:

Տեկոր գիւղը կը գտնուի Կարսի մարզին մէջ՝ Անիէն մօտաւորապէս 20 քլմ հարաւ-արեւմուտք, Ախուրեանի աջակողմեան վտակ Տեկորի աջ ափին, Տեկոր բերդին մօտ: Տեկորը բարգաւաճած էր Բագրատունիներուն ժամանակաշրջանին: 18-րդ դարու վերջերուն ունէր մօտաւորապէս 200, 19-րդի վերջերուն՝ 350, 1913-ին՝ 523 հայ բնակիչ: Բնակչութիւնը կը զբաղուէր գիւղատնտեսութեամբ, անասնապահութեամբ, արհեստներով: 1890թ. սկսեալ գիւղը ունեցած է դպրոց: Առաջին համաշխարհային պատերազմին ժամանակ Տեկորի բնակիչներուն մեծ մասը զոհուած է թրքական յարձակումներուն պատճառով:

Տեկորի Սբ. Սարգիս եկեղեցին:

Տեկորը միջնադարու հոգեւոր եւ մշակութային կարեւոր կեդրոն էր: 5-րդ դարուն կառուցած է Իշխան Սահակ Կամսարականը՝ իբրեւ Սբ. Սարգիսի վկայարան: 10-11-րդ դարերուն տաճարը վերանորոգուած է: Տեկորի ճարտարապետական ձեւին վրայ կառուցուած են Օձուն, Մրեն, Գայանէ, Բագաւանի եկեղեցիները եւ Անիի Մայր Տաճարը: Տեկորի պազիլիք եւ կեդրոնագմբեթ յօրինուածքը այնքան տրամաբանական եւ կիրառելի եղած է, որ 9-10-րդ դարերուն անցած է Բիւզանդիոն եւ լայն տարածում գտած է ուղղափառութիւն դաւանող բազմաթիւ երկիրներու մէջ՝ Յունաստան, Սերպիա, Ռուսիա:

Խծկոնքը 9-10-րդ դարերու վանք է, Անիէն մօտաւորապէս 40 քլմ դէպի հարաւ-արեւելք: Խծկոնքը բաղկացած էր Սբ. Կարապետ, Սբ. Սարգիս, Սբ. Աստուածածին, Սբ. Ստեփանոս եւ քիչ մը հեռու՝ Սուրբ Լուսաւորիչ եկեղեցիներէն: Այս փունջէն կիսաւէր վիճակի մէջ է միայն Սբ. Սարգիսը, մնացեալ կառոյցները 20-րդ դարու կէսերուն պայթեցուած են թուրք կառավարութեան կողմէ: Եկեղեցիներէն ամենահինը Սբ. Կարապետ եկեղեցին էր, հաւանաբար կառուցուած 7-րդ դարուն: Սուրբ Սարգիսը, ըստ Սամուել Անեցի պատմիչին, կառուցուած է մեծահարուստ իշխան Վեստ Սարգիսի կողմէ, 1027թ.: Ունի բազմաթիւ արձանագրութիւններ, որոնցմէ ամենահինը գրուած է 1033-ին: Եկեղեցիին հիւսիսային կողմը գտնուած է խաչքար: Արձանագրութիւններէն մէկը կը յիշատակէ վանքի վերանորոգման փաստը Զաքարիա սպասալարի որդի Շահնշահի կողմէ: Սբ. Կարապետի հարաւը գտնուած է Սբ. Աստուածածին եկեղեցին: Երեք եկեղեցիներէն արեւելք գտնուած է կարմիր տուֆէ կառուցուած Սբ. Ստեփանոսը: Հինգերորդ եկեղեցին՝ Սբ. Լուսաւորիչը, վերոյիշեալներէն կրկին դէպի արեւելք, եղած է պարսպապատ: Վերջին երեք եկեղեցիները կը համարուին 10-11-րդ դարերու շէնքեր: Խծկոնքի եկեղեցիները 1878-ին վերանորոգուած են հայազգի զօրավար Յ. Լազարեանի օժանդակութեամբ, Յարութիւն վրդ. Մանուկեանի ձեռքով: Վանքը եղած է նշանաւոր ուխտատեղի, ունեցած է պարտէզներ, ծառաստաններ եւ բարեխնամ վիճակի մէջ գոյատեւած է մինչեւ 20-րդ դարու սկիզբ: Նշանաւոր եղած է տաք եւ պաղ հանքային բուժիչ ջուրերով: Այժմ ամայի է:

Մրեն կը գտնուի Այրարատ նահանգի Շիրակ գաւառին մէջ՝ Ախուրեանի աջ ափին: Մրենի մասին ամենահին յիշատակութիւնը կը հաղորդէ Ղազար Փարպեցին (5-րդ դար): Մինչեւ 5-րդ դարուն վերջերը Մրենը պատկանած է Կամսարականներուն, որոնք իրենց միւս կալուածներուն հետ ծախած են Բագրատունիներուն: Մրենը եղած է Անիի բնակիչներուն

Մրենի Կաթողիկե տաճարը:

ամառանոցը: Վարդան պատմիչը կը յիշատակէ Մրենի ամրոցը: 1261-ին հայ մեծահարուստ Սահմատտինը Զաքարեաններէն գնած է Մրենը եւ 1270-80թթ. հոն կառուցած է պալատ: 1277-ին վերանորոգած է Սբ. Փրկիչ մատուռը: Մրենը ներկայիս ամայի է եւ աւերակ: Մրենի Կաթողիկէ տաճարը կառուցած է Դաւիթ Սահառունին 613-ին: Արեւմտեան մուտքի բարաւորին նկարուած են Քրիստոսը, Սբ. Պօղոսը, Սբ. Պետրոս, Թէոփիղոս եպիսկոպոսը, իսկ ծայրերուն՝ Դաւիթ Սահառունիի եւ Ներսեհ Կամսարականի քանդակները:

Մեսրոպ Սրբազանի 2000թ. ուխտագնացութենէն

2000թ. մեր ուխտագնացութեան յատկանիշներէն մին էր այն, որ, շնորհիւ մեր առաջնորդին՝ «Անի» ընկերութեան նախագահ պրն. Առուշանեանին, «բաց դռներ» պիտի ունենայինք մեր դիմաց: Ուստի եւ ծրագրեցինք այցելել Անիի անմիջական շրջակայքը գտնուող բազմաթիւ վանքեր, որոնք տարիներէ ի վեր հայու շունչ չէին առած: Եւ այսպէս՝ քարտէզի վրայ նշանակեցինք Բագնայր, Տեկոր, Խծկոնք, Մրեն, Հոռոմոս, Բագարան: Հոռոմոս եւ Բագարան երբեք չկրցանք մտնել: Բագնայր եւ Մրեն գացինք՝ շատ սուղ գին վճարելով, սիւններու տակ ալ շարուեցանք, մեր վանքերը այցելած ըլլալու համար յանդիմանուեցանք, շիտակը՝ վախնալու պէս բան մըն ալ եղանք. բայց, ի վերջոյ, թուրք զինուորները «օգնեցին» մեզմէ ոմանց, եւ Մրենի եկեղեցիէն մինչեւ գիւղ բերին. հրասայլի որովայնի մէջ պահուած խումբ մը տղաներ, որոնք Մրենի եկեղեցւոյ մէջ «բռնուէր էին»…

Սուրբ Աստուածածին, Ժամատուն, Սուրբ Գէորգ հիմա քարուքանդ են. Սուրբ Գէորգը յարդանոց է, Սուրբ Աստուածածնի սիւները՝ դիտապաստ ինկած են: «Սիրտս նման է էն փլած տներ, կոտրեր՝ գերաններ, խարխլել են սներ…»: Ժանէքը կը փղձկայ, բոլորս կուլանք: Եւ կ'երգենք: Մեր յարութեան հաւատքի հրաշքն ալ այդ չէ՞: Քրիստոս «մահուամբ զմահ կոխեաց եւ յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգեւեաց»: Եւ մեզի համար՝ «Սիրտս նման է» երգին յաջորդեց հողը գտած, երջանկացած ու հարստացած հայուն պարը:

Օրը քիչ մը անհամ պիտի վերջանար, սակայն Բագնայրի մէջ մութը կոխեր էր, երբ գիւղէն դուրս ելանք, եւ յանկարծ մեզ շրջապատուած գտանք 20-է աւելի թուրք ասկեարներով, որոնք բաւական նեղութիւն տուին մեզի՝ քանի առանց հրամանի, առանց արտօնութեան, «մեր հօր պարտէզն է» կարծէք՝ մտեր էինք սահմանային գօտի: Սուիններու տակ, գրեթէ, կրցանք ազատիլ այն փորձանքէն, որ անգամ մը եւս ցոյց տուաւ մեզի կեանքի դառն իրականութիւնը, որ հեռու է դասագրքերէն, սփիւռքի մեր ցոյցերէն, Երեւանէն:

Տեկորը, ըստ Գարեգին Ա կաթողիկոս Յովսէփեանցի, հանդիսացած է առաջին գմբեթաւոր հայ պազիլիք եկեղեցին: Ճարտարապետ Վարազդատ Յարութիւնեանի վկայութեամբ՝ «Տեկորի տաճարը առանձնայատուկ տեղ է գրաւում հայ ճարտարապետութեան պատմութեան մէջ, քանզի ըստ իշխող կարծիքի, մոնումենտալ գմբեթի ձեւերի զարգացումն է սկզբնաւորւում այս յուշարձանում»: Խծկոնքը թուրքերը տակաւին կը կոչեն Պէշ քիլիսէ, քանի ունէր հինգ եկեղեցիներ: Մեզմէ քանի մը յանդուգն հոգիներ անհասանելի կարծուած այս վանքն ալ կրցան երթալ, ու մինչ մենք գետի ափին կարօտով կը դիտէինք, մեր երիտասարդները նուաճեցին Սուրբ Սարգիսը եւ այնտեղէն շարականի ձայներով հռչակեցին իրենց յաղթանակը: Տեկորի 5 եկեղեցիներէն Սուրբ Սարգիսը՝ աղիքները պատռած, վիրաւոր է, ինքնին կը տառապի, որ աշխարհ տեսնէ եւ դատապարտէ մշակութային եղեռնը, որ կը շարունակուի:

Ի վերջոյ հեռուներէն տեսանք Մրենը: Մրենը Հայաստանէն ալ կը տեսնուի. Արտենի լերան հանդիպակաց է. Թալինի գիւղերէն ալ տեսանելի: Հազիւ կը զիջի Անիին՝ իր մեծութեամբ եւ շքեղութեամբ: Բայց ականապատուած շրջանի մէջ ըլլալուն վտանգը մեծ է, եւ մեծ ալ եղաւ վարձատրութիւնը անոնց՝ ովքեր կրցան հասնիլ Մրեն: Մրենի տաճարը բաւականին մեծ է, եւ յատկապէս գեղեցիկ են հիւսիսային եւ արեւմտեան մուտքերուն բարաւորները՝ իրենց բարձրարուեստ քանդակներով:


Սրբազանը՝ Բագնայրի Սբ. Աստվածածին եկեղեցու ավերակների մոտ:

Այս իւրօրինակ օրը երեկոյացաւ, երբ կ'անցնէինք Արծափ լերան կողքով, ու վերջապէս կը լսէինք ուրախ լուր մը: Բրոֆ. Էդիկ Դանիէլեան խանդավառ կերպով կը պատմէր, թէ 647թ., ըստ Դանիէլեանի, երբ թէ՛ պարսիկներ, թէ՛ յոյներ պարտուեցան արաբներէն, հայոց Թէոդորոս Ռշտունի իշխանը Արծափի բերդին մօտ, հայկական փոքրիկ զօրագունդով ոչնչացուց արաբներու 3000 հոգիանոց բանակը: Հիմա Էրծափ է Արծափը, բայց արդեօ՞ք Սեւանի Ծովագիւղ եւ Մեղրաձոր գիւղերու բնակիչները կը յիշե՞ն, որ 1829-ին իրենց պապերը Արծափէն են եկել…

Մեսրոպ արք. Աշճյանի հուշերը տպագրության պատրաստեց ՀՈՎԻԿ ՄԿՐՏՉՅԱՆԸ



Ուխտագնացության քարտեզը, 2000թ.: